



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

75,238

321
F-35



01.03.2013

26 SEP 2006

F-35

1 DEC 2000

Այ

№ 9299

ԱՆԳԼԻԱՅԻ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ե հ

1004
14581
92 2 9

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԵՐԸ

Կազմեց
Ա. ԲԱՐԽՈՒԴՅԱՆ



165
58-7

ՄՈՍԿՈՒ.
Տպարան ք. բարեսուդարեանի
1907

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Յառաջաբանի տեղ	V.
1. Պատմական տեսութիւն	5.
2. Թագաւորի իշխանութիւնը	27.
3. Քաղաքացու իրաւունքները	34.
4. Դատաստանական իշխանութիւնը	45.
5. Պառլամենտ	51.
ա. Ընդհանուր խօսք պառլամենտի մասին, Լոր- գերի պալատը	»
բ. Պառլամենտական կառավարութիւն	56.
գ. Օրէնտրութեան եղանակը	68.
դ. Պառլամենտի նիստերը	74.
6. Քաղաքական կուսակցութիւնները	87.
7. Ընտրութիւնները	106.
ա. Պատմական տեսութիւն	»
բ. Ժամանակակից ընտրութիւնները	117.
8. Գործադիր իշխանութիւնը	136.

Tipografija X. Barxudarjanca, Srđenka, Mjasnoj per., d. Bilejeva.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ *

1905թ. Հոկտեմբերի 17-ը նշանաւոր պատմական օր պիտի համարուի Ռուսիայի համար: Եթէ 1861թուականը մարդկային մարմինն ազատեց ըստրկութեան հաւասար անարդ Շորտութիւնից, 1905թուականն էլ մարդկային հոգին ու միտքն ազատեց նրանց կաշկանդող ծանրակուռ շղթաներից և ժողովրդին պարզեց բարիքներից լաւագյոնն ու քաղցրագյնը—ազատութիւն. խղճի, խօսքի, մամուլի, ժողովների և դաշնակցութիւնների ազատութիւն, կեանքի և գյոքի անձեռնամերձութիւն: Նա ընդարձակեց օգոստոսի 6-ի հրովարտակով ժողովրդին արուած՝ կառավարութեան գործերին մասնակցութեան իրաւունքը, ընդարձակուեցին և Պետական Դումայի իրաւունքները:

Վաղուց ի վեր ժողովրդի մտածող դասի բուռն ցանկութիւնն էր մասնակցել կառավարութեան բարդ ու գժուար գործին, նրա զեկն իւր ձեռը ձգել և անխարդախ պաշտպան լինել ժողովրդի ու երկրի շահերին ու բարօրութեանը, և այդ վաղեմի բաղձանքն իրականացաւ և օրէնքով հաստատուեց: Օգոստոսի 6 ի հրովարտակն ընդունում է ժողովրդի ներկայացուցչութեան սկզբունքն և քաղաքա-

* Գրուած է անցեալ 1906թ. և տպուած է «Նոր-Դար»-ում:

ցիներին իրաւունք է տալիս խորհրդակցական ձայնի իրաւունքով մասնակից լինել տէրութեան օրէնսդրութիւններին, որով լայնանում է ժողովրդի քաղաքական և հասարակական կեանքի շրջանը։ Աւելի քան քառորդ դար ռուս պահպանողականներն և մանաւանդ բիւրոկրատիան ամենայն յամառութեամբ դիմագրում էին այդ շարժմանն և ամեն ձիգ թափում էին խեղզելու այն։

Բուլղգինի խոհանոցում պատրաստած Պետական Դումայի նախագիծն ինքն ըստ ինքեան մի աչքակապութիւն էր, և ուրիշ բան սպասել մինչեւ ուղն ու ծուծն այդ բիւրոկրատից չէր կարելի. նոր գինին հին տէրի մէջ չեն ածում։ Եւ ահա հոկտեմբերի 17-ի հրովարտակը լրացնում է օգոստոսի 6-ին հրատարակուածի թէրութիւններն և ազատութիւններ է տալիս ժողովրդին, եթէ միայն այդ խոստացած բարիքները մեռած տառեր չննան, ինչպէս մինչեւ օրս են։ Այդ հրովարտակի զօրութեամբ ժողովրդի ներկայացուցիչներն ոչ թէ լոկ խորհրդակցութեամբ են մասնակցում տէրութեան օրէնսդրութեանը, այլ և ոչ մի օրէնք չէ կարող զցութիւն ունենալ առանց Դումայի հաւանութեան։ Ներկայացուցիչները նաև իրաւունք են ստանում հսկողութիւն ունենալու Բարձրագոյն իշխանութիւնը նշանակուած պաշտօնականների զործունէութեան վրայ։

Օգոստոսի 6-ի հրովարտակով բաւական չէր ժողովրդին ներկայացուցիչներ ընտրելու իրաւունքը տալ. պէտք էր տալ և այն անհրաժեշտ պայմանները, որոնցով նրանք ժամանակի պահանջների համեմատ

կարողանան անձնութիրաբար զործել երկրի ու ժողովրդի, որ նոյնն է թէ պետութեան բարօրութեան համար։ Երբ ժողովրդին ներկայացուցիչներ ունենալու իրաւունքն էր արւում, արամաբանօրէն նրան պիտի արւուէր և իրաւունք, որ նոտ աղատ կարողանայ պետական և հասարակական զործերի համար ժողովներ անել աղատ քննել և զրել նրանց մասին մամուլի էջերում։ Առանց այս անհրաժեշտ պայմանների ժողովրդի ներկայացուցչութիւնը նոյնչափ մեռած, և ապարզիւն կը լինի, որչափ այժմեան բիւրոկրատիայի զործունէութիւնը։ Եւ կառավարութիւնը, անզօր լինելով զիմազրելու համայն Ռուսիան համակած այդ աշուելի շարժմանը, վերջ ի վերջ հարկադրուեց վերոյիշեալ աղատութիւնները տալ ժողովրդին։

Մնեք տասցինք, որ ռուս պահպանողականներն և մանաւանդ բիւրոկրատիան, հայրենիքի և ժողովրդի այդ անկօչ խնամակալները, երկար տարիներ զիմազրում էին ժամանակի անողոք պահանջն՝ հին կարգերի փոփոխութեանը։ Պահպանողականները, հայրենասիրութեան արտօնութիւնն իրենց վերապահելով (ըստ մեծի մասին փողի շնորհիւ), տոհմային պատմութեան աւանդած զիսաւոր սկզբունքներին անհարազատ, խորթ էին համարում այդ օտարամուտ նորամուտները՝ սահմանագրութիւնն ու ներկայացուցիչների հաստատութիւնը, ամենեին ի նկատ չտաելով այն մեծամեծ օգուտներն ու բարիքները, որ համանման հաստատութիւնները տուել են եւրոպական միւս պետութիւններին։ Իսկ բիւրոկրատիան էլ շատ հասկանալի է, բնաւ չէր

կամենսու քանի որ այդ բոլորը ձեռնտու չէր նրան, որովհետեւ ինքն էր տէրութիւն անում, իշխանութիւն և կամայականութիւն բանեցնում, իւր գործունէութեան համար ոչ մի պատասխանատութիւն չունէր, ոչ ոքինա հաշիւ ու համար չէր տալիս, վերահսկողութիւնից ազատ էր և, որ զիստորն է, լաւ կթան կովեց կըզրկուէր: Մինչդեռ նոր պայմաններում նոյն բիւրոկրատիայի գլխաւոր ներկայացուցիչների՝ քաղաքական այդ ցժերի գործունէութիւնը կըքննադատուի, գնահատութեան և պատասխանատութեան կենթարկուի: Թէպէտ տակաւին մինիստրնիերը պատասխանատու չեն Պետական փուլայի առաջ, սակայն այդ ամեն ժամանակի խնդիր պէտք է համարել: Հաստատ է այն, որ նոր պայմաններում ամեն մէկը, կողմնակի ճանապարհներով, սոսկ կասպակցութիւնների շնորհիւ, առանց պիսի կամ յիմար գլխով մինիստր դառնալ չէ կարող որովհետեւ ստիպուած կըլինի իւր գործունէութեան մասին բացատրութիւններ տալ ժողովի կորովամիտ և լեզուանի ներկայացուցիչներին: Բայցի զանից մինիստրների կարինեալ բաղկացած կըլինի համամիտ ու համակարծիք մարդկանցից, որով քաղաքականութեան մէջ որոշ ուղղութիւն կըլինի:

Այսպէս՝ ոռու պահպանողականներն ու բիւրոկրատիան ձեռք տուած և համերաշխութեամբ ոչ թէ երկրի ու ժողովրդի բարօրութեանն ու բարեկցութեանն էին ծառայում, այլ նրանց գէպի անդունդ էին մղում: Ծուս պահպանողական-հայրենասէրների զգացումներն ամեններն չեին վիրաւորում, տեսնելով որ ամբողջ Եւրոպայում Ծուսիան ու Թիւրքիան

են մնացել, որպէս աբսոլիւտիզմի (անսահման իշխանութեան, ինքնուկալութեան) ներկայացուցիչներ: Նրանք նոյնպէս չեին կամենում ընդունել Եւրոպայում գոյութիւն ունեցող սահմանադրական պետութիւնների տուած պատմական դասերը՝ իրաւական կարգի, քաղաքայիական ապահովութեան և քաղաքական ապատութեան սկզբունքներն իւրացնելու կողմից, — այդ ամենը միագամայն շռայլութիւն համարելով Ծուսիայի ժաղովրդի համար: Նրանց հայրենասիրութիւնը սկսում և վերջանում էր պարձենկոտութեան և մեծամտութեան բարձրահնչելուն խօսքերով, իսկ նրանց ազգային համերաշխութեան սկզբունքը գէպի օտարները՝ այլազգիներն ու այլագաւանները, բոլորովին ստոր է, որովհետեւ նրանց քաղաքականութիւնը միջազգային մարդակերութեան և մարդաբացութեան գաղափարով է տոգորուած յանուն բոլոր հպատակ ազգերի ոռուացման: Մեծամտութիւնը փառաւոր կերպով երևեց, երբ նոր ծագեց ոռուացապնական պատերազմը, նրանք այնպիսի լեզու էին բանեցնում իրենց հակառակորդի նկատմամբ, որ այժմ ամօթից ոչ միայն պիտի կարմրէին, եթէ միայն կարմրելու ընդունակութիւնը չեն կորցրել և ամօթխօսքն էլ նրանց համար մի անհպատկանալի օտարազգի խօսք չէ, այլ և գետինը պիտի մտնէին: Ճապոնացիների հասցեով զրած ոռու հայրենասէր-Հրապարակախօսների լուսանքներն ու հայհոյանքներն այնչափ թարմ են, որ այդ առթիւ չնկը խօսիլ: Ախորժելի մղորումը, սին պարձենկոտութիւնը սոսկալի իրականութեան շնորհիւ հիասթափութիւն առաջ բերին շատերի, բայց ոչ պատուազուրկ պահպանողա-

Համ-հայրենասէրների և բժմամիտ բիւրոկրատիայի համար: Հեռաւոր Արևելքում տեղի ունեցած պատերազմն ամենապերծախօս կերպով ապացուեց հին կարգերի (Խուսիայի) ապիկարութիւնը նոր կարգերի (Ճապոնիայի) առաջ:

Հին կարգերի, ոստիկանական կառավարութեան ծանր հարուածները մեր գլխին էլ շատ դիպան: Ոչ մի բանի առաջ կանդ չառան հայի ազգային և մարդկային արժանապատռութիւնն անարգելու, մտաւոր ու բարոյական զարգացման բոլոր դորձններն ոչնչացնելու—դպրոց ու գպարանոցներ, բարեգործական ու հրատարակչական հիմնարկութիւններ, մամուլ, գրականութիւն, ազգային սեպհականութիւն՝ փանքական ու եկեղեցական կալուածներ, դրամ, —ամեն ինչ գրաւեցին, փակեցին, և ոչնչացրին: Հայոց Հայրապետի աւանդական՝ դարելի ընթացքում նուիրագործուած իրաւունքները զրցի հաւասարեցրին, և մինչև անդամ մի օրացոյց, թող թէ ամսագիր, առանց պետական զրաքննութեան թոյլատրութեան տպելն արգելեցին և այլն: Բայց, խոսառվանք լինի, մենք ինքներս շատ բանի համար մեր ձեռքով հող պատրաստեցինք յանուն մի ինչ որ անհասկանալի ազատամտութեան: Սյն ժամանակ, երբ ոռուսաց պարբերական մտմուլի ազատամիտ մասն ոչ միայն արձակ համարձակ չէր կարողանում խօսել իւր ազատամտութեան մասին, այլ և նրա գոյութիւնը մազեց էր կախուած, մեր ազատամիտ մամուլն ոչ միայն ազատ խօսում էր իւր ազատամտութեան մասին, այլ և վայելում էր աեղական իշխանութեան համար հօվանաւորութիւնը: Յաճախակի ոչ մի

հնարաւորութիւն չէր լինում պատասխանել այդ ազատամտութեանը, որովհետեւ զրաքնիչը վերջակէտ էր զնում այնաեղ, ուր յօդուածազիրը միայն սկսում էր խօսել նիւթի մասին: Ճարահատուած զրողը զիմում էր եղովառի ոճին և կամ այնպէս էր զրում, որ ընթեցողը տող ընդ մէջ կարգար և հասկանար: Եւ այդ հովանաւորութիւնը վայելում էր այն պատճառով, որ լսագիրը շատ էր ախորժում յարմարուել կառավարութեան քաղաքականութեանը, իսկ երբեմն էլ զատախազի և ժանդարմի պաշտօն կատարել Այսպէս՝ երբ ժողովուրդը կալուածների զրաւ ման լուրն առաւ և ցնցուեց, յիշեալ թերթը պարտք համարեց յետ չմնալ խելացնոր Գալեցինից: Տարակցու չկայ, որ «Կաւկազը», որպէս պաշտօնական օրգան, ուրիշ կերպ չէր կարող խօսել կալուածների զրաւման մասին, եթէ ոչ բոլոր հայերին յիմար համարելով, ասել թէ նոյն իսկ հայերի շահերի համար է կառավարութիւն անում այդ: Եւ հայերէն տառերով տպուող այդ լսագիրը, որ նոյնքան հայկական է, որքան և չենական, իսկ աւելի ևս ոռուսական, անհրաժեշտ համարեց այդ յօդուածը թարգմանել հայերէն և տալ ժողովովին, որ սա էլ համոզուի, թէ կառավարութիւնը մեր շահերի վրայ է մտածում (sic!): Սակայն ժողովաւրդն անհամեմատ բարձր եղաւ այն մարդկանցից, որոնք յանդգնութիւն են ունեցել իրենց վրայ առնելու նրան առաջնորդելու պատասխանատու զործը: Այժմ ժամանակները փոխուել են, խօսքի ազատութիւն է, զիմակը կարելի է և պէտք է կամաց կամաց պատռել և զէն շպրտել:

Մարդատեցութեան և մարդակերութիւն արդիւնք չէ, որ այսօր, XX դարի սկզբում, ամբողջ արևելքան Անդրկովկասի կապուտակ երեկնակամարը սկառաթոյր ամպերով է պատաժ, և միշտ բարեխնամու բարեգութ երկինքը, փոխանակ յօրդառատ անձրեւ և կենսաշաղ արև պարզելու այս բերրի և արգաւանդ երկրին, արեան վտակներ է թափել տալիս նրա հողն ու ջուրը ներկերու, կրակի բոցեր է թափել տալիս հայի ինչքն ու կայքը լափելու։ Առատ, շատ առատ էր մահուտն հունձն այս տարի. բայց արդեօք կշացամն մարդակերները: Եւ ի՞նչ անի բարեխնամ երկինքը, քանի որ ապառաժից էլ կարծր են մարդկանց սրաերը, կուրացել են նրանց աչքեր, խլացել են ականջներ. ոչ արիւնն են տեսնում, ոչ մահը ոչ էլ կրակը: Թող անմեղ մարդոց թափած արիւնը թափել տուողների զլիսին թափուի: Վշտել պէտք չէ, արեան գաշտերում էլ բուսնում են հոտաւէտ ծաղկիներ. մօտ է գարունը, կարծում եմ, որ այդ օրը մենք կըտեսնենք:

Մանջուրիայի օտար դաշտերում անվերջ խայտառակ պարտութիւններ կրելուց յետոյ՝ կառավարութիւնը սկսում է քաջագործութիւններ անել և սխրագործութիւններ ցոյց տալ բնիկ երկրում, անդէն ժողովրդի հետ կռուելով, որովհետեւ ժողովուրդը այդ անպատճութիւնը մարսել է կարողանում և իւր իրաւունքներն է պահանջում: Բնիկ ժողովրդի դէմ կռուելու համար, բարոյապէս սնանկացած բիւրուկատիան մի ձեռը պարզում է ազգային հուլիզաններին, միւսը՝ թաթար խուժանին՝ Անդրկովկասի համար: Իւր դիւտիան նպատակների համար կառավար-

չութիւնն աւելի յաջող ընտրութիւն անել չէր կարող, աւելի համապատասխան աարր գտնել չէր կարող. քան թաթար խուժանը, նախ՝ որովհետեւ հաւատացած ենք, որ ոչ մի ազգ այդպիսի անարգ, խայտառակ պաշտօն չէր ստանձնիլ, կոյր գործիք չէր գառնալ, իսկ ապա՝ որովհետեւ անհուն տղիտութեան մէջ խարիսափող թաթար խուժանը միշտ օժտուած է ստոր բնազդութներով. Անդրկովկասի որ ազգաբնակութեան մէջ այնքան գողեր ու աւազակներ կան, ինչպէս թաթարների, որոնք սերնդէ սերունդ աւազակ ծնուռում են, աւազակ մեծանում և աւազակ էլ մեռնում:

Այդ հրէշային գործը՝ հայերին թաթարների ձեռքով կռուուել տալը՝ սկսուեց Բազուռում փետրուար ամսին, և առաջինը, որ իւր ձեռքերն եղօր արիւնով ներկեց, նակաշիձէն եղաւ: Յրդեօք նա այդ արաւ Գալիցինի փոխարէն վրէժինզիր լինելու համար, թէ քաղաքական այլ նպատակներով ուզեց հայերին ահ ու սարսափի մէջ պահել թէ երկուսն էլ միասին էր, որ հաւանական է թւում մեղ,—հաստատ չղիտենք, բայց որովհետեւ «իմ է վրէժինզիրութիւն և ես հասուցից», նա ինքն էլ տեսորի ննթարկուեց: Բազուի ողբերգական աղէտակց յետոյ, բնականաբար, ամենին սկսեցին հետաքրքրուել թէ ի՞նչ էր նրա պատճառը: Ոմանք ասում էին, թէ աներեցիթ ձեռքեր կան, բայց և այնպէս չպարզուեց, չմացուեց այդ արիւնուուշ գահիձների: ով լինելը*:

* Առաջին Պետական Դումայում իշ: Ուրուսով վարագրյաբ պատուց և շատ բան մերկացրեց:

Ոմանք էլ ասում էին, թէ մեծ դեր է խաղում
համիլամականութիւնը, սակայն այդ դեպքում, ան-
տարակոյս, կառավարութիւնն աւելի խիստ միջոց-
ների կը գիմեր առաջն առնելու, քան թէ նա մինչև
օրս է արել: Մինչ այս մինչ այն՝ բայց կոտրածը
վարակիչ հիւանդութեան կերպարանք ստացաւ և
համարեա նոյնանձան նշաններով մերթ այստեղ
մերթ այնտեղ սկսեց լունկի:

Սկզբում կառավարութիւնը չքմելս էր ձեւանում,
ցոյց էր տալիս, թէ ինքն էլ շատ է հետաքրլքրում
պատճառներն իմանալու. քննութիւն նշանակեց, յա-
տուկ այդ գործերի համար սինատոր եկաւ, և այդ
դեպքում էլ բիւրոկրատիան ցոյց տուեց իւր ան-
ընդունակութիւնը: Քննութեան հետեանքն այն ե-
ղաւ, որ ոստիկանական պաշտօնեաներից 5—6 հո-
գի պաշտօնից արձակուեցին և դատաստանի պիտի
յանձնուին (?): յետոյ՝ մի քանի բեռ մը ոտուած
անպէտք թղթեր: Անցաւ կէս տարի. Բագւում
կրկնուեց նոյն արիւնհեղութիւնը. բացի բազմաթիւ
մարդասպանութիւնից՝ մոնղոլեան արշաւանքն ու
վայրագ բարեարութիւնը հրց ճարակ գարձրին
նաւթահանքերը: Այդ տհուելի դեպքից յետոյ միայն
մտարերեցին, որ փետրուար ամսին տեղի ունեցած
աղէտի համար կուզմինսկին մի մեծ շտատով ու-
ղարկուած էր քննութիւն անելու, որ նա թէն.
քննութիւնն արել է, բայց դեռ ևս զեկուցումն չէ
ներկայացրել: Յարգելի սինատորը շատ թեթև կեր-
պով էր նայել իւր ստանձնած պարտականութեան
վրայ. ուրիշների արիւնը, մահը, դժքը, կորուտոր նրա
համար երկրորդական, երրորդական նշանակութիւն

են ունեցել: Ամարանոցում հանգիստ նստած՝ նա
զբաղուած էր զիտնական-ուսումնական հետազոտու-
թիւններ անելով հայ-թաթարական թշնամութեան
մասին և, անշուշտ սիգար ծխելով՝ հարթել և գե-
ղեցկացրել է այդ երկասիրութեան ոճերն ու դար-
ձուածքները: Երանի թէ մի օր արժանանայինք
տեսնելու նրա այդ նշանաւոր ուսումնասիրութիւնը*:
Եթէ հանգիստ, խաղաղ ժամանակ դատաստանա-
կան գործերի քննութիւնն ու դատավարութիւնը
ձգձգում, ուշանում է, — դատապարտելի է, ուր
մնաց մի այդպիսի բացառիկ դէպքում: Եւ վերջա-
պէս այդ աղէտի պատճառը միթէ մի քանի ոստի-
կանական ծառայողներ, պաշտօնեաներ՝ էին: Ոստի-
կանութիւն՝ համայն Ռուսիայի բարոյապէս մնան-
կացած, նեխուած, ոտից մինչև զլուխ ապականու-
թեան մէջ ընկղմուած այդ վարչական մարմինը,
այնաեղ ոչ միայն անհաղորդ չէ եղել, այլ և մեծ
դեր է խաղացել այդ ոճրագործութիւնները կատա-
րելիս, ինչպէս և ուրիշ քաղաքներում, բայց և
այնպէս նրանք ինքնազլուխ չեն գործել: Անցեալ
գարի գերմանական լոււագոյն հրապարակախօններից
մէկը՝ «սրտի արիւնով» և ներգերի հիւթով» զրող
կիւդիվել Բեօննէն, խօսելով գերմանական ոստիկա-
նութեան մասին, տառմ է. «Եթէ տռաքինութիւ-
նը իմ դուստրը լինէր, զաստիարակելու համար կը
գերազասէի հասարակաց տուն տալ նրան, քան
թէ ոստիկանատուն»: Թէ ինչ կասէր Բեօննէն Բա-

* Այս յօդուածը զբնուց յետոյ լոյս տեսաւ և մի մասը հա-
յոց թերթերում էլ մարգմանուեց: Բայց ինչ օգուտ.

գուի ոստիկանութեան մասին, և թէ տեսներ—չզի-
տենք. բայց աներկրայելի է, որ Բագուի ոստիկանու-
թեան մասին խօսելիս «առաքինութիւն» խօսքն
անդամ գործ ածելը յանցանք է, իսկ պոռնիկը, որ-
շափ էլ բարջապէս ընկած լինի, դարձեալ Բագուի
ոստիկանական պաշտօնեաներից շատ բարձր կրլինի,
որովհետեւ անընդունակ կըլինի այլպիսի ոճիրներ գոր-
ծելու: Ամիսների ընթացքում մենք շարունակ լսում
ենք, որ Բագուի ոստիկանութիւնը նորից պիտի կաղ-
մակերպուի, բայց մինչեւ օրս լոկ խոստումներ են: Ոս-
տիկանական պաշտօնեաներն էլ իմանալով որ իրենց
պիտի հեռացնեն, ամեն մի միջոցի դիմում են հայի
և թուրքերի յարաբերութիւններն աւելի ևս յարե-
լու, որպէսզի մշջատելի իրենք օգտուեն:

Փեարուարի աղէաից յետոյ վերջապէս ուրախալի
լուր եկաւ, թէ քրիստոնեայ՝ երկրի քրիստոնեայ
Թագաւորի քրիստոնեայ փոխարքան է գալիս Կով-
կաս՝ երկիրը խաղաղացնելու և ժողովուրդն հան-
գստացնելու ջերմ փափագով: Հայերս էլ երազեցինք,
թէ Ռուսիայի «քրիստոսասէր զինուորութիւնը» կը
պաշտպանէ մեզ, մահմեղականներն այլևս մեզ չեն
մորթիլ երկիրն աւերակ չեն դարձնիլ և սրբու-
թիւնները չեն պղծիր: Զէ՞ որ նոյն քրիստոսասէր
զինուորութիւնը 27 տարի առաջ յանուն քրիս-
տոնէութեան և մարդասիրութեան Թօւրքիա ոսք
կոխեց իւր քրիստոնեայ եղբայրակիցներին թրքա-
կան «լսուած» զաղանութիւններից, բռնակալի լը-
ծից աղատելու համար: Զէ՞ որ այն ժամանակ մենք
էլ խաչով ու խաչվառով էինք զիմաւորում այդ
քրիստոսասէր զինուորներին և ամեն բանով օգ-

նում նրանց: Որչափ զգուելի և քսամնելի է, երբ
քաղաքականութեան մէջ ոչ թէ քրիստոնէական
սկզբունքներով են զեկավարւում, այլ քրիստոնէու-
թիւնն որպէս զիմակ են գործ ածում իրենց յետին
նպատակների համար: Յանուն որ քրիստոնէութեան
է կատարւում այս կոտորածը «պրաւոսլաւ» Խու-
սիայում:

Եկաւ և փոխարքան: Չանցաւ մի քանի օր, և
ահա կոտորած է սկսւում նախիջեանում, յետոյ
նոյնը տեղի է ունենում Երեանում, Շուշում, նո-
րից Բագւում, դարձեալ Բագւում, Գանձակում,
Թիֆլիսում, իսկ զիւղերում, ի հարկէ, իւր կարգով:
Եթէ դա նշանակում է երկիրը խաղաղացնել և
ժողովուրդը հանգստացնել, ապա արեան մշջ լողա-
ցնելն որը կըլինի: Ամիսներ շարունակ մեղ կերա-
կրեցին «անթիւ ու անհամար խոստումներով», բայց
գնալակն ու կրակն անդադրում իրենց գործն են
տեսնում: Երբեմն մարդիկ են ուղարկուել իրը թէ
կոտորածի առաջն առնելու, բայց հակառակն է ե-
ղել. գնացողներն ոչ թէ յօգուտ հայերի են գոր-
ծել այլ ի վեաս, և ամենքն անպատիժ մնացել:
Եւ եթէ մէկն այնչափ սրտայաւ է եղել, որ ան-
խարդախ կամեցել է բան անել, պաշտօնում եր-
կար չէ մնացել, ինչպէս պրինց Նապոլէոնը: Բնո-
րոշ է և այն հանգամանքը, որ գեներալ Տակայ-
շվիլին ամիսներ անցնելուց յետոյ է համոզւում, որ
հայերը յանցանք չունեն: Ուրբեմն այդ անցած ա-
միսների ընթացքում նա հակառակ կարծիք է ու-
նեցել և թողել, որ թաթարներն իրենց ուղածն ա-
նեն հայերի հետ: Բայց և այնպէս նրա վրայ դեռ

և ծանրանում է Գանձակի աղէտը, իսկ նա հանգիստ Պետերուրդում նստած է, մինչև անդամ աւելորդ էլ է համարում իրեն արդարացնել: Վերջապէս մենք կառավարութիւն ունենք, թէ ոչ եթէ կայ կառավարութիւն, ուր է նա, ի՞նչ է անում, ինչպէս նա կարող է թողնել որ յանցաւորը հանգիստ նստի, իսկ հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ տուժեն, լաց ու կոծի մէջ, անտուն ու անտեղ մնան: Պարզ է, որ կայ մի գաղանի ոյժ, որ յօրինում է այդ կոտորածը, խրախուսում, քաջալերում է պրովոկատորներին: Հազար անդամ այդ աղէտների ժամանակ զինուորները պարզ ասել են, թէ մեզ հրամայուած չէ միջամտել կամ իրառնուել, իսկ հրամայողն ոչ դուք էք, ընթերցող և ոչ էլ ես: Կազակներից մէն օրը ցերեկով մարդ է ըսպանում և արդարանում նրանով թէ կարծեցի հայ է. ուրեմն թշլարուած է հային առանց պատախանաւութեան սպանել: Եթէ մէկը մի սոխի գլուխ թռցնէ, անպատճառ կը պատժուի, իսկ եթէ հայի գլուխը թռցնէ՝ անպատճիժ կրմայ, գուցէ և վարձատրուի:

Բայց ներեցէք, յանցաւորները, ոճրագործներն երբեմն պատժւում են: Այսպէս, երբ Բալախանին համարեա ամբողջապէս մոխիր դարձաւ և ամեն ինչ թալանեցին, մօտակայ զիւղերում էկզեկուցիս նշանակեցին, և զիտէք, թէ քանի՛ օր—մի շարաթ: Անշուշտ այս գէաքերից հայերը խելքի կրգան, իսկ թաթարները՝ երես առնելուց յետոյ, աստառն էլ կուզենան:

Մի ուրիշ կոմեղիա: Տէրութեան երկու հպատակ

աղղութիւնների՝ հայերի և թաթարների միջև արիւնչեղութիւն, կոտորած է, և կառավարութիւնը, փոխանակ իւր հեղինակաւոր իշխանութեամբ միջամտելու և արեան նախարիին վերջ դնելու, թողնում է, որ հաշտութեան պայմաններ մշակեն, գաշինք կռնեն: Բագուի հայ և թաթար բնակչութեանց ներկայացուցիչները պայմանները մշակում են՝ էական կէտ զնելով նիւթական պատասխանատւութիւն: Երկու կողմի ներկայացուցիչները ներկայանում են փոխարքային, հանդիսաւոր կերպով յայտնում նըրան հաշտութեան պայմանի զիխաւոր կէտերը, փոխարքան էլ գոհունակութիւն ու բերկրանք է յայտնում, կարծելով թէ Բագուն շուտով երջանիկ Սրբիակա պիտի գառնայ, և ապա հանդիսա սրտով մեկնում է: Մի կողմ թողնելով դաշնադրութեան էռութիւնը, թողնելով և այն, որ թաթարները հէնց հետեւեալ օրը խարեցին թէ փոխարքային և թէ հայերին, մեզ համար ցանկալի է իմանալ, թէ որ բարեկարդ իշխանութիւնը կըթոյլատրէր այդ Սրբօք դա ռուս-Ճապոնական պատերազմն էր, որ լիազօրներն խաղաղութեան պայմաններ մշակէն, ստորագրէին, փոխարքան էլ վաւերացնէր. մենք կամենում ենք ասել արդեօք երկու քաղաքականապէս անկախ աղղօք էին կոխւ մղում միմեանց դէմ և ապա հաշտում որոշ պայմաններով, այսինքն՝ միմեանց փոխադարձ քաղաքական զիջումներ անելով, թէ իշխանութիւնն էր իւր նպատակների համար կոռւեցրել երկու հարեան ժողովուրդ, կամ եթէ նա չէր կոռւեցրել, թշնամացրել, միթէ նոյն իշխանութեան պարտականութիւնը չէր խաղաղու-

թիւն հաստատել նրանց միջև։ Զէ՞ որ անյայտ են թշնամութեան պատճառները, հետեաբար և համապատասխան հաշտութեան պայմաններ չէին կարող մշակուել։ Եթէ կառավարութիւնը գոյութիւն ունէր, եթէ նա ուժասպառ չէր, անզօր չէր, եթէ այդ կոտորածը գաղանի մնացող զօրութեան յօրինածը չէր, պրովոկացիայի արդիւնք չէր—նա պարտաւոր էր բարձրացնել իւր ձայնն իւր իսկ հեղենակութիւնը պաշտպանելու, իւր իսկ փարկն ունաւատակ չտալու։ Համար։ Իսկ որ թաթարները խարեցին, այդ ինչպէս կարողացան մարսել իշխանութեան ներկայացուցիչները։ Ահա այսպէս է կատարուում մեր աչքի առաջ պատմութեան կոմեդիան։

Թէ հպատակ և թէ ազատ ժողովրդի և կառավարութեան միջև միշտ փոխադարձ պարտականութիւններ են լինում։ Զէ կարելի ժողովրդի վզին գնել անթիւ ու անհամար պարտականութիւններ և չտալ նրան ոչ մի իրաւունք։ Կառավարութիւնն էլ չէ կարող ամեն տեսակ իրաւունքներ, անսահման կամայականութիւններ բանեցնել առանց որոշ պարտականութիւնների։ Հայ ժողովուրդը միշտ հաւատարիմ հպատակ է եղել ուստաց տէրութեան, հաւատարմաբար ծառայութիւններ է մտառցել ուստաց գահակալներին, միշտ կատարել է իւր բարըական պարտականութիւնները, և ի տրիտուր այդ հաւատարմութեան ներկայումս շատ կասկածելի առաւելութիւն ունի վայելելու ուստաց օրէնքների հովանաւորութիւնը, եթէ չասենք որ ամենեին աղատ է նրանց պաշտպանութիւնից։ Հայ ազգը ներկայումս ուստաց բիւրոկրատիայի աչ-

քի փուշն է։ Հային կարելի է օրը ցերեկով ծախ պէս սպանել կամ հաւի պէս մորթել, հայի ինչքը կարելի է կողապտել տունը կրակ տալ մոխիր ու աւերակ դարձնել. Հայ կնոջ, հայ օրիորդին կարելի է բռնաբարել լիկել առևանգել և յանցաւորն անպատիժ կրմայ,-- և զա նշանակում է վայելել օրէնքների հովանաւորութիւն, պաշտպանութիւն։ Օրէնքի հովանաւորութիւն է նաև շարունակ հայերին զինաթափ անել և թաթարներին սատիկանութեան միջոցով զէնք բաժանել որ հայերին լաւ մորթեն։ Բիւրոկրատիան, զոնէ բարձրագոյն իշխանութեան ներկայացուցիչը, այդպիսի միջոցներով է կամենում երկիրը խաղաղացնել, ժողովուրդը հանգստացնել։ Օրէնք ոտնահարողն իրաւունք չունի ուրիշեց օրինաձանաչութիւն պահանջել Մենք շուտով ականատես կըլինենք, ինչպէս «Կարմիր համբոն» է բողոքում, եթէ միայն զեռ ևս չէ բողոքել որ հայի ոչ կեանքն է ապահով Ռուսիայում և ոչ էլ գյուք։ Գուցէ նա պահանջէ, որ եւրոպական մեծ պետութիւնները, եթէ իրաւունք են համարում միջամտել Թիւրքիայի՝ այդ «Հիւանդ մարդու», ներքին գործերին, նոյնն անեն և Ռուսիայի՝ «երկրորդ հիւանդ մարդու» վերաբերմամբ գեթ յանուն մարդասիրութեան։ Տան և մէկ ամիս հայերի կոտորածը շարունակում է։ Անզօր էր կառավարութիւնը հէնց էն զիլից այդ շարժումը խեղդելու, թէ թիւնը հէնց էն զիլից այդ շարժումը խեղդելու, ոչ զիտենք, պարզ է միայն, որ կառավարութիւնն ոչ զիտենք, պարզ է միայն, որ կառավարութիւնն իւր տարրական պարտականութիւնը մի բուռն քրիստոնեայ ժողովրդի վերաբերմամբ չկատարեց և չէ էլ առկում կատարած լինել։ Փոյթ չէ, որ ինքը չէ կա-

տարում. գոնէ թողնէր, որ հայերն իրենց պաշտպանէին: Այդ էլ նա չէ թողնում:

Կառավարութիւնն ակներև կերպով թշնամի է մեզ զրա մասին երկու կարծիք լինել չէ կարող: Մեր զրացի ազգերն ոչ միայն բարեկամ չեն մեզ, այլ և չարախնդութեամբ են նայում մեր աղէտի վրայ: Յոյն ունենալ ում և իցէ վրայ բնաւ չենք կարող: Մենք պիտի մտածենք մեր մասին և մեր զիլիի ձարը տեսնենք: Այդ գէպքում երկու իրազործելի պայման կայ և անհրաժեշտ պայման—համազգային միութիւն բառիս ամենը դարձակ իմաստով, որպէս բարոյական ոյժ, և անձնապաշտպանութիւն—զինուել զինուել և միայն զինուել: Այժմեան հանգամանքներում ոչ ոք մեզանից չպիտի թոյլտայ իրեն որեւ շռայլութիւն և զեղիսութիւն: Այն ամեն աւելորդ բաները, որ մենք զնելու լինենք, մեզանից կամ հուշտանն է խելու կամ թաթարը: Աւելի լաւ կրլինի մի գէնքի տեղ երկուսն ունենալ, երկուսի տեղ՝ երեքը, երեքի տեղ՝ չորսը: Զէնքն երեք աւելորդ չի լինի: Նոյնը պիտի լինի և ամեն մի գիւղում: Գոնէ եթէ մեռնելու ենք, պատուով մեռնենք և այնպէս լունք: Մինչև որ Ռուսիայում չհաստատուեն նոր իրաւական կարգեր, մինչև որ ժողովուրդը չատանայ քաղաքայիշական ապահովութիւն և քաղաքական ազատութիւններ, երբէք մենք չպիտի մոռանանք, որ մեր կատաղի, արիւնարբութիւնին կանգնած է մեր զիլին, հետեւաբար և ամեն չարիքներ մենք կարողենք սպասել նրանից:

Հայերիս վերաբերութեամբ ուստաց քաղաքականութիւնը ոչ միայն չէ փոխուել զէպի լաւը, այլ աւելի

վատթար, կորստաբեր է, քան թէ Գալիցինի օրով, միայն այն զանազանութեամբ, որ պյժմեան քաղաքականութիւնը քօզարկուած է սրտացաւութեան և բարեացակամութեան դիմակով: Գալիցինի քաղաքականութիւնը ցինիզմի քաղաքականութիւն էր, և որչափ քաղաքական ցինիզմը շաղկապուած է լինում քաղաքական անբարօյականութեան հետ, այնչափ էլ այդ անբարօյականութիւնն ունեցաւ իւր կորստաբեր ազգեցութիւնը վարչական շրջանների վրայ, ուստի և յառաջացան բազմաթիւ քաղաքական խոշոր սխալներ: Քաղաքական այդ անբարօյականութեան առաջն առնելու կամ արմատախիլ անելու համար բնաւ հերիք չեն բոն-վիվանի արիստոկրատիկ ձևերն ու շարժումները, արտաքին ցոլքն ու փայլը կամ անբովանգակ բարեսրառութիւնը, որոնք միայն կարող են քօզարկել հաստատ համոզումների ու հայեցաքնների, քաղաքական գաւանանքների և ձշմարտասիրութեան կատարեալ բացակայութիւնը: Նախկին քաղաքականութեան սխալներն ակներև են, սակայն վարանման ու տատանման քաղաքականութեամբ, լոկ խռոաւումներով, քաղցր ու սիրալիր ընդունելութիւններով քաղաքական սխալներ ուղղել չել լինիլ: անհնաժեշտ են արմատական միջոցներ, իրաւական կարգեր, որ պահանջում է Ռուսիայի լաւագոյն մասը:

Հայերիս նկատմամբ Գալիցինի քաղաքականութեան երկու մեծ սխալն ուղղեց փոխարքան, վերագրձնելով կալուածներն և վերաբանալով փակուած դպրոցները, որոնց համար խորին երախտագիտութեամբ ենք յիշում զրաֆի անունը: Միւս կող-

մից արդի քաղաքականութիւնը նոր քաղաքականութիւն չէ, —սխալուած չենք լինիլ, եթէ տսինք, որ Գալիցինի քաղաքականութեան շարունակութիւնն ու վերջաբանն է, այն է՝ հայերին անտեսապէս քայքայել ոնչացնել, ուստի և հայութիւնը, որպէս ազգութիւն, մեր տուած մի մեծ հարցական նշան է: Խնչե են պէտք այդ կալուածներն և ուսումարանները, երբ կեանքի և գյոքի ոչ մի ապահովութիւն չկայ, երբ ժողովուրովը նիւթապէս քայքայուելուց յետոյ հնար պիտի ըռնենայ անձատուր լինելու խաղաղ կուլտուրական յառաջադիմական կեանքի: Զենք ժխտում, շատ բարի, մարդասէր դիտաւութիւններով ու ձգտումներով և փոխարքան ուղեղորուել զէպի իւր սիրած Կովկասը, բայց նրա փոխարքայութեան միջոցին կատարուածները, Կովկասի XX դարի պատմութեան ու և մոայլ էջերն են կազմում: Պատմութեան այդ ու էջերը կրլինին որպէս յաւերժական յուշարձան, որի պատուանդանին փոռուած կըլինին հայ և թաթար բնակիչների դիտակներ, իսկ յուշարձանի վոսյ պատմութիւնը կարձանագրէ և արդէն իսկ արձանագրում է, թէ կոտորածներ եղան այսինչ քաղաքներում և այնինչ գիւղերում, այսքան հայ և այնքան թաթար սպանուեցին, այսքան գիւղ վլատակ դարձաւ, այսքան տուն հրոյ ճարակ եղաւ և այլն... Մարդիկ մադկային արիւն թափելուց չին կշանում, գինովցած էին. մարդկային արեան ճարաւի բորեանները շարունակ արեան խրախճանք էին յօրինում: Ոչ մի վայրենի գաղան, եթէ միայն նա սովալլուկ չէ և վրան չեն յարձակում, այն գաղանութիւնները

չէ անում, ինչ որ անում են մարդիկ: Հին ռեժիմի այս մի քանի գոհարների տեսութիւնն անելուց յետոյ անցնենք նոր ռեժիմի տռաջին քայլին:

Հոկտեմբերի 17-ի հրովարտակն անպայման տալիս է մարդկային իրաւունքներ և այնպիսի պայմաններ, որոնց շնորհիւ միայն կարելի է վայելուչ գոյութիւն ունենալ: Այդ իրաւունքները կամ տպատութիւնները մարդկային բնութեան հոգեկան բարձր Յակովունքների արտաքին իրականացումն է և կարող է իրագործուել բարոյական համերաշխութեամբ, բարոյական միութեամբ: Այդ հոգեկան վեհ սկզբունքներն են՝ խըզի և խօսքի ազատութիւնը: Եթէ մի տեղ չկայ բարոյական միութիւն, եթէ բացակայ է խղճի հրամայող և խայթող ձայնը, եթէ կուսակցութիւններն իրենց համար Շանապարհ հարթեն սպանութիւններով, խոռվութիւններով, արիւնով ու կրակով, այնտեղ անձի ազատութիւն լինել չէ կարող: Նախ և առաջ մարդու անձնաւորութիւնն ապահով, անձեռնմխելի և ազատ պիտի լինի: Մինչդեռ այդ պատմական հրովարտակն հրատարակելուց յետոյ՝ ուսւ «Հայրենասէրներն»՝ աղդային զրօշակը բարձրացրած, թագաւորի պատկերը բռնած, թօժէ, ցարեա խրանի» երգելով իրենց պատույ անդամների՝ «միջազգային հուլիսանների» և ոստիկանների առաջնորդութեամբ և «քրիստոնասէր զինուորութեան»՝ կազակների հովանաւորութեամբ, ամեն տեղ մարդկանց անխնայ, անդթարար ջարգեցին, տները հրդեհեցին, ունեմ-չունեմը կողոպտեցին: Կան ուրիմն մարդիկ, որոնք այդպէս են հասկանում հայրենասիրութեան բարձր գաղափարը, այդպէս է արտայայտում այդ նուիրական,

սուրբ զգացումը։ Վայ այն կառավարութեան, որի կուսակիցները, սիւները հուլիզաններն ու սև հարիւրեակի անդամներն են։ Ուուս հայրենասէրները չպիտի մոռանան, որ եթէ մի մարդ ինքը ըռւնի բարոյական ղեկավարող սկզբունքներ, նրանց արտայայտիք լինել չէ կարող և ով որ ուրիշի ազատութիւնն է սաքի տակ տալիս, նա ինքն էլ ազատ մարդ լինել չէ կարող։ Որպէսզի մարդիկ մարդու և ոչ թէ գաղանի պէս ապրեն, անհրաժեշտ պայման է, որ նրանց մէջ բարոյական համերաշխութիւն, միութիւն լինի։ Ամեն մի կուսակցութիւն, ինչ ուզութիւն էլ որ ունենայ, առ ժամանակ պիտի թողնէ իւր վերջնական նպատակները, որպէս հեռու ապագայի գործ, և միացած մի ահռելի շյժ պիտի կազմեն աբսոլիւտիզմը վերջնականապէս առավալելու, նրա համար մի խոր, շատ խոր գերեզման փորելու և մի ծանր տապանաքար էլ վրան զնելու, որ այդ հազար-դիմանի հիդրան յաւիտեանս չփարողանայ բարձրացնել իւր այլանդակ գլուխը։ Ոյժերը պիտի միացնել իրաւական կարգերը կեանքի մէջ մտցնելու, նրանց գոյութեան իրաւունք տալու, որպէս զի կազմալուծուած, բարոյապէս մնանկացած ու քայքայուած ոստիկանական կամայականութիւնը, որին պարտական ենք մեր ազգային ճգնաժամը, և ոչ մի աստիճան չարտայայտուի։ Բարոյական համերաշխութեան բացակայութեան շնորհիւ մանուկ ազատութիւնը շատ շուտ կարող է տապալուել անհաւասար կոռուի մէջ։ Պէտք է կազմակերպուել պէտք է գործել և գործել դիտակցաբար՝ նշանաբան ունենալով համերաշխութիւնը, ընդհանուր թշնամու դէմ կռու-

ելու համար չոկտեմբերի սգը օրերն ամբողջ աշխարհի առաջ վկայեցին, որ ոսւս յիտաղարձական ներն և բիւրոկրատիան ոչ մի ստոր միջոցի առաջ կանգ չին առնում ժողովրդի ձեռք բերած ազատութիւնները նոյն ժողովրդի արեան ծովի մէջ խեղզելու։ Եւ ահա դէմ յանզիման կանգնած կռում են երկու անհաշա թշնամի՝ հին ոեժիմն ու ժողովութիւնները։ Առաջինը կամենում է բանեցնել իւր իրաւունքներն և բանեցնել ըստ քմահաճութեան, իսկ երկրորդը կատաղի բողոքում է նրա կամայականութիւնների դէմ և բարձրաձայն գոյում։ «ո՞չ այլ ևս մենք պիտի ապրել չենք կարող մենք էլ ենք ուզում իրաւունքներ ունենալ, մարդավայել կերպով ապրել»։ Իշխանութիւնից հրաժարուելը դժուար է, որովհետեւ իշխանութիւնը սիրելի է և քաղցր, բայց որչափ սիրելի և քաղցր է կեանքը։ Իշխան երբէք չէ կրում այն տանջանքներն ու նեղութիւնները, ինչ որ կրում է ժողովուրդն և այդ պատճառով սաթանի է գնահատում կեանքի ազատութիւնը, որի համար զօհւում է, արիւն է թափում և նահատակւում։ Տարակոյս չկայ, որ այդ կոռուից ժողովուրդը պատճուով զուրս կըդայ և յաղթանակը կըտանէ, որովհետեւ իշխանը երբէք չպիտի մոռանայ, որ իւր ունեցած շյն ու իրաւունքները նոյն ժողովուրդն է տուել նոյն ժողովուրդն է կազմում։ Եւ կռուցն է այդ ամենը, չարաչար տուժում է։ Այդպէս մտածել նա կարող է, քանի որ ժողովուրդը տղիտութեան մէջ է խարխափում, բայց երբ նա աչքը բաց է անում, լցու է տեսնում, բնականաբար, նա սկսում

է իւր իրաւունքները պահանջել: Ի՞նչ տարօրինակ բան կայ, եթէ ժողովուրդը կամենում է իմանալ թէ պետական գանձարանին տուած իւր արիւնքրտինքով վաստակած փողն ուր է դնում, ինչպէս է ծախսում: Զարմանալի, աւելի ևս դատապարտելի բան չկայ, եթէ այսօր ամեն մի հայ ուզում է իմանալ թէ ով է իրեն հալածողը, կողոպաել և սպանել տուողը, որպէս զի յանցաւորը պատժուի: Եթէ մէկը փողացում կարող է իւր երեք-չորս բարեկամի կամ ծանօթի հետ միանուագ խօսել ինչո՞նա չէ կարող հարիւրի, հաղարի, մի քանի հազարի հետ առանց արգելքի խօսել, եթէ նա դրանով ոչ ոքի չէ վնասում: Եթէ մարդ իրաւունք ունի մտածելու, ինչո՞ն նա իրաւունք չպիտի ունենայ իւր մտածմունքները, խորհրդածութիւնները բերանացի կամ թէ մամուլի միջոցով ուրիշներին հաղորդելու: Այդպէս չէ նայում իւր վրայ իշխանութիւնը. նա կարծում է, թէ միայն ինքը կարող է կառավարել լայնատարած պետութիւնը, և եթէ ինքը չլինի, պետութիւնը կը քայքայուի, բաժան-բաժին կը լինի: Նա միշտ ձգտել է ժողովուրդը սոսկալի տղիտութեան մէջ պահել որպէս զի նրա մէջ հաստատ պահէ այն հայեացքը, թէ միայն իշխանութիւնը պիտի կառավարէ ելիկիրն և ոչ թէ ժողովուրդը: Բայց ժողովուրդը սթափուեց խոր քնից և սկսեց պահանջել իւր անկապաելի իրաւունքները: Մոլեգնած, կատաղած իշխանութիւնը՝ փրփուրը բերանին սկսեց չարաչար պատճել վրէժինդիր լինել ժողովրդի այդ յանդգնութեան համար: Հոկտեմբերի օրերն այդ են վկայում:

Նոյն հոկտեմբերի 17-ին հրատարակուած հրովարտակի մի կէտն ասում է. «Սահմանիլ որպէս անզրդուելի օրէնք, որ առանց Պետական Դումայի հաւանութեան ոչ մի օրէնք ոյժ չատանայ»: Այս կէտը զուտ սահմանադրական կէտ է, թէև առայժմ միայն Պետական Դումայի համար: Միաժամանակ այդ հրովարտակը, ինչպէս առաջ ասացինք, զեռօյի է հաւասարեցնում Բուլղարիատիկական Լաբորատորիայում պատրաստած նախագիծը: Այդ հրովարտակն առաջին հարուածն է տալիս աբսոլյւտիգմին կամ ինքնակալութեանն և հիմք է դնում սահմանադրութեանն, այսինքն՝ թագաւորն առայժմ որոշ չափով է հրաժարում իւր իրաւունքներից յօդուա ժողովրդեան, որ պիտի գործադրէ այդ իրաւունքները Պետական Դումայում, հետեւբար ծնունդ է առնում Ռուսիայում ժողովրդապետութիւն (դէմոկրատիա), որ կազի և կրզարդանայ, ինչպէս Արևմտեան Եւրոպայում: Այնուեղ աբսոլյւտիգմը վաղուց արդէն գոյութիւն չունի և ընդհակառակը շատ զարգացել է ժողովրդապետութեան գաղափարը, և ամեն աեղ սահմանադրութիւն կայ բայց ի հարկէ միմեանցից տարբեր:

Մինչև այժմ Ռուսիայի ժողովուրդը զուրկ էր քառական կեսներից. ժողովրդի մասին մտածում և հոգս էր քաշում «բարեսիրա ու բարեմիտ» բիւրուկրատիան, և ինչ որ նա հրամայէր, ժողովուրդն անխօս, անտարտունջ պիտի կատարէր, բայց եթէ մէկը յանդգնութիւն ունենար իւր համոզումն աննենալու, գիտէին, թէ նրան որ ծակը պէտք է կունենալու, բաւական է, եթէ ասենք, որ Պլեէի օրով ախել: Բաւական է, եթէ ասենք, որ

ւելի քան 60 հազար քաղաքական յանցաւորներ էին ձերբակալուած: Նցյու ժողովուրդն այժմ նոր ասպարեզ է մտնում, —քաղաքական կեանքի ասպարեզ: Իւր ցաւերի, իւր վէրքերի գարմանը նա ինքը պիտի անէ: Ապրելով Խուսիայում, ռուսաց պետութեան ազատ քաղաքացիները դառնալով, անտարակցու, չենք կարող անհաղորդ մնալ այդ ազատարար շարժմանը, որովհետեւ մենք էլ ենք կամենում մարզավայել կերպով ապրել բայց երբէք մեր կարիքների սահմանից դուրս չպիտի գանք, որպէս զի մեր անհաշիւ ոգեսութիւնների պատճառով չմնասենք ազգային շահերին:

Քաղաքական կեանքով ապրելու համար էլ հարկաւոր է պատրաստութիւն կամ գոնէ ծանօթութիւն այդ կեանքի հետ: Ոչ միայն մենք, այլև ոռուսները մինչեւ անցեալ 1905 թ. չեին կարող պարծենալ քաղաքական գրականութեամբ, սակայն անցեալ 1905 թ. ռուսաց գրականութեան մէջ բազմաթիւ ստուար և բարակ հրատարակութիւններ լոյս տեսան՝ նուիրուած սահմանադրական պետութիւնների այժմեան կազմին և քաղաքական կուսակցութիւններին:

Ենթադրելով, որ հայերիս մէջ կրդանուին հետաքրքրուողներ, որոնք կրկամենային ծանօթանալ սահմանադրական պետութիւնների կազմին, մենք առայժմ առաջարկում ենք այդպիսիներին «Անզլեայի պետական կազմի» համառօտ տեսութիւնը, նախայն պատճառով, որ Անզլեայի սահմանադրութիւնն ամենահինն է և օրինակելի է եղել ուրիշ պետութիւնների համար. իսկ ապա՝ որ Անզլեան միւս պետութիւնների շարքում այնպիսի առաջնակարգ տեղ

է բռնում, որ նա պետական կազմի հետ ծանօթանալը բնաւ ապարդիւն չի լինի: Մեր նպատակից հեռու էր տալ ընդհանրապէս սահմանադրական գաղափարի զարգացման մանրամասն պատմական տեսութիւնը, և Անզլեայի նկատմամբ բաւականացանք շատ թռուցիկ պատմական տեսութեամբ, որչափ այդ անհրաժեշտ էր *):

Մ. Բ.

Թիֆլիս 1906 թ.



*) Հարկ ենք համարում յիշել այսուեղ, որ գրքովկե սիւթը քաղուած է բացառապէս հետեւեալ աղբւրներից.

1) Д. Сатуринъ. Государственный строй и политическая партия въ Зап. Европѣ и Сѣв. Америк. Соедин. Штатахъ. Т. I.

2) П. Виноградовъ. Политический строй современныхъ государствъ. Т. I. изданіе кн. П. Д. Долгорукова и И. И. Петрункевича.

3) В. Беджотъ. Государственный строй Англіи.

4) Государственный и Общественный строй въ Англіи, Франціи, Германіи и С. Штатахъ, составилъ Н. Сѣверный.

ԱՆԳԼԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

b b

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ



1. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Անդլիական պառլամենտի ծագումը շատ հին է և
բոլոր պառլամենտներից հնագոյնն է: Նա իւր ծա-
գումն առնում է XIII-դ դարում, երբ 1265 թ.
Հերցոգ Մոնֆորը գերի է վերցնում Տէնրիխ III-ին:
Սրա օրով Անդլիայի դործերը կառավարում էր 9
հոգուց բաղկացած մի խորհուրդ, իսկ աւելի կարե-
որագոյնները նա թողել էր համայն Անդլիայի ազատ
բնակիչների ներկայացուցիչների ժողովին: Այդ կա-
րեսրագոյն հարցերը վճռելու համար հրաւիրուում
էին ոչ միայն բարոններ ու հոգեորականներ, այլ և
հասարակ կալուածատերեր, մեծ բալաբների բնա-
կիչներ ու վաճառականներ, որոնք իրենց կողմից երկու
երկու ներկայացուցիչ էին ընտրում և ուղարկում
այնտեղ: Այդ ժողովը կոչում էր Պատլածենու: Թէ-
պէտ Մոնֆորին իւր իսկ ընկերները շուտով ոչնչա-
ցրին, բայց և այնպէս նրա ստեղծած դործը մնաց,
և այդ պատճառով Կոմս Ալեքսանդր Մոնֆորն առաջին

հիմնադիրն է համարւում անզլիական պառլամենտի, որ ապա դարերի ընթացքում աճեց ու զարգացաւ և օրինակելի եղաւ, ինչպէս ասացինք, որպէս եւրոպական միւս պետութիւնների, այնպէս և Հիւսուսացին Ամերիկայի Միացեալ Նահանգների համար: Եւ Անզլիայի յետագայ թագաւորներն ոչ մի կարևոր գործ չեն սկսել և վերջացել առանց պառլամենտի համաձայնութան:

Էզուարդ I-ի օրով փառաւոր պատերազմական սխրագործութիւնների և խելացի ներքին քաղաքականութեան շնորհիւ թագաւորի իշխանութեան հեղինակութիւնը վերականգնում է, բայց և բարոնների ընդդիմագրութեամբ ձեռք բերուած արդիւնքն էլ վերջնականապէս հաստատում է: Էզուարդ II-ի օրով մի փոքրիկ շեղումն տեղի է ունենում դէպի յետագարձութիւն, բայց և այնպէս էզուարդ I-ի սկսածը մինչեւ այսպէս կոչուած Աւ մահը կամ սարսափելի ժամանակար (1348 թ.) ամբողջ քաղաքական գործը կենտրոնացած է լինում զլիսաւորապէս պառլամենտը հաստատ հիմունքների վրայ դնելու շուրջը: Հաստատման աւելի զարկ տուին այն ժամանակուայ Անգլիայի պատերազմական ձեռնարկութիւնները, որով հետեւ թագաւորները յանախակի բացակայ էին լինում և ամեն մի միջոցի զիմում, որ հպատակները նիւթապէս պահպանեն նրանց սկսած մեծածախս քաղաքականութիւնը: Այդ նպատակով 1297 թ. Էզուարդ I-ը հրովարտակ է արձակում, որով պառլամենտին իրաւունք է տալիս ժողովրդի վրայ հարկեր դնելու:

Թէև այդ ժամանակի հաստատութիւնն իրաւունք

ստացաւ մասնակցելու օրէնքների մշակման և հաստատման, ժողովրդի վրայ հարկեր դնելու և ամեն տեսակ հարցերի մասին, որոնք ազգային շահերին էին վերաբերում, իրենց դիտողութիւնները ներկայացնելու, բայց նա աւելի զասակարգային խմբերի ներկայացուցիչների մի ժողով էր, քան պառլամենտ, այսինքն՝ ազգային ներկայացուցչութիւն: Այդ ժողովներին թագաւորը հրաւիրում էր ներկայ լենելու իւր անձնական խորհրդատուներին՝ թէ աշխարհական և թէ հոգեւորական, որոնք ժողովրդի ներկայացուցիչներ համարուել չէին կարող: Մինչ անդամ հրաւիրուղների թիւն որոշ չէր երբեմն շատ մարդ էր հրաւիրում, երբեմն քիչ և շատ բան էլ կախուած էր թէ թագաւորի և թէ նրա մերձականների բարեհաճութիւնից: Բայց կամաց կամաց հրաւիր ստանալն աւանդական իրաւունք դարձաւ, և մեծամեծները հետեւում էին, որ զանցառութիւն չլինի: Հրաւիրում էին և դատաւորներ, որոնք իրենց փորձառութեամբ կարող էին օդտաւէտ լինել. իսկ վաճառականների կողմից մարդ էր հրաւիրում միայն այն ժամանակ, եթե մտադիր էին լինում այս կամ այն ապրանքի վրայ հարկ դնել:

Ներկայացուցիչ ուղարկելու արտօնութիւն ունեցող քաղաքները վաճառականներից ջոկ էին պատգամաւոր ուղարկում: Մհջ քաղաքներն երկու երկու մարդ էին ուղարկում, փոքրները—մի մի: Քաղաքները յաճախ աշխատում էին խոյս տալ ներկայացները ուղարկելուց, որովհետեւ ընտրուածներըն իրենց ծախքը ընտրողներից էին ստանում: Հո-

գեղրականութեան խոշոր մէծամասնութիւնը պառլամենտից հեռու էր մնում, նա պատգամաւորները էր ընտրում և ուղարկում ուրիշ ժողովներին մասնակցելու, որ յայտնի են կոնֆիւսիա անունով։ Հոգեղորականութիւնը՝ ժողովրդից բաժանուելով, ուղում էր մի ուրիշ թագաւորութիւն ստեղծել պետութեան մէջ, իսկ զրա հետեանքն այն եղաւ, որ պետական գործերը վճռելում հոգեղորականութիւնն առանց ձայնի մնաց։

Սյս բոլոր խմբերը բաժան բաժան էին գործում, ուստի ժողովներում ազնուականութիւնն անպայման գերակշռող էր հանդիսանում և առաջ տանում սահմանադրական դաշտափառները թէ տեսականապէս և թէ գործնականապէս։ Այդպիսով ՏՎ դարի երկրորդ քառորդում կազմակերպւում է երկու պալատ, մէկը՝ պէտքերի պալատն է, որոնք հրաւեր էին ստանում, իսկ միւսը՝ համայնքներինը—Անդլիայի ազատ բնակիչների ներկայացուցիների պալատը։

Մէծ շարժումն է առաջ գալիս Եղուարդ Ա-ի թագաւորութեան վերջին ժամանակները։ Այդ ժամանակ Անդլիայում բաւական հողատէրեր կային և ծորտեր՝ վելլոնել, որոնք աղատութիւն էին ձեռք բերել կալուածատէրերից։ Դրանք ամենքն էլ դժոհն էին, որովհետեւ հոգեղորականութիւնն ու ազնուականութիւնը պէս պէս հարկերով ձնշում ու կեղերում էին նրանց, և բացի զրանից՝ ոչ մի իրաւոնք չունէին, պառլամենտին չէին մասնակցում, ձայն չունէին։ Իսկ Անդլիայի ազքի ընկնող կալուածատէրերը, որոնք յայտնի են Լորդ անունով, ոչինչ չէին անում զիւղացիների օգտին։

Նարժումը սասակացաւ, դժոհութիւնն իւր գաղաթնակէաին հասաւ, երբ 1348 թ. Անգլիայում Սև մահ կամ սարսափելի ժանտախտ տարածուեց։ Հասարակ ժողովրդից, բանուոր դասակարգից շատ մարդ մեռաւ, համարեա կէսը, որ և չէր կարող չաղզել անսուսութեան վրայ—աշխատաւոր ձեռքի թանկութիւն առաջ եկաւ և պէս պէս պահանջներ բանուորների կօդմից։ Կառավարութիւնն ու կառավարող դասակարգերը օրավարձ նշանակեցին բանուորներին և խիստ պատիժ անհազանդներին։ Դժոհութեանը պակաս զարկ չտուին և Ֆրանսիայի դէմ մղած պատերազմի անյաջողութիւնները 1381 թ. էլ գլխահարկ նշանակեցին ամենքի համար՝ 15 տարեկանից սկսած, սակայն դրանից աղատ էին ազնուականները։ Ամբոխը սկսեց քարուքանդ անել ու կրակ տալ լորդերի ամրոցները, սպանել կալուածատէրերին և այրել հարկերի մատեանները։ Կաղոնում ոտքի կանգնեցին արհեստաւորները խուժանը սպանեց եպիսկոպոսին, դատաւորներին ու փաստաբաններին։ Ապա ամբոխի առաջն է դուռս գալիս Ռիչարդ Ա-ը և ստորագրում ձորտերի աղատութեան հրովարտակը։ Յետոյ այդ հրովարտակը անվաւեր համարեցին, զինուորներ ուղարկեցին ժողովրդը հանգստացնելու և պարագլուխներից մի քանի սին էլ գլխատեցին։ Թէպէտ ձորտութիւնը չվերացաւ, բայց նա բաւական թուլցացաւ. զիւղացիներն այլ ևս կախումն չունէին կալուածատէրերից, իսկ մի տարուց յետոյ աղատ կապալառուներ էին, պայմանագրով հոգ էին կապալով վերցնում նրանցից։ Ընդդրութեան ԱՎ-դ. գարի վերջում և ԽՎ դ. սկզբում հանրապէս ԱՎ-դ. գարի վերջում և ԽՎ դ.

գիւղացիների նիւթական վիճակը շատ բարուռքուեց Անդիսայում. երկրագործութիւնը բարգաւաճեց և լաւ ապահովեց մանր հողատէրերին:

Հէնրիխ V թուլամիտ թագաւորի օրով պառակտութիւններն աւելի ևս սաստիսցան: Բարոններն, օգտուելով թագաւորի թուլութիւնից, սկսեցին բանի տեղ չդնել նրա իշխանութիւնն ու օրէնքները. անում էին, ինչ որ ուղում էին, զօրք էին ժողովում, հողապտում էին հարեաններին և միմեանց դէմ պատերազմ մղում: Իշխանութիւն ձեռք բերելու նպատակով շարունակ ունաձգութիւններ էին տեղի ունենում պալատական շրջանում: Թագաւորը Լանկաստերների տոհմից էր, իսկ Խորի հերցոգը կարծում էր, թէ ինքն աւելի իրաւունք ունի անդիսական գահը բարձրանալու: Սրա կողմնակիցները՝ «Ճերմակ վարդի» կուսակցութիւնը, հրաւոյին Անդիսայի հարուստ արդիւնաբերողներն էին, իսկ թագաւորի կողմնակիցները՝ «Յլ վարդի» կուսակցութիւնը, գլխաւորապէս հիւսիսային Անդիսայի դեռ ևս վայրենի ժողովուրդն էր: Կոիւն երեսուն տարի տեսեց 1455—1486 թ. Յյդ ժամանակամիջոցում հազիւ մի թագաւոր գահ էր բարձրանում, իսկըն նրան տապալում էին, սպանում և գահ բարձրացնում մի ուրիշն: Վերջ ի վերջոյ գահ բարձրացաւ Լանկաստերների տոհմից ողջ մնացած վերջին շառաւիղ Հէնրիխ Տիւգոր VIL-ը, որ որոշեց հաշտեցնել երկու կռուող կուսակցութիւններն և այդ նպատակով ամուսնացաւ հակառակորդ տոհմի Եգուարդ IV-ի դատեր հետ և ի նշան հաշտութեան իւր գրոշմի մէջ միացրեց Յլ ու Ճերմակ վարդերը (1485): Յյդ կոիւների հետեանքն

այն եղաւ, որ Անդիսայի բարձր դասի աղնուականները միմեանց կոտորեցին, սաստիկ թուլացան, և նրանց փոխարէն առաջ եկան միջին և ստորին դասակարգերի աղնուականներ, որոնք ներկայացուցիչներ էին ուղարկում պառակմենտ:

Կրօնական յեղափոխութեան պատճառով միապետութիւնը զարգանում է Տիւգորների օրով: Կորդերի պալատում աւելանում է հոգեւորական լորդականների թիւը, որոնք, ինչպէս և ամբողջ հոգեւորականութիւնը, միշտ կախումն ունեին թագաւորից: Սկզբում այնքան էլ նկատելի չէր ջերմ հաւատի և խղճի աղատութեան, որքան հռովմից անջատուելու ձգտումը կապը հոգմի հետ խզուեց: Հէնրիխ VIII իրեն անդիսական եկեղեցու գլուխ է հոչակում, իսկ Եղիսաբէթի օրով բոլորովին հաստատում է պետութեան գերիշխանութիւնն եկեղեցու կեանքում: Հոգեւորականները կարող էին ժողովներ ունենալ միայն թագաւորի համաձայնութեամբ, և եկեղեցական կանոնները թագաւորն էր հաստատում, ոչ թէ պապը: Թագաւորն էր եպիսկոպոսներ նշանակում, իսկ ծխատէր հոգեւորականութիւնը կալուածատէրերից կախուած մի գասակարգ գարձաւ: Վանքերի և աբբայութիւնների կալուածները գրաւեցին և բաժանեցին նոր աղնուականներին: Բարձրաստիճան հոգեւորականները, որոնք վերին պալատում առաջ մեծամասնութիւնն էին կազմում, XVII դ. սկսում են փոքրամասնութիւն կազմել: իսկ աշխար-

հական պէրերի թիւը, ընդհակառակը, տւելանում է: Հոգեորականութիւնը ստորադրում է թագաւորին և նրանից ստանում թէ հող և թէ փող ապրուսախ համար: Ժամասացութիւնը կրծատում է, պատկերայարդութիւնը վերացում, և հոգեորականներն իրաւունք են ստանում ամուսնանալու: Մի խօսքով պառլամենուր օրէնսդրական ձանապարհով անց է կացնում եկեղեցական կազմութեան հիմունքները, իսկ երբեմն էլ հարկադրուած միջամտում է զուտ դաւանական գործերին: Անզլիական եկեղեցին՝ հակառակ լութերականին, եպիսկոպոսութիւնը պահից, ուստի կոչում է եպիսկոպոսական, և ժամասացութիւնը նմանութիւն ունի կաթոլիկականին:

Եկեղեցական կալուածների գրաւումից դժգոհ էին գիւղացիներն, որովհետեւ հոգեորականութիւնը հողերը նրանց էր կապալով տալիս: Եւ վանքական հողերն բաժանելուց յետոյ թէ հին և թէ նոր կալուածատէրերը սկսեցին հեռացնել մանր կապալառու-գիւղացիներին: Տասկանալի է, որ այդպիսի պայմանների պատճառով գիւղացիները պիտի աղքատանային, և արհեստաւոր գառնալու նպատակով փախչում էին գնում քաղաքներ, թափառում էին, մուրացկանութիւն էին անում և այն: 1561 թ. տեղի է ունենում ապստամբութիւն, և Եղիսաբէթ թագուհին հրամայում է քննել և իմանալ պատճառները: Սյդ խոռվութեան ժամանակ կառավարութեան գործ զրած միջոցները վայելում էին հասարակութեան պաշտպանութիւնը, որովհետեւ վախնում էին: Եւ պէտք է ասել, որ այդ պաշտպանութիւնը ի վեաս պառլամենտի էր և յօգուտ թագաւորի:

Եղիսաբէթը շատ անկախ էր և իշխանութիւն սիրող: Նա պառլամենտը շուտ շուտ էր գումարում, բայց երբ պառլամենտը համամիտ չէր լինում թարագուհուն, անդամների նկատմամբ նա դիմում էր խիստ միջոցների: Իւր նպատակներին հասնելու համար նա ամեն ջանք գործ էր դնում պառլամենտում շատացնելու իւր մարդկանց, իրեն հնազանդ մարդկանց թիւը: Այնու ամենայնիւ այդ չէր օգնում, ուրովհետեւ անզլիացիներն արդէն ընտելացել էին աղատութեան և քաղաքական կեանքին, ուստի համարձակ յայտնում էին իրենց կարծիքը, ընաւաչքի առաջ չունենալուվ՝ հաձելի կըլինի թագուհուն թէ ոչ Միւս կողմից թագուհին չէր կարող բոլորովին պառլամենտ չգումարել, որովհետեւ պառլամենտն էր տուել գահի իրաւունքը: Նա երկիւղ էր կրում, որ կըզբկուի ժողովրդի միրուց և պաշտպանութիւնից, որովհետեւ այդ ժամանակ Շոտլանդիայի Մարիա Ստիւարտ թագուհին էլ իւր իրաւունքներն էր յայտարարում անզլիական գահի վրայ, և նրան պաշտպանում էին կրօնական յեղափոխութիւնից դժգոհ կաթոլիկները: Սյդ էլ նրանով վերջացաւ, որ Եղիսաբէթը զերի առաւ Մարիա Ստիւարտին, պառլամենտն իւր հաւանական թիւնը տուեց նրան մահուան գատապարտելու, որպէս զի թագուհին լիովին ապահով լինի թշնամիների կողմից:

Եւ այսպէս, XVII դարի վերջում, Եղիսաբէթի օրով անզլիական պառլամենտը՝ մի կարձ միջոց թուլանալուց յետոյ՝ վերստին սկսում է աղդեցութեանալու սպառապարտինը, որպէս զի թագուհում է, թիւն ունենալ: Անզլիայի առևտուրը ծաղկում է,

գաւառական հողատէրերն ու վաճառականները հարստանում են և մեծ ազդեցութիւն ձեռք բերում, և այդպիսով ասպարէղ է գալիս մի միջին, երրորդ դասակարգ, որ աւելի շատ տեղ է ձեռք բերում պառլամենտում և ազդում օրէնքների վրայ: 1571 թ. փոխում է այն նախկին օրէնքը, որի հիման վրայ ներկայացուցիչը կամ պատգամաւորը կարող էր լենել միայն տեղական բնակիչներից, և ընտրում են, որին կամենամ են, ուստի հողատէր աղնուականութիւնն աշխատում էր շատ տեղ ընտրուել: 1586 թ. ներքին պալատն իրաւունք է ձեռք բերում ընտրութիւնների կանոնաւորութիւնը վերաստուգելու, որ առաջ թագաւորի կողմից նշանակուած աստիճանաւորներ էին անում, և վերջապէս պալատի անդամին ձերբակալել կարելի եղաւ նոյն իսկ պալատի վճռով և ոչ թէ սոսկ թագաւորի հրամանով ինչպէս առաջ էր, հետևաբար և պառլամենտի անհաճյ անդամին հեռացնելն այժմ այնքան էլ հեշտ չէր:

Որովհետեւ Եղիսաբէթն ամուրի էր, ուստի անգլիական գահը նա ժառանդեց մահուան դատապարտուած Մարիա Ստիւարտի օրդուն՝ Յակոբ I-ին: Ստիւարտներն այն համոզման էին, որ թագաւորի իշխանութիւնն Աստուծուց է տրում և ժողովրդի համաձայնութիւնն այդ գործում ոչինչ նշանակութիւն չունի, հետևաբար՝ այդ հայեցքն ունենալուց յետոյ, սուր կոխներ տեղի պիտի ունենային թագաւորի և սահմանադրական հաստատութիւնների միջև: Ստիւարտները կարծում էին, թէ գաւերագրով և զիջումներով ժողովրդի սպառնում լինեն անհաճյ անդամին հեռացնելն այժմ այնքան էլ հեշտ չէր:

Ժամանակաւոր են և տեղական բնաւորութիւննունին, արուած են թագաւորների յօժար կամքով և չին կարող սահմանափակել նոյն թագաւորների իշխանութիւնը: Այս հայեցքի բարձրութիւնից նայելով, անշուշտ, իշխանութիւնը չէր կարող անհրաժեշտութիւն դդալ օրէնքներն ու հանդիսաւոր կերպով արած խոստումներն յարգելու, իսկ անխօս հնազանդուելու և որ և է ընդգիմադրութիւն ցցյ տալու մտքից հրժարուելը հպատակների սրբազն պարտականութիւնն էր համարում, ժողովարդը զգում էր հոգեոր անկախութեան անհրաժեշտութիւնն ու պահանջը: Միջնադարիան պետական կազմի անկատար լինելը բազմաթիւ ձանապարհներ էր բաց անում Ստիւարտների առաջ օրէնքների հակառակ գործելու, սահմանադրական խոչընդուաններից խոյս տալու: Նրանք բազմաթիւ դէպքեր ունեին հրամանների միջոցով օրէնքներ հրատարակելու, միջոցներ՝ որ չէին նախատեսել զցութիւն ունեցող ընդհանուր իրաւունքն ու օրէնքները: «Գաղանի Խորհրդարանը» մի տեսակ հինակութիւն էր, որի միջոցով կառավարութիւնը միջամտում էր բոլոր գործերին՝ ձեռնարկողների և բանուորների փոխադարձ յարաբերութիւնների, սատիկանութեան, արհեստների և առևտրի, քաղաքների և զիւղերի բարեկարգութեանց, դատաւորների գործունէութեանց մէջ և այլն: Երկում կամայականութիւն էր տիրում, մարդիկ ձերբակալում էին և թիւն էր տիրում, առաջիկ ձերբակալում, մեղադրերանտարկում, տուգանքի ենթարկում, մեղադրելով նրանց, թէ գաւաճանում են պետութեանը, կամենում են տապակել գյութիւն ունեցող պետական կազմը, որ վտանգ է սպառնում ի սպառ ոչնչաց:

նելու անգլիացիների վաղեմի քաղաքացիական ասպահովութիւնը:

Սակայն իւր ինքնակալութեան դիտակցութեանը հասած միապետութեան այդ էլ քիչ էր: Նա կամենում էր օրէնքից զուրս և օրէնքից վեր լինել: Յակոբ I, Կարլոս I, Կարլոս II և Յակոբ II Ստիւարտներն ամեն ջանք գործ դրին զատաստանական հաստատութիւններն էլ կառավարութեանը ստորագրել: Կարլոս I փորձում է կառավարել երկիրն առանց պառլամենտի և մի քանի անգամ խախտում է պառլամենտի անդամների անձեռնամսելիութեան և պառլամենտում նրանց արտայայտած կարծիքների անպատճիւղամսանատուութեան կանոնները: 1628 թ. Կալվանաւորուեցին պառլամենտի հակառակ կուսակցութեան անդամները, իսկ 1642 թ. Կարլոսը փորձեց անձամբ ձերբակալել համայնքների պալատի հինգ ամենանշանաւոր պատգամաւորներին: Մաքսեր էր վերցնում, քաղաքներից և մասնաւոր մարդկանցից փող էր առնում նաւեր շինելու և այլն: Այսպէս 11 տարի նա կառավարեց երկիրն առանց պառլամենտի, իսկ նրան անվախ զատապարտողին տանջանքների էին ենթարկում, զլիատում:

Կրօնական հարցերի պահանջառով Շոտլանդիայում գտնութիւններ ու խռովութիւններ ծագեցին: Կարլոս զօրք ուղարկեց այնտեղ բայց զորքը՝ չհամակրելով Կարլոսին, չէր ուղում կռուել, իսկ մի վաշտի մինչեւ անգամ ջարդեցին շոտլանդացիները: 1640 թ. գումարում է պառլամենտը, շուտով կարգի է բերում գործերն և զպում Կարլոսին շրջապատող մարդկանց ինքնակամութիւնը: Նա մինչև անգամ կախել տուեց

թագաւորի սիրելի լորդ Ստրաֆֆորդին իւր անպատճ զործերի համար: Ապա պառլամենտը վճիռէ կայացում, որ միայն իւր համաձայնութեամբ կարող է պառլամենտան արձակուել. մաքսեր առնելն, նաւեր շինուելու համար փող վերցնելն ապօրինի է յայտարարում և այլն: Այս զործերում պառլամենտի անդամները համամիտ ու համերաշխ էին գործում, իսկ երբ անցան կրօնական հարցերի քըննութեան, կարծիքները բաժանու եցան: Պառլամենտը պահանջում էր, որ մինիստրներն իրենց գործողութիւնների ու կարգադրութիւնների համար հաշիւ տան պառլամենտին. իսկ եկեղեցական վէճերին վճիռ տայ պառլամենտի հոգեւորական անդամներից ընտրուած յանձնաժողովը: Այդ շրջանում պառլամենտը ամեն կերպ աշխատում էր թուլացնել սահմանափակել թագաւորի իշխանութիւնն և իւր ձեռքն առնել տէրութիւնը կառավարելու գործը:

Այդ ամենն, ի հարկէ, թագաւորին շատ էր զայրացնում, ուստի նա զինուուրներով պառլամենտ է գալիս ձերբակալելու հինգ անհազանդ անդամներին, որոնք այդ տեսակ առաջարկներ էին արել, բայց նրանք այնտեղ չէին: Այս գեպքից յետոյ թէ ժողովուրդն և թէ պառլամենտը սաստիկ զրգուեցին թագաւորի դէմ, իսկ թագաւորը Լոնդոնից հեռացաւ զօրք ժողովելու: Այդ միջոցին պառակտութիւնն է ծագում պառլամենտի անդամների միջե. մի մասը պաշտպանում էր թագաւորին, չգովելով սակայն նրա ինքնակամութիւնը, և այդ կուսակցութեան պատկանում էին զլիատորապէս աղնուականները. միւս մասը, ընդհակառակը, պահանջում էր, որ

ընդարձակուին պառլամենտի իրաւունքներն և սահմանափակուի թագաւորի ինքնակամութիւնը, և այդ կուսակցութեանը պատշաճնում էին ոչ ազնուականները: Պառակառութիւն ծագեց նշյնակս և ժողովրդի մէջ. մի մասը թագաւորի կողմն էր պահում, միւսը — պառլամենտի:

Սկզբում յաղթող հանդիսացան թագաւորի կուսակիցները, և պառլամենտական կուսակցութեան պարագլուխներն սպանուեցան: Ապա պառլամենտը զիմեց շօտլանդացիներին և օգնութիւն ինդրեց: Շօտլանդացիք խոստացան՝ միայն այն պայմանով, որ պառլամենտն Անգլիայում մայնէ շօտլանդական եկեղեցական կազմը՝ պրէսվիտերական, այսինքն՝ առանց եպիսկոպոսների, միայն քահանաներ լինեն: 1643 թ. պառլամենտը դաշինք է կապում շօտլանդացիների հետ, որի հիմոն վրայ միատեսակ եկեղեցի պիտի լիներ Անգլիայում, Շօտլանդիայում և Իռլանդիայում, և բոլորովին բնաջինջ պիտի անէր պապականութիւնը: Մակայն այդ պայմանն էլ անիրագործելի մնաց:

Այդ ժամանակ Անգլիայում, մանաւանդ ժողովը զի ստորին խուերում, բազմատեսակ աղանդաւորներ կային, որոնք չին ընդունում պետութեան հաստատած անգլիկան և պրէսվիտերական եկեղեցիները, այլ պահանջում էին, որ ամեն մի համայնք իրաւունք ունենայ իւր կրօնական զործերն այնպէս անօրինելու, ինչպէս ինքն է կամենում: Այդ աղանդաւորներն ստեղծեցին «ինդէպէնդէների», այսինքն անկախների կուսակցութիւնը, որոնցից պառլամենտում միայն 5 ներկայացուցիչ էր, իսկ զօրքի մէջ

շատ շատ: Զօրքի առաջնորդն Օլիվեր Կրոմիլին էր: Երբ սա պատգամաւոր ընտրուեց, միայաւ իւր դասակարգի կուսակցութեանը, որ ձգտում էր թէ նոր կարգերի և թէ աղաւութեան: Տեսնելով, որ զօրքը վատ է, դժուար է կուտել թագաւորի գէմ, նա ըսկում է ժողովել զօրքի մէջ կրօնասէր և ֆանտաֆիսումարդիկան մարդկանց: Պէտք է նկատել որ պառլամենտը կուտել մզում ոչ թէ թագաւորի գէմ, այլ թագաւորի համար, որպէսզի նրան կորզէր վատ խորհրդականների ձեռքից: Եւ երբ զօրքի մէջ բազմանում է «անկախների» թիւը, զօրքը սկսում է հասկանայ, որ կուտեն ոչ թէ թագաւորի համար է, այլ նրա գէմ: Յետոյ էլ սկսուեց հասարակապեսական հայեացք տարածուել, այն է որ թագաւորը բոլորովին տւերդ է, և աէրութիւնը կարող է կառավարել ժողովը ընտրածը պառլամենտի հետ միասին: 1645 թ. Կրոմիլը ջարդում է Կարլոսին, որ Շօտլանդիա է փախչում: Բայց շօտլանդացիները մասնացին նրան անգլիացիների ձեռը: Այդ ժամանակ պառլամենտի մեծամասնութիւնը բաղկացած էր պրէսվիտերականներից, որոնք պատրաստ էին թագաւորին գահ բարձրացնելու հիմքում պետութեան պահանջում էին և նոյն ժամանակ պառլամենտն երկիւղ էր կրում «անկախների» զօրքից, ուստի առաջարկեց նրան Իռլանդիա գնալ բայց զօրքը վարձատրութիւն և կրօնի աղաւութիւն պահանջեց ամենքի համար, բայց կաթոլիկութիւնից: Պառլամենտը ըստուեց իւր հաւանաւթիւնը, սակայն ոյժ էլ չունէր կուտելու Կրոմիլի զօրքի գէմ, ուստի սա Լոնդոն մտաւ, պրէսվիտերականներին քշեց պառլամենտից,

իսկ «անկախները» թագաւորին մեղադրեցին համայնքների պալատում, որ նա դաւաճանում է ժողովրդին: Սակայն լորդերի պալատը հրաժարուեց թագաւորին դատելուց, այդ պատճառով էլ համայնքների պալատը լորդերի պալատն ոչնչացրած յայտարարեց, դատաստան կազմեց, մեղադրեց թագաւորին, որ նա կոխու է մղում իւր իսկ ժողովը դեան դէմ: 1649 թ. Կարլոս I-ը մահուան պատժի դատապարտուեցաւ: Համայնքների պալատն իրեն պառլամենտ յայտարարեց և Անգլիայում—հարապետութիւն:

Ապա պառլամենտը ձեռնամուխ է լինում պետական գործերը կանոնաւորելուն: Նոր ընտրութիւններ են նշանակում, որոշումն կայացնելով, որ բոլոր նախին անդամները պիտի լինեն նոր պառլամենտում: Եյդ պառլամենտի նիստերը շատ երկար տեղին՝ 1640—1653 թ., և միայն Կրոմվէլն զօրքի աջակցութեամբ արձակեց:

Կրոմվէլի կողմնակիցները նրան տուին պետութեան հովանաւորի ախտղոս, իսկ պառլամենտին՝ օրէնսդրական իշխանութիւն: Բայց երբ պառլամենտի անդամները Կրոմվէլի ուզած չէին անում, նա արձակում էր պառլամենտն և համարես մենակ կառավարում երկիրը: Նոր պառլամենտը գումարում է միայն Սպանիայի հետ կոռւելու համար, և պառլամենտը վճիռ է կայացնում նորից հաստատել Վիրին պալատը՝ լորդերի պալատի փոխարէն և խնդրում, որ Կրոմվէլն ընդունի թագաւորի տիտղոս, սակայն նա մերժում է, որովհետեւ զօրքը հակառակ էր: Օլեվէր Կրոմվէլը կողմնակից էր Կրօ-

նական համբերարութեան. բոլոր կրօններին նա ներողամառութեամբ էր վերաբերում, բացի կաթոլիկութիւնից, որովհետեւ կաթոլիկները պապական են և հին կարգերի կողմնակից: Քաղաքականութեան մէջ նա այն հայեացքն ունէր, որ իշխանութիւն պիտի ունենան ժողովուրդն ու կառավարութիւնը:

1658 թ. Օլեվէր Կրոմվէլն մեռնում է, և նրան յաջորդում է Ռիչարդ որդին, որ ոչ հօր ընդունակութիւններն ունէր, ոչ էլ ազդեցութիւնը զօրքի վրայ, ուստի և կարծ միջոցից յետոյ հրաժարուեց իշխանութիւնից: Նորից գտութիւններ ու խոսկութիւններ ծագեցին: Լոնդոնի վրայ է գալիս Շոտլանդիայ զօրքերի հրամանաւար Մոնկը, սահմանական պառլամենտ գումարել՝ լորդերի պալատի հետ միասին: Զայների մեծամասնութեամբ պառլամենտն որոշում է գահն առաջարկել թագաւորի որդուն՝ Կարլոս Սախտարակին: Իւր կողմից սա մի հրովարտակ է ուղարկում, խոստանալով ներումն չնորհել հօր դէմ ապստամբուածներին, վարձատրել զօրքը և կրօնի պատառութիւն տալ: Եյդ ժամանակ պառլամենտը յայտարարում է, թէ կառավարութիւնը կազմուած պիտի լինի թագաւորից, լորդերից և Համայնքների պալատներից: 1660 թ. Կարլոսը փառաշուք հանդիսով Լոնդոն է մտնում: Կրոմվէլը զօրքը վարձատրում է և արձակուում: Կարլոս I-ին մահուան պատապարտողներից մի քանիսին զիստաում են, իսկ Կարլոս II-ի գումարծ պառլամենտը հրաժարում է կրօնի ապատութիւն տալուց: Դարձեալ զիստաոր կրօնն եպիսկոպոսականը մնաց, պուրիտաններին սկսեցին հալածել պաստօրներից ու վարժապեաներից

պահնջեցին, որ եպիսկոպոսական աստուածապաշտութիւնը ընդունեն, ուստի 2000 չոփ պատօր իրենց տեղերը թողին։ Քաղաքներին պատուիրած էր վարչութեան համար չընտրել այն մարդկանց, որոնք չեն հրաժարուիլ կրօնական պայմանագրից և չեն երդուիլ որ թագաւորի դէմ հակառակութիւնն ապօրինի են համարում։ Եպիսկոպոսական եկեղեցին չընդունող համայնքներին արգելուած էր ժամասացութիւն անել։ Թագաւորը չէր համակրում պառլամենտի այդ միջոցները, որովհետեւ ներքուստ կաթոլիկ էր։ Միևնույն ժամանակ պառլամենտը մի օրէնք է հրաժարակում, որի հիման վրայ պետական ծառայութիւնը մտնողը պիտի հրաժարուէր հացի և զինու Քրիստոսի մարմինն ու արինը դառնալու կաթոլիկ գաւանանքից և անգլիական ծխով պիտի հաղորդուէր։ Շուառվ պառլամենտը՝ խայտառակութիւնից խոյս տալու նպատակով, արձակում է, որովհետեւ իմանում է, որ Կարլոսը Ֆրանսիայի հետ պայման ունի կապած հողանդից դէմ կռուելու համար, որի համար կիւղովիկոս ԽIV փող է ընծայ ստանում։ Նոր պառլամենտում թագաւորի կուսակիցները զօրբանում են, և նրանց զլուխն է անցնում լորդ Շէֆստրեօրին։ Առաջին տնօտամ թագաւորի հակառակորդները սկսում են պառլամենտում վէճել կոչուել, իսկ կուսակիցները՝ առընչել:

Կարլոսը մեռնում է 1685 թ., և նրան յաջորդում է Յակոբ Ա-ը, որի օրով (1688 թ.) խաղաղ յեղափոխութիւն է տեղի ունենում Անգլիայում։ Յակոբ Ա-ը՝ կաթոլիկ լինելով՝ հալածում էր պյառաւաններին, և որովհետեւ նա արտ զաւակ ուներ,

ամենքն երկիւղ էին կրում, որ ապագայ թագաւորը
նցյնպէս կաթոլիկ կարող է լինել, ուստի զիմումը են
Վիլհելմ Օրանեանին, որ այդ ժամանակ հոլլանդական
հասարակապետութեան կառավարիչն էր, ինդրում
նրան գալ Անգլիա և պաշտպանել բողոքական կրօ-
նըն ու անգլիական օրէնքները: Վիլհելմը գալիս է,
պառլամենտ գումարում, որ և վծիու է կայացնում,
թէ Յակոբը գահից հրաժարուել է, և գահն առաջար-
կում է Վիլհելմին: Եւ այսպէս Սախտարաները վզկու-
եցան գահից: Այս դէպքը նշանաւոր է այն կողմից,
որ պառլամենտը թագաւորից բարձր է կանգնում,—
նա է նրան գահ առաջարկում: Պառլամենտն իրեն
է վերապահում երկրի գերագոյն իշխանութիւնը, թա-
գաւորը նրանից է կախումն ունենում:

Պառլամենտի մեծամասնութիւնն այդ ժամանակ վեղերն էին կազմում, որոնք կարողացել էին բաւականաչափ բարենորոգութիւնը մտցնել: Վեհակելին աշխատում է հաշակեցնել վեղերին աօրերի հետ, բայց մեծամասնութիւնը, ինչպէս ասացինք, վեղերը լինելով՝ յաջախ յարձակուում էին թագաւորի մինիստրների վրայ և ստիպում նրանց հրաժարական տալ և այդ ժամանակից սովորութիւն եղաւ, որ թագաւորը սկսեց մեծամասնութիւնից մինիստրներ նշանակել, հետեաբար և համերաշխութիւն էր լինում պառլամենտի ու մինիստրների միջև, և կառավարութիւնը հզինակութիւն էր ձեռք բերում: Նոյն ձեռվ է կատարուում և այժմ ներքին պալատը սկսեց առաւելութիւններ ստանալ, ինչպէս, օրինակի համար, երկրի ամեն մի նիւթական հարկի փոփոխութիւն և վաւերացում ներքին պալատից պիտի դաւրս զար: Պառլա-

մենան այդ ժամանակից մի մշտական հաստատութիւն է դառնում և հրաւիրում 7 տարի ժամանակով, բայց իրօք նիստերն աւելի կարծ միջոց են տեսում:

Գահ բարձրանալուց յետոյ կարլոսը ստորագրեց մի շատ կարեոր օրէնք, — անզլիական ժողովրդի «իրաւունքների օրէնքը»: Այդ օրէնքի մանրամասնութիւնների, ինչպէս և յետագայում տեղի ունեցած պատմական նշանակութիւն ունեցող խոշոր դէպքերի մասին մենք այստեղ չենք ընդարձակիլ մեր խօսքը, որովհետեւ համարեա բոլոր ուշագրութեան արժանիները յիշուած են իրենց համապատասխան գլուխներում:

Եյսպէս՝ Անզլիայի պետական կազմի պատմութիւնը վկայում է, որ քաղաքացիական բարեկարգութեան և քաղաքական կազմակերպութեան խնդիրները սերտ և փոխագաճ կապ ունին միմեանց հետ: Քաղաքական իրաւունքներն ապահովելու համար միջին դարերում առաջին քայլն անում են բարոնները, որովհետեւ խախտվում է նրանց անհատական և գոյքի իրաւունքը, և շարունակ կռիւ է տեղի ունենում թագաւորի և ժողովրդի միջև ոչ թէ քաղաքական ազգեցութիւն ձեռք բերել փափագող փառասէրների, այլ հասարակութեան մեծ և լայն շրջանների պատճառով՝ որոնք ձգտում էին արժանավայել և օրէնքով ապահովուած գոյութիւն ունենալ: Ալ կոուի ժամանակ ՏՎԱ դարու յեղափոխութիւնների շնորհիւ կարողացան վերջնական ընզիմագրութիւն ցոյց տալ կրօնական և ոստիկանական կամայականութեան, որ ամենքին և իւրաքանչիւ-

րին էր վերաբերում անձի ապահովութեան և խըզձի նկատմամբ:

Անզլիական ժողովրդի պետական աձման պատմութիւնն անզլիական հասարակութեան զանազան խաւերի նիւթական և հոգեւոր աձման պատմութիւնն է: Եթէ միջին դարերում սոցիալական կեանքի զեկավարով գերին ազնուականութեան և արտօնուած քաղաքների համայնքներին էր պատկանում, ՏՎԱ և ՏՎԱ դարերում առաջ են գալիս միջին ազնուականութիւն և փոքրիկ հողատիրութիւն, իսկ ՏՎԱ դարում կարծես սոցիալական ոյժերը բաժանւում լինեն: Քաղաքական առաջնորդութիւնը կալուածատէր դասակարգի ձեռքին է լինում, իսկ հասարակութեան ստորին խաւերն իրանց եռանզը դարձնում են Անզլիայի գերիշխանութեան վրայ:

Անզլիայի սահմանադրական պատմութիւնն հետազողները յաճախակի և իրաւայի կերպով ուշագրութիւն են դարձրել այն նշանաւոր հանգամանքի վրայ, որ անզլիական հասարակութեան դասակարգերը՝ ընայելով որ բաժան բաժան են եղել և երկպառակութիւն է աիրել նրանց միջեւ, քաղաքական կեանքում մեծ յաջողութիւններ են ունեցել պիտառապէս այն պատճառով որ իմացել են մասնաւոր ձգտումներից զերագասել ազգային գործը և վճռական բուպէներում միացել են ընդհանուր գործի համար: Սոյն իսկ միջնադրեան բարոններն աշխատել են ոչ միայն իրենց, այլ և իւրենցից ցած գտնուող դասակարգերի համար. Թարբենցից ցած գտնուող դասակարգերի համար. Թարբենցից ցած գտնուող դասակարգերի համար.

պետական, այլ ազգային շահերի համար: XVII դարում պայքարների ժամանակ քաղաքային և հողատիրական խմբերը միմեանց ձեռք էին պարզել, և կամայականութիւնը վերջնականապէս յաղթուել է այն պատճառով, որ տօրերն ու վեգերը՝ անզլիկաններն ու պուրիտանները միմեանց փոխադարձ զիջումներ են արել: XVIII դարում պառլամենտում սակաւապետութիւն էր տիրում, որովհետեւ նա յաջողութեամբ ծառայում էր ազգին: Բայց ժողովրդապետութեան սկզբունքը XIX դարում իրագործուեց, որովհետեւ ազատամիտաները, պահպանողականներն և արմատականները փոխադարձ ազդում էին միմեանց վրայ, և յաճախ պահպանողականներն էին ձևակերպում հակառակորդների առաջարկները. իսկ հասարակութեան արտօնեալ խմբերը, թէև ընդդիմազրում էին ժողովրդապետական շարժման և բռնում էին ընթացքը, բայց միշտ զգում էին, թէ մինչ որ աստիճան կարելի է ընդդիմազրի լինել և անխուսափելի եղած դէպքում իւր ժամանակին զիջումն էին անում:

Մեր առաջ բերած հանգամանքների շնորհիւ զարգացաւ և առաջացաւ մի ազատ հաստատութիւն, որով ամենայն իրաւամբ ներկայումն պարծենում է Անզլիան:

2. ԹԱԳԱՀՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Անզլիայի թագաւորն իսկապէս ոչինչ առանձին իրաւունքները չունի, թէև Բենչոստ անզլիացի մատենագիրը հերքում է այդ՝ ասելով թէ անզլիական սահմանադրութեան պէս սահմանադրութիւն ունեցող պետութիւններում թագաւորն երեք իրաւունք ունի: Առաջին իրաւունքն այն է, որ նրա հետ խորհրդակցեն, երկրորդը՝ խրախուսելն է, իսկ երրորդը՝ նախազգուշացնելը: «Եւ իմաստուն ու խելացի թագաւորն, — ասում է Բենչոստ, — չի բարեւ ուրիշ իրաւունքներ ունենալ: Նա կը տեսնէ, որ ուրիշ իրաւունքների բացակայութիւնն ցժէ և տալիս իրեն իւր իրաւունքներից առանձին եռանդով օդտուելու»:

Եւ արդարեւ, թագաւորն Անզլիայում մայն նահաւունուն է, բայց չէ խաւախունուն, իսօք ժողովուրդն է կառավարում, և Անզլիայի մասին համարձակ կարելի է ասել, որ նա հասարակապետութիւն է թագաւորով հանդիրձ: Թագաւորը պատասխանատու չէ Անզլիայում, որովհետեւ այնտեղ այսպէս են մտածում: Նախ՝ որ նա ոչ մի անկանոն գործ բռնել չէ կարող և տպա՝ նրա գործերի համար պատասխանատու պիտի լինի մինխատրներից մէկը կամ ամբողջ մինխատրութիւնը միտօն: Նրա բոլոր հրամանների համար պատասխանատու պիտի լինի մի որևէ պաշ-

տօնական անձն: Նա միայն իւր ժողովրդի ներկայ-
ացուցիչն է, ներկայ է լինում զանազան հանդէսների,
հայկերոյթների և այլն: Երբ Վիկտորիա թագուհին
իւր կետնքի վերջին տարիներում ներկայ չէր լինում
պաշտօնական ընդունենութիւններին և հանդէսներին,
անդիւական լրագիրներից մի քանիսը յանդիմանում
էին նրան, որ նա չէ կատարում իւր պարտականու-
թիւններն, որոնց համար փող է ստանում:

Թագաւորի փոքրի ի շատէ կարեոր մամնակյուռ-
թիւնը պետական կետնքին հետեւածն է. նա կարող է
պահանջել որ իրեն յայտնեն պետական քաղաքա-
կանութեան նշանաւ որ գործերը. այսպէս, երբ պառ-
լամենուը նիստեր է ունենում, ամեն օր պիտի զեկու-
ցանեն պալատների զբաղմանց ընթացքի և արտա-
քին գործերի առթիւ խփուած ու ստացուած հեռա-
գիրների մասին: 1851 թ. լորդ Պալմերստոնը հարկ
չէր համարել կանխապէս յայտնել Վիկտորիա թա-
գուհուն իւր դիպլոմատիկական գրադրութեան բո-
վանդակութիւնը, ուստի թագուհին պահանջել էր,
որ նա հեռանայ: Սակայն, եթէ տարածայնութիւն լի-
նէր թագուհու և մինիստրների կարինեաի միջև, այդ
դէպքում նա ոչինչ չէր կարող անել որովհետեւ
մինիստրները կարող էին հրաժարուել և ընդդիմա-
զրութիւն կարող էր լինել պառլամենտի մեծամաս-
նութեան կողմից: Ոչ թէ մինիստրներն են ենթար-
կուում թագաւորի իշխանութեանը, այլ ընդհակառա-
կը՝ թագաւորն է ենթարկուում մինիստրների կամ;
աւելի ճիշտն տսած, նրանց պրէմիերի (առաջին
մինիստրի) կամքին:

Օրինակի համար տուած բերենք մի դէպք: Վիկ-

տորիա թագուհին չէր ուզում պատերազմել Հարա-
ւային Աֆրիկայի փոքրիկ հասարակապետութիւնների
հետ, և այդ հանդամանքը թունաւորեց նրա կեան-
քի վերջին ամիսները, նրա մահուան պատճառներից
մէին եղաւ: Նա այնքան առողջ բանականութիւն
ունէր, որ լիսվին ըմբռնում էր այդ պատերազմի
անարդարացի և անաեղի լինելը: Աւելի քան վաթսուն
տարի թագուհի էր և երբէք չէր շեղուել սահմա-
նագրութիւնից: Նրա օրով բարգաւաճեցին Անգլի-
այի արգիւնաբերական պյերը, ազգային զօրութիւ-
նը և ժողովրդապետական հաստատութիւնները: Բա-
ցի զրանից Վիկտորիան իւր անձնական կեանքում
ամբիծ էր, ամեն մի կասկածանքից բարձր: Նա հա-
ւատարիմ կին էր, օրինակիլի մայր, խնայող արն-
տեսուհի, և այդ բարեմասնութիւններով նա կա-
րողացել էր զրաւել անգլիական ժողովրդի համա-
կրութիւնը: Նա նորագոյն ժամանակի ամենաժողո-
վորական թագուհին էր, իսկ 1887 և 1897 թ. թէ
յորեւնական հանդէսներն աչքի էին ընկնում չը-
տեսնուծ շքով: Հասկանալի է ուրիմն, թէ ինչու
Վիկտորիան իւր կեանքի արևմուաքին չէր ուզում
այդ պատերազմը, չէր կամենում տալ իւր հաւա-
նութիւնը, որովհետեւ ամեն մի պատերազմ լի է
անսպասելի արկածներով և յուզմունքներով, որոնց
տանել չէր կարող թագուհու զառամեալ հասակը:
Այնու ամենայնիւ նա ոչինչ անել չէր կարող, հար-
կազրուած պիտի կատարէր մինիստրների կամքն և
հաստատէր պատերազմ մղելը:

Անգլիական սահմանադրութեան ոգու համեմատ
երկրի ծայրագոյն իշխանութեան տարրերից մէկը

թագաւորի իշխանութիւնն է, իսկ միւսը — պառլամենտը, այսինքն լորդերի և համայնքների պալատը: Այդ իսկ պատճառով թափաւորը, ինչպէս և պառլամենտը, օրէնսդրութեան իրաւունքը ունի: Նա է նշանակում կամ՝ աւելի ծիշա ասած, հաստատում գործադիր և դատաստանական իշխանութեան բարձրագոյն մարմնները: Նա է ժողովում և արձակում պառլամենտը, մինիստրների միջոցով օրէնքների նախագիծ է առաջարկում պառլամենտի խորհրդածութեան, և վերջապէս ամեն մի օրէնքի նախագիծ, որ երկու պալատներն ել ընդունում են, մինչև որ թագաւորը չվաւերացնէ, օրէնք չէ կարող գառնալ և թագաւորին է պատկանում վետօն (արգելում եմ) իրաւունքը: Թագաւորի այդ սահմանադրական իրաւունքներն իրօք միայն ձեւական են, որովհետեւ նա մի կրաւորական գործիք է իւր մինիստրների ձեռին, իսկ սրանք ել կատարում են համայնքների պալատի մեծամասնութեան կամքը: 19-րդ դարում ոչ մի գեպք չէ եղել որ մի բիլ (օրէնքի նախագիծ) պառլամենտում անց կենար, և թագաւորը չվաւերացնէր: Միայն ծայրայեղ գեպքերումն է օգտուել թագաւորը վետօն գնելու իւր իրաւունքից և այն ել այն օրէնքների նախագածի նկատմամբ, որ ընդունել է որ և է գաղութի պառլամենտը: Այդ գեպքերում ել թագաւորն իւր վետօն զբել է բրիտանական մինիստրների ցուցմունքով և այն ել այն ժամանակ, երբ այդ բիլը պատճառով կարող էր ընդհարում տեղի ունենալ Մեծ Բրիտանիոյ և մի որեւէ ուրիշ պետութեան միջև:

Անզլիայի թագաւորը նրանով է զանազան և պատմութեական հանրապետութիւնների նախագահներից, որ նա թագաւոր է ցմահ և կոչումը ժառանգական, մինչդեռ նախագահն ընտրում է որոշ ժամանակով, հետեւաբար և սահմանափակուած է նրա կոչումը: Մենք յետոյ կը տեսնեմք, որ իսկապէս Անզլիայում ցմահ թագաւորեկն և ժառանգական լինելը նոյնպէս պառլամենտից է, թէե նրա գլուշմի վրայ գրած է. «Dieu et mon droit» («Աստուած և իմ իրաւունքը»):

Թագաւորն Անդիլիայում ազգային միութեան ներկայացուցիչ է և, որպէս Բրիտանական կայսրութեան ներկայացուցիչ, ունի յայտնի պարտականութիւններ, որոնց համար նա ռոճիկ է ստանում: Թէ թագաւորի, թէ թագուհու և թէ ամբողջ ընտանիքի ռոճիկը պառլամենտն է նշանակում: Երբ այժմեան Էդուարդ VII թագաւորը գահ բարձրացաւ, համայնքների պալատում Բալֆուրը յայտնեց, թէ այս անգամ թագաւորը չի դիմելու երկրին, որ նրա պարտքը վճարեն, որովհետեւ մինչև գահ բարձրանալն եղած պարտքերն այժմ չկան (առաջուցին վճարուած): 1901 թ. մարտ ամին էլ համայնքների պալատում կարգացուեց թագաւորի հետեւալ թուղթը. «Նորին մեծութիւնը, կամենալով որ իւր որդու և աղջկերանց համար ապահովուած լինի համապատասխան ռոճիկ, և ապա կամենալով, որ նոյնպէս ապահովուած լինի նորին մեծութիւն թագուհին, եթէ նա աւելի ապրի, և որդու կինը, եթէ սա էլ ամօւսնուց աւելի ապրի, նրա վրայ է դարձնում իւր հաւատարիմ համայնք-

ների ուշադրութիւնը, և յստ է տաճում, որ
նրանք՝ կապուած լինելով իրեն հետ՝ գործ կը դնեն
այս դէպքի համար անհրաժեշտ միջոցներ։ Սովորաբար ամեն մի նոր թագաւոր այսպէս է դիմում
համայնքների պալատին, որ իւր կողմից խօփոյն մի
յանձնաժողով է ընտրում այդ գումարն որոշելու
համար։ Սահմանադրական ընդունուած սովորութեան համեմատ յանձնաժողովի անդամներն ընտրում են ոչ միայն մեծամասնութիւնից, այլև փոքրամասնութիւնից, նաև փոքրամասնութեան զանազան խմբերից, և այսպէս են անում այն նպատակով,
որպէսզի բնակիչների բոլոր խմբերը կարողանան ձայն տալ հասարակական փողը ծախսելու գործին։

Պալատն ընդունեց մեծամասնութեան նախադին
և որոշեց յատկացնել 470,000 ֆունտ ստերլինգ (1
ֆ. ս. հաւասար է մօտաւ. 10 ռ.) էղուարդ ՎՊ.
ին որպէս պալատական ծախք։ Այդ նախահաշիւը
կազմուծ էր հետեւալ կէտերից։ Զեռքի գումար կամ
թագաւորի և թագուհու մասնաւոր գրամարկը՝
110,000 ֆ. ս. *.
պալատաների ծախք՝ 193,000
ֆ. ս. պալատաների վերանորոգութեան՝ 20,000 ֆ.
ս., պալատական պաշտօնեաների ու ծառաների ծախք
և կենսաթոշակ՝ 125,800 ֆ. ս., թագաւորին և
թագուհուն նուիրաբերութիւններ անելու և ողոր-
մութիւն տալու՝ 13,200 ֆ. ս., արտկարդ ծախք՝
8000 ֆ. ս. Բացի զրանից պալատը 73,000 ֆ. ս.
յատկացնում է թագաւորի զաւակներին և վերջապէս

* Պէտք է իմանալ, որ թագաւորն ու թագուհին, ինչ-
պէս և բոլոր միւս քաղաքացիները, այդ գումարից եկա-
մուային հարկ են վճարում պետական գանձարանին.

մինչև 70,000 ֆ. ս. տալիս է թագաւորական տան
միւս անդամներին։ Այսպէս ընդհանուր առմամբ,
թագաւորական տան ծախքն Սնդիմային նստամ է
տարեկան 613,000 ֆ. ս. (մատաւորապէս 6 միլիոն
ռուբլի)։ Բայց զրա փոխարէն թագաւորական տու-
նը իւր ժառանգական հողերից և անտառներից ստա-
ցուող եկամուտը գտնձարանին է տալիս։ Յիշեալ
թուականին ֆինանսների մինիստրը յայտնեց հա-
մայնքների պալատում, որ եթէ թագաւորական տան
յատկացրած գումարից հանուի թագաւորական հո-
ղերից ստացուող և գանձարան մանող եկամուտը,
մնացորդը 33,000 ֆ. ս. կը լինի, և ահա այդ է
երկրի արած խական ծախքը թագաւորական տան
վրայ։

Յ. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ

Անգլիական սահմանադրութեան զլսաւոր սկզբունքները մարդի ու քաղաքացու իրաւունքներն են:

Մարդու բնական և անհապտելի իրաւունքն է ապրել աղաս լինել և ձգտել դէպի երջանկութիւն. կառավարութեան գոյութիւնն էլ նրա համար չէ, որ կողապատէ, հարկերով ծանրաբեռնէ, քարուքանդ անէ իւր քաղաքացիներին: Տարրական պահանջ է նոյնպէս, որ մարդ չվախենայ, թէ իւր գոյքըն ու կայքը կը կողապտուին կամ անձը բռնութեան կենթարկուի: Քաղաքացիական գոյութեան այս տարրական պահանջներն ապահովելու նպատակով անզլիանցիք նոյնպէս զէնքի են զիմել և զէնքի շնորհիւ ձեռք բերել աղատութեան առաջն պահովութիւնը: 1215 թ. «Ազատութիւնների Մեծ Քարտը», 1679 թ. անձի անձեռնմխելիութեան «Habeas Corpus» ակտը և 1689 թ. «Իրաւունքների օրէնքը» մինչեւ օրս էլ անզլիական ժողովրդի աղատութեան հիմունքն են: Անզլիացու համար նրանք մարմին և արիւն են դարձել, այնպէս որ կառավարութեան մի որ և է կամայականութիւնն արտակարդ բացառութիւն պէտք է համարել, և եթէ տեղի է ունենում մի այդպիսի կամայականու-

թիւն, ամեն կողմից բռւռն և միտհամռւռ ընդդիմացրութեան է արժանանում:

Ազատութիւնների Մեծ Քարտն անզլիսական ժողովի ազատութիւնների սկզբնական աղքիւրն է, դա մի պայմանագիր է, որ Անզլիայի բարոններն ու քաղաքացիները կապել են Յովհանն թագավորի հետ: Նա բաղկացած է 63 յօդուածներից, և 39-դում առաջ է. ոչ մի ազատ մարդ չէ կարող ձերբակալուել, բանտարկուել, ազատութիւնից կամ օրէնքների հովանաւորութիւնից զրկուել, աքսորուել կամ մի ուրիշ պատժի ենթարկուել առանց իրեն հաւասարների դատաստանի և երկրի օրէնքների: 12, 14 և 63 յօդուածներով ժամանակակից պառլամենտի հիմքն է դրուած, իսկ 63-ը նշանաւոր է և նրանով, որ Մեծ Քարտի անթերի գործադրութիւնն է ապահովում: Բոլոր բարոններն իրենց միջեց 25 մարդ են ընտրում և նրանց վրայ պարտականութիւն դնում հսկելու, որ ազատութիւնները չլսախառուեն: Եթէ թագաւորն որ և է զեղծումն անէ և չորս բարոնի պահանջով 40 օրուայ ընթացքում չուղղէ, այն ժամանակ բոլոր 25 բարոնները կարող են բռնութիւն գործ դնել թագաւորի զէմ: կարող են նրանից խլել հողերն ու ամրոցները, խնայելով միայն նրա անձն ու ընտանիքը: Կորաքանչեւր ոք կարող է հնազանդութեան երգումն առաջ 25 բարոններին և նրանց հետ միասին ճնշել, նեղել թագաւորին, մինչեւ որ առ կուղղէ իւր սխալը:

Խեքն ըստ ինքեան հասկանալի է, որ թագաւոր ներն օգտաւում էին ամեն մի յարմար դեպքից ժողովրդի կորզած աղասութիւնները խախտելու:

Նոյն իսկ Յովհաննը՝ մի ամիս չանցած ստորագրելուց յետոյ, պապից իրաւունք է խնդրում խախտելու, որով և խոռվութիւն ձգում ժողովուրդի մէջ: Միւսներն էլ հետեւում են Յովհաննիքաղաքականութեանը, և միայն XVI դարի յնցափոխութիւնը վերջ տուեց թագաւորի բռնութիւններին: և քաղաքացիների կոիւներին: Այնու ամենայնիւ Աղասութիւնների Մեծ Քարտը հիմնաքար եղաւ ուրիշ կուլտուրական երկրներում էլ իրաւական կարգեր մացնելու:

Այսպէս, անզլիտական ժողովուրդը դարերի ընթացքում աշխատում է երկրում իրաւական կամ իրաւունքի տիրապետութեան սկզբունքը մացնելու և ամրացնելու քաղացիների համար: Այնտեղ ամեն մի քաղաքացու հիմնական իրաւունքն այն է, որ օրէնքով պաշտպանում է իւր անձնու դոչքը—անձեռնմխելի են իշխանաւորների կողմից: Օրէնքների նոյն հովանաւորութիւնը վայելում է և ամեն մի օտորագիի, որ կարող է ազատ ապրել և ման գալ բրիտանական սահմաններում առանց ենթարկուելու ձերբակալութեան ու բանտարկութեան, եթէ չկայ օրինակական հիմք—պէտք է դատաստանական վեճու լինի: Եթէ մէկը բռնուում է առանց իրաւաբանական հիմքի, անբաւարար պատճառով, դատարանը պարտաւոր է իսկոյն աղաքելում նրան: Քաղաքացու սեպհականութիւնն էլ պաշտպանում են դատարանն ու համայնքների պալատը. առանց սրա համաձայնութեան ոչ մի հարկ օրինական չէ:

Թէպէտ անձի և գյոքի անձեռնմխելութեան ըսկզբունքն արտայայտուած է Աղասութիւնների Մեծ Քարտում, բայց նա առաջնակարգ տեղ բռնեց ան-

զիխացիների հասարակական կեանքում աւելի ուշ, մանաւանդ անձեռնմխելութիւնը, որի ապհովութիւնն այնքան էլ կատարեալ չլինելով՝ 1679 թ. Կարլ II-ի օրով պառլամենտն ընդունեց Հabeas Corpus (Հարէտս Կորպուս) յատուկ օրէնքը: Նախկին որոշումներն այդ մասին այնքան էլ ձիշտ չէին մշակուած, ուստի այդ թուականին պառլամենտը նորից քննեց և վերացրեց այդ օրէնքի թերութիւնները:

«Հարէտս Կորպուս Ակտի» հիման վրայ ամեն մէկը, որ կարծում է, թէ ապօրինի է ազատութիւնից զրկուած, ձերբակալուած, կարող է զիմել դատարանին և ստանալ «Հարէտս Կարպուսի» հրամանագիրն այն մարդու անունով, որ պահում է բռնուածին, որպէսզի նա ձերբակալուածին դատարանին ներկայացնէ և բացատրէ, թէ ինչու համար է նրան բանտարկուած պահում: Առաջնականի որ այդ օրէնքան ուշադիր չէին լինում բանտարկուածի ինդիքտին՝ «Հարէտս Կորպուսի» հրամանզիրը տալու, կամ եթէ նրանք տալիս էին, բանտարկուածի չէին կատարում: Սակայն 1679 թ. մշակուած օրէնքով դատաւորները պարտական են ամեն մի դէպըում այդ հրամանը տալու, բացի միայն այն դէպից, երբ ձերբակալուածը մեղադրում է պետական դաւաճանութեան կամ թէ մի ուրիշ քրէտական յանցանքի մէջ: Դատաւորները պարտական են ոչ միայն դատաստանական նիստերի, այլ և արձակուրդի ժամանակ տալ այդ հրամանը, և եթէ մերժեն 500 ֆ. ո. տուգանքի են նութարկում: «Հարէտս Կորպուսի» հրամանը ստանալու

խնդրագիրը կարող է ներկայացնել ոչ միայն բանտարկուածը, այլ և նրա հաւատարմատարը, ազգականներն և մինչեւ անգամ օտարները, որոնք նրա օգտի համար են աշխատում: Եթէ բանտի տեսուչը կամ նրա փոխանորդը և ժամանայ ընթացքում չտայ ձերբակալութեան հրամանի պատճէն, առաջին անգամ 100 ֆ. ս. տուգանքի է ենթարկուում, երկրորդ անգամ—200 ֆ. ս. և պաշտօնից արձակուում: «Հարէաս Կորպուսի» հրամանն ստանալուց յետոյ բանտի տեսուչը կամ նրա փոխանորդը պարտաւոր է 3—20 օրում բանտարկուածին ներկայացնել գատարանին և մանրամասն զեկուցում տալ թէ երբ, ինչ պատճառով և ինչ հանգամանքներում է նա բռնուած: Եթէ բանտապետն այդ չանե, առաջին անգամ տուգանք է վճարում յօգուտ բանտարկուածի 100 ֆ. ս., երկրորդ անգամ—200 ֆ. ս. և պաշտօնից արձակուում է: Եթէ բանտապետը բանտարկուածին բերէ գատարան և հրաժարուի ճըշմարիտ բացարութիւններ առլու գատաւորի առաջարկած հարցերին, նա կարող է իսկոյն և եթ ձերբակալել բանտապետին և դատի մատնել դատարանի կարգադրութիւնները. չկատարելու համար: Գործի հանգամանքները քննելուց և երկու կողմի բացարութիւնները լսելուց յետոյ՝ դատարանը վճիռ է կայացնում, որով բանտարկուածը բոլորովին է ազատուում, կամ երաշխատորութիւնը կամ զրաւականով կամ թէ նորից բանտ է գնուում:

Ինչ վերաբերում է պետական դաւաճանութիւնն և կամ ծանր քրէական յանցանքի մէջ մեղաղը-

ուողներին, օրէնքը պահանջում է, որ ձերբակալութեան թղթի մէջ պարզ ու որոշ ասած լինի, թէ ինչ է մեղաղըուողի յանցանք: Բացի զրանից, այդպիսի մեղաղըուողներին օրէնքն իրաւունք է տալիս խնդրել որ դատարանը նրանց գործի քննութիւնն առաջին անէ: Եթէ այդ անթիւնն առաջիկայ նիստին անէ: Եթէ այդ անկարելի է, դատարանը պարտաւոր է զրաւական վերջնել և կամ երաշխատորութեամբ աղատել այն պայմանով, որ մեղաղըուողը հետեւալ նիստին պարկայ կը դանուի: Եթէ երկրորդ նիստին էլ մեղաղըուողի գործը չքննուի, այն ժամանակ նա բոլորովին աղատուում է:

Սրտակարգ գէպեկրում կարելի է դադարեցնել «Հարէաս Կորպուսի» գործադրութիւնը, բայց միայն պառլամենտի երկու պալատների համաձայնութեամբ: Դադարեցնել կարիլի է ամենաշատը մի արով և էլի շարունակելու համար նոր օրէնք է հարկաւոր: Իւր հրատարակման առաջին թուականից 1679—1745 թ. ինն անգամ դադարեցրած է եղել. իսկ յետոյ՝ 1794, 1798, 1799 և 1800 թ.: Տասն և իններորդ դարում իուլանդիայում յածախ է պատահել:

Պէտք չէ կարծել, որ «Հարէաս Կորպուսի» դադարեցման հետ դադարում են և միւս օրէնքները, որոնք պաշտպանում են քաղաքացիական և քաղաքական աղատութիւնները: Կառավարութիւնը դադարեցնում է միշտ քաղաքական յանցանքների դարեցնում է միշտ քաղաքական յանցանքների պատահական յետագելու նպատակով: Սակայն ձերբակարունակ յետագելու նպատակով: Սակայն ձերբակարունակ ոչ մի կերպ չեն կարող եթէ ոչ միայն օրէնքով լել ոչ մի կերպ չեն կարող եթէ ոչ միայն օրէնքով

արդելուած գործի համար: Կինում են և դէպքեր,
որ գաղարեցման ժամանակ զայրացած կառավարու-
թիւնը դուրս է գոյխ օրինականութեան սահմանից,
և այդպիսի դէպքերում տուժողը կարող է դատ
բանալ կառավարութեան դէմ: Կառավարութիւնն
էլ այդպիսի գատերից ազատուելու համար Աճարէաս
Կորպուսի» գաղարեցման ժամանակը լրանալուց մի
քիչ առաջ Բիլլ է ներկայացնում պառամենտին,
որ տեղի ունեցած այդպիսի ազօրինի գործերը ներ-
ուին և ներւում են: Կառավարութիւնը՝ լաւ իմա-
նալով, որ եթէ ոչ նիւթապէս, գոնէ բարոյապէս
պատասխանատու պիտի լինի իւր օրինազանցութիւն-
ների համար, շատ էլ չափ ու սահմանից դուրս չէ
գալիս:

1688 թ. Անգլիայում տեղի է ունենում մի խա-
ղաղ յեղափոխութիւն: Երբ Յակոբ II արու զաւակ
ունեցաւ, ամենքն երկիւղ կրեցին, որ ապագայ թա-
գաւորը կաթոլիկ կըլինի, ուստի դիմեցին Վիլհելմ
Օրսնեանին, որ այդ ժամանակի հողանդական հանրապե-
տութեան կառավարին էր և ամուսնացած Յակոբ II
-ի Մարիա աղջկայ հետ, (իսկ սա բողոքական էր) և
խնդրեցին, որ զայ Անգլիա բազոքականութիւնն ու
անգլիական օրէնքները պաշտպանելու: Վիլհելմը ե-
կաւ, առանձին պառամենտ ժողովնց, որ յայտնի է
«Կոնվենցիա» անունով: Այդտեղ որոշուեց, որ Յա-
կոբը հրաժարուել է գահից, որովհետեւ Ֆրանսիա էր
փախել և գահը Վիլհելմին առաջարկուեց: Այս դէպ-
քը, ինչպէս նկատեցինք նախընթաց զլիում,
նշանաւոր է այն կողմից, որ պառամենտը թա-
գաւորից բարձր է հանգիսանում, պառամենտն է

գահ առաջարկում: Նցյալ տեղի է ունենում և 18
դարում, երբ պառալամենտն որոշում է, թէ Վիլհելմի
մահից յետը ով պիտի ժառանգէ անգլիական գահը:
Պարզ է, որ պառալամենտն իրեն է վերապահում
եկրի գերագոյն իշխանութիւնը:

Վիլհելմն անգլիական գահը բարձրանալուց յետոյ
մի շատ կարեոր օրէնք ստորագրեց, այն է՝ «Իրա-
ւունքների օրէնքը»: Վիլհելմից առաջ պահանջում
էին, որ պառալամենտը ասրին գոնէ և անգամ հաւա-
քուի, իսկ նոր օրէնքով պահանջւում էր, որ շուտ
շուտ հաւաքուի: Թագաւորն իրաւունք չունէր ընդ-
հատել օրէնքի գործադրութիւնն առանց պառամեն-
տի համաձայնութեան, իրաւունք չունէր ազտել
ում և իցէ օրէնքի դրած պարտականութիւններից,
և ոչ էլ հարկ չպիտի վճարէր, եթէ պառամեն-
տը չը նշանակի: «Իրաւունքների օրէնքը» նորից
ապահովում է պառամենտի անդամների ազտառու-
թիւնը կողմնակի իշխանութիւնից: Թագաւորն իւր
իշխանութեամբ կամ կամքով չը կարող նոր հո-
գեոր կամ ուրիշ դատարան հաստատել Գատաս-
տանական հաստատութիւնները վերականգնեցին, նո-
րից յետ ստացան իրենց իրաւունքներն ու նշա-
նակութիւնը: Դատաւորներն անփոփոխելի և ի-
րենց վարքի համար պատասխանատու եղան միայն
կատաստանական կարգով: «Իրաւունքների օ-
րէնքն» արգելեց թագաւորին խնդրագիր ներկայաց-
նողներին հալածել կամ բանտարկել: Առանց պառ-
ալամենտի թոյլուութեան արգելուեց խաղաղ ժամա-
նակ զօրք պահել և դրանով վերջ դրին թագաւոր-
նակ փորձերին ժողովրդի գէմ զօրք հանելուն: Պառ-
ների փորձերին ժողովրդի գէմ զօրք հանելուն:

լոմենաը, որպէս ազգային հաստատութիւն, հասաւ իւր բարձր աստիճանին: Վերջապէս բողքականներն անձնապաշտպանութեան համար զէնք ունենալու իրաւունքն ստացան, իրաւունք ստացան և պառլամենտի անդամ ընտրելու և այնտեղ ամեն բանի մասին ազատ խօսելու:

Օրէնքի հիման վրայ ամեն մի անգիտացի իրաւունք ունի ազատօրէն յայտնելու իւր միաքը թէ տպագրութեամբ և թէ խօսքով ուրիշների վրայ աղջելու. համար, պատասխանատու լինելով միայն այն վասի համար, որ կարող են տալ նրա խօսքերը կամ հրատարակութիւնները: Լրագրական յօդուածների ու զրքերի հեղինակները, ժողովրդի մէջ ձառախօսութիւն անող հռետորներն և համանան անձինք պատասխանատութեան են ենթարկում ապստամբական կոչ, անբարոյական կամ դայթակղեցուցիչ հրատարակութիւններ տարածելու, հասարակութեան այս կամ այն գասակարգերի միջեւ թշնամութիւն յարուցանելու, պետական իշխանութեան հեղինակութիւնը կոտրելու, քրիստոնէութեան զէմ քարոզելու համար: Եւ որովհետեւ կարելի է այդպիսիներին հետամուտ լինել գատաստանական ձանապարհով, ուստի ուրիշ տեսակ պատիժներ չկան: Գրաքննութիւնն Անդլիայում դեռ ևս 1695 թ. են վերացրել: Մնացել է միայն զրամատիկան գրուածների զրաքննութիւնը, որ թոյլարում է կամ արգելում արքունիքի մինիստր:

Անդլիայիներն իրաւունք ունին հաւաքուելու հաստրակական տեղերում՝ խօսելու, երգելու, այս կամ այն ուղղութեամբ զնալու, եթէ միայն զրանով չեն

խանգարում ուրիշի իրաւունքը: Տասը հազար մարդ կարող է հաւաքուել մի տեղ ժողով անելու, որվհետեւ նրանցից ամեն մէկն իրաւունք ունի կանգնելու՝ ինչ տեղ որ ուղում է, եթէ միայն ուրիշն չէ խանգարում: Ժողովներում ամեն մէկն իրաւունք ունի ասելու, ինչ որ ուղում է, որովհետեւ նրան արգելուած չէ փողոցում խօսել՝ ում հետ էլ որ ուղենայ, թէկուզ տասը հազար լող լինի: Բայց ի հարկէ ամեն մէկն էլ պատասխանատու է, եթէ նրա ձառը վեասում է ուրիշներին, գատապարաելի է որպէս ապստամբական կոչ և այլն: Եյդ ժողովներին սստիկանութիւնը ներկայ է լինում միայն կարգապահութեան համար: Եթէ կարգապահութիւնն ակներեւ կերպով խանգարում է, սստիկանութիւնը՝ իւր վրայ առնելով պատասխանատութիւնը զատաստանի առաջ, առաջարկում է ժողովականներին ցրուել:

1688 թ. արդիւնքներից մէկն էլ եղաւ խղճի ազատութիւնն Անդլիայում: իւրաքանչիւր քաղաքացին իրաւունք ունի գատանելու՝ ինչ կրօն և կամի, միանալու աստուածպաշտութեան համար՝ ինչ խմբի հետ և կամի, իւր կրօնական հայեացքները քարոզելու կամ տպագրական խօսքով տարածելու համար: Նոյն իսկ հրէաների իրաւունքները հաւասարուեցին քրիստոնեաների իրաւունքի հետ մի շարք օրէնքներով, որոնց զլիաւորները հրատարակուեցին 1846 թ.: Սակայն պետական եկեղեցին չկորցրեց իւր իրաւունքների և առաւելութիւնների ոյժն: 1827 և 1829 թ. վերացուեց պետական և քաղաքային պաշտօնների համար երգման անդլիական ձեւը: 1871

թ. նոյն ելտումը վերացուեցաւ և համալսարանական կազմակերպութիւնների համար: 1858 թ. համայնք-ների պալատի նիստերին մասնակից լինելու երդումից հանեցին «Համաձայն քրիստոնէական հաւատի» խօսքերը, պառլամենտի անդամ ընտրուած հրէաների յամառ մաքառումից յետոյ, 1888 թ. Բրադ-լոյի գործից յետոյ, որ յայտնի էր որպէս «աղնոսաբիկոս» այսինքն՝ չհաւատացող հարկ եղաւ տմենեին հրաժարուել երդուելու պարտաւորութիւնից: Սակայն կառավարութիւնն իրաւունք ունի պահանջելու, որ յիսուսեանները թողնեն երկիրն և հեռանան: Եթէ գումար է կտակւում այս կամ այն եկեղեցուն հանգստեան պատարագ մատուցանելու և կամ գերեզմանի վրայ յաւիսենական վառ կանթեղ պահելու, — գատաստանն այդպիսի կտակները չեն վաւերացնում: Բայց և այնպէս խղճի աղատութիւնն անդիական ժողովրդի սեպհականութիւնն է:

4. ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Դատաստանական հաստատութիւններն Անգլիայում ոչ միայն մասնաւոր մարդկանց վէճերըն են քննում և յանցաւորներին քրէական պատասխանաւութեան ենթարկում, այլ և քաղաքական գեր են կատարում: Հին ժամանակները գատարանների գերը սահմանազրական կարգ հաստատելու գործում շատ մեծ էր, որովհետև վիճելի գէպքում իրաւունքի զարգացումը գատաստանական վճռով էր կայանում, ոչ թէ օրէնսդրութիւնով: Այժմ այդպէս չէ, որովհետև շատ քիչ են այնպիսի սահմանազրական կարգեր ու կանոններ, որ պառլամենտը հաստատած կամ աւանդութիւնը վաւերացրած չլինի: Բայց և այնպէս գատարաններն այժմ էլ մեծ գեր են խաղում:

Դատաստանական հաստատութիւններն այնպիսի գիրք ունեն Անգլիայում, որ գործազիր իշխանութիւնները միանգամայն դրկուած են նրանց հակառակ գործելու հնարաւորութիւնից և հպատակների վերաբերմամբ կամացականութիւններ բանեցնելուց: Երբ մի որեւէ գատաւոր նոր միայն ստանձնում է իւր պաշտօնը, երդման ժամանակ ասում է, որ ոչ մի պայմանով նա զրաից չպիտի ընդունի

անձնական հրաման կամ ազգեցութիւն, նոյն իսկ
թագաւորից:

Անզլիայում ընդհանուր դատաստանի առաջ ա-
մենքը հաւասարապէս պատասխանատու են. պաշ-
տօնական անձնց համար առանձին դատաս-
տան չկայ, չկայ և կառավարչական դատաս-
տան: Կառավարչական մարմինների անդամներն ի-
րենց վարմունքների համար պատասխանատու են
ընդհանուր դատաստանի առաջ, և իրաքանչիւր ոք
պատասխանատու է առանձնապէս, այնպէս որ սառ-
րադրեալները չեն կարող արդարանալ պատճառա-
բանելով թէ իշխանաւորս է այդպէս հրամայել:
Եթէ ոստիկանը կոտրէ մի մասնաւոր բնակարանի
դուռ, կարող է պատասխանատութեան տակ ընկ-
նել եթէ մինչեւ անդամ ինքը ներքին դործոց մի-
նիստրը հրամայած լինի, որ նոյնպէս պատասխա-
նատու կը լինէր, եթէ այդպիսի ապօրինի հրաման
առած լինէր: Զկայ մի այնպիսի բարձրաստիճան
մարդ Անզլիայում, որին կարելի չլինի դատի կան-
չել և նոյն իսկ թագաւորական տան անդամները դա-
տարանին են զիմում, երբ ուզում են իրազործել
իրենց մասնաւոր իրաւունքները:

Անզլիական իրաւունքը չգիտէ, թէ ինչ է պաշար-
ման դրութիւն և կամ երկիրը, կամ երկրի մի մասը
յանձնել զինուորականների կառավարութեանը: Յն-
կարգութիւնների ու խռովութիւնների դէպքումնրանց
վերջ տալու և «Թագաւորի հանգստութիւնը» պաշ-
պանելու համար հրաւիրում են թէ զինուորական
ոչմեր՝ ոստիկանութիւնն ու կառավարութիւնը և
թէ բոլոր քաղաքացիները: Ի հարկէ այդ ժամանակ

կարող են տեղի ունենալ ընդհարութեր, և ան-
կարգութիւն անողներից կարող են վիրաւորուած-
ներ և մինչեւ անգամ սպանուածներ լինել: Սակայն
անկարգութիւն անողներին բայցի ընդհանուր դա-
տարանից ոչ ոք չէ կարող ոչ ոք իրաւունք չունի
պատժելու: Բոնութիւններին բոլոր մասնակցողներին
կարելի է դատի տալ, որ և երգուեալների մասնակցու-
թեամբ կրվաճակների անհրաժեշտ այդ անկար-
գութիւնները, թէ ոչ և չափազանց դաժան չե՞ն եղել:

Որպէսզի զատաստանական իշխանութիւնն իւր
վսեմ կոչման վրայ մնայ և քաղաքայիների խսկա-
կան ազատութիւնն ամեն կողմից ապահով լինի, ան-
հրաժեշտ պայման է, որ դատաստանը անկախ լինի:
Մեծնշանակութիւն չունեցող դատերը, ոստիկանական
յանցանքներն ու մանր քրեական գործերը հաշտա-
րար դատաւորներն են քննում՝ կամ իրաքանչիւ-
րըն առանձին, կամ զոյզ-զոյզ. իսկ տարին չորս
անգամ չորս-չորս հոգի հաւաքւում են երգուեալ-
ների մասնակցութեամբ բողոքներն ու կարեոր գոր-
ծերը քննելու: Հաշտարար դատաստրի պաշտօնը ձրի
է, պատուի պաշտօն է: Սովորաբար զրանց ընտրում
են զահի ներկայացուցիչները՝ դաւառական լորդ-լէ-
տենանտները: Սակայն սովորութիւն էլ կայ, որ
նշանակում են յարգանք վայելող և ունեոր ան-
ձեր, որոնք պատրաստ են իրենց ժամանակը զահե-
լու հաշտարար դատաստրի պաշտօնը կատարելու
համար: Ներկայումն քաղաքներում այդ պաշտօնը
կատարում են թէ պատուի դատաւորներ, այլ
վարձուածներ, որոնց ընտրում են քաղաքացին հաս-
տառութիւնները:

Դատաստանական իշխանութեան Հեղինակութիւնը պահպանելու գործում, անշուշտ, մեծ նշանակութիւն ունին դատաստանական բարձր ատեանները: Դատառական ատեաններում, վիճաւորապէս քաղաքացիական գործերի դատավարութեան համար դատաւորներին կանցլերն է նշանակում: Դրանց վճիռների դէմ բողոքելու համար պէտք է Ուկասմինստր զիմել վճռարեկ ատեանին: 1873 թ. օրէնքի համաձայն այս դատարանը Ծայրագոյն Դատարանի մի բաժանմունքն է, ուր, բացի վերոյիշեալ գործերից, քննուում են առաջին անգամ կարեռագոյն քաղաքացիական և մի քանի քրէական գործեր: Ամենակարևոր քրէական գործեր քննում են երդուեալների մասնակցութեամբ Ծայրագոյն Դատարանի յանձնաժողովները, որոնք քաղաքից քաղաք են շրջում: Կառավարչական հարցերի և բիւրոկրատների ձեռքով կառավարուող գաղութների գործերի համար բարձրագոյն ատեանը Գաղանի Խորհրդարանի Դատաստանական Յանձնաժողովն է, որ բաղկացած է չորս դատաւորից: Իսկ ընդհանրապէս բոլոր հարցերի վերաբերմամբ՝ իրաւունքի ձեական գործադրութեան կողմից, վերջնական խօսքը պատկանում է լորդերի պալատի Դատաստանական Յանձնաժողովին:

Բարձրագոյն դատարանների անդամներն այնպիսի պայմանների մէջ են զրուած, որ միանգամայն անկախ և Հեղինակաւոր լինեն: Այդ պաշտօնի նշանակուելու համար նրանք պիտի ունենան գույն տասնեւհինգամեայ իրաւաբանական գործունեութիւն: Նրանք ահազին ուղարկներ են ստանում—մօ-

տաւորապէս 5000 ֆ. ս. (50,000 ս.): Խոճիկները հաստատուած են օրէնքով և նոյն իսկ որպէս շնորհ չէ կարելի աւելացնել: Դատաւորները նշանակուում են այնքան ժամանակով՝ ոորքան ոք նրանք իրենց պահում են այնպէս, ինչպէս հարկն է, կամ ուրիշ կերպ ասած, անփոփոխելի են: Դատաւորին կարելի է փոխել միայն այն ժամանակ, երբ նա իւր պաշտօնում մի որ և է զեղծումն կամ քրէական յանցանք է գործում և կամ երբ պառլամենտի երկու պալատները վճիռ են կայացնում: Դիտմամբ են այդպէս արել ոք դատաւորներն անկախ լինեն, որպէսզի կառավարչական մարմինների կողմից ձնշումն գործ չլուուի նրանց վրայ:

Դատաստանական գործավարութիւններին մասնակցում են և երդուեալները, հասարակական խըզնի այդ ներկայացուցիչները: Ոչ միայն քրէական գործեր քննելիս անպայման հարկաւոր է երդուեալների որոշումը, այլ և շատ քաղաքացիական գործերի համար, ինչպէս՝ երբ վնասների զատ է լինում, որ յաջախակի պահանջում են կառավարութեան ներկայացուցիչներից, որոնք մի որ և է կերպով խախտել են այս կամ այն քաղաքացու իրաւունքները: Մամուլի, խղճի, ժողովների ազատութիւններն իսկապէս կախուած են երդուեալների լուրջ վերաբերմունքից դէպի իրենց պարտականութիւնները, որովհետեւ յիշեալ ազատութիւնները սահմանափակելու համար ուրիշ ոչ մի ձանապարհ չկայ, եթէ ոչ դատաստանական վճռով երդուեալների որոշումնից: Ամեն մի ծառայող որ իւր իրաւունքների սահմանից դուրս է դալիս, կարող է դա-

աի տակ ընկնել. սյսպէս՝ եթէ ոստիկանը ցրւում
է ամբոխը, երդուեալները կըքննին և կըգնահա-
տեն՝ ունէր նա իրաւունք այդ անելու, թէ ոչ եւ
անգլիացիների համար երդուեալների մասնակցու-
թեամբ գատավարութիւնը մի անհրաժեշտ հաստա-
տութիւն է դարձել:

5. Պ Ա Ռ Լ Ա Մ Ե Ն Տ Ը

ա) Հնդկանուր խօսք պարամենտի մասին: Հրդերի
պալատը:

Անգլիայում ծայրագոյն իշխանութիւնը կենտրոնա-
ցած է պառլամենտում, որ բաղկացած է երկու պա-
րատներից—Վերին կամ Լորդերի պալատից և Ներքին
կամ Համայնքների պալատից: Ամեն մի իշխանաւոր
այնտեղ գործում է միայն որպէս ժողովրդի ներկա-
յացուցիչ: Թէպէս թագաւորն և լորդերի պալատն ի-
րենց իշխանութիւնը ժողովրդից են ստանում: Սա-
կայն ժողովրդի խսկական ներկայացուցիչը հա-
մայնքների պալատն է, որովհետեւ այդ պալատի
անդամներին ժողովուրդն է ընտրում, հետեա-
բար իրենց իրաւունքն ու լիազօրութիւնը նրանք
ժողովրդից են ստանում: Ամեն մի պատգամաւոր ժո-
ղովրդի ներկայացուցիչն է համարում: անկախ է և
ազատ իւր կարծիքն յայնելու, մինչև որ լիազօրու-
թեան ժամանակը կըլլանայ: Ընտրողներն ոչ մի կեր-
պով չեն կարող սահմանափակել պատգամաւորի
կամքն ու ազատ կարծիքը: Բայց ընտրուելուց ա-
ռաջ պատգամաւորն էլ պիտի ծանօթացնէ ընտրող-
ներին իւր ծրագին՝ հասարակական և քաղաքական
հիմնական, էական հարցերի վերաբերութեամբ, և
պատիւն էլ պահանջում է պատգամաւորից, որ նա իւր

յայտարարած կարծիքներին հակառակ չգնայ պառլամենտում: Եթէ պատգամաւորը չարդարացնէ ընտրողների տածած յոյսը, միւս անգում նրան չեն ընտրիլ:

Անգլիայում երկիրն իսկապէս կտուավարում է պառլամենտը, և երկրի բոլոր իշխանութիւնները նրան են ստորագրուած, որպէս երկրի զիստոր, գերազոյն օրէնքրական հաստատութեան, որ կարող է իւր վըճռն, որոշմանն ենթարկել բոլոր միւս հաստատութիւնները, իսկ ինքը չէ ստորագրուում և ոչ մի վճռի:

Երկրի ծայրագոյն իշխանութիւնը պառլամենտին է պատկանում: Ճիշտ է, թագաւորն ունի իրաւունք օրէնքի նախազիծ առաջակելու պառլամենտին, բայց միայն այդքան: Հաւասարապէս և թագաւորի քաղաքականութիւնը՝ եթէ միայն պառլամենտը հակառակ է, երբէք նշանակութիւն չէ կարող ունենալ: Թագաւորի վետ զնելու իրաւունքն իրօք գյութիւն չունի, որովհետեւ չէ գործադրուում: Մի խօսքով, անգլիական պառլամենտն ամենակարող է. միայն չէ կարող ինչպէս իրենք անգլիացիք են ասում, տղամարդուն կին դարձնել և կնոջը—տղամարդ: Ի հարկէ իւր այդ անսահման իրաւունքներից նա օգտուում է ստեղծել և փոփոխել սահմանադրութեան կանոնները: Պէտք է ասել և այն, որ անգլիական սահմանադրական իրաւունքի շատ էական դրութիւններն աւանդութեամբ են հասաւատուած և որոշ օրէնքների չեն յինուում, և սակայն վրանից բնուու չի նուազում նրա զօրութիւնը:

Պառլամենտը հաւաքւում է թագաւորի պատուերով և ոչ աւելի քան եօթը տարի ժամանակով: Լորդերը հրաւէր են ստանում, իսկ 670 ընտրողական շըր-

ջանին հրաման է ուղարկւում համայնքների պալատի համար պատգամաւորներ ընտրել: Ներկայումս անգլիական շրջանները 495 պատգամաւոր են ընտրուում, Շոտլանդիան—72 և Իռլանդիան—103: Լոնդոնը 62 պատգամաւոր է ուղարկում, որոնցից 2 Սիտին է ընտրում:

Այժմ Անգլիայում ամեն մի չսփահաս տղամարդ ընտրելու իրաւունք ունի, եթէ նա սեպհականատէր է կամ տուն, կրպակ, պահեստ, գործարան և կամ հող է վարձում: Ընտրելու իրաւունք ունին և բնակարան ու սենեակ վարձողները, եթէ տարեկան 10 ֆ. ս. պակաս վարձ չեն վճարում առանց կարասիքի: Կանայք գեռ ես ընտրելու իրաւունք չունին: Այդ բոլորի հիման վրայ միացեալ թագաւորութեան քառասուն և մէկ միլիոն վեց հարիւր հազար բնակչոց 6,822,000 մարդ ընտրելու ձայն ունի:

1901 թ. լորդերի պալատը բաղկացած էր 592 ուշեց*: Դրանցից 520 պատկանում էին անգլիական ազնուական տոհմերին, որոնց մեծերը ժառանգական իրաւունք ունին վերին պալատում: 16 հոգի շոտլանդական ազնուականների ներկայացուցիչներ էին, որոնք 1707 թ. միութեան հիման վրայ իւրաքանչիւր պառլամենտի համար առանձին են. ընտրուում: 28 հոգի իուլիսնդական ազնուականութեան ներկայացուցիչներ էին: 1801 թ. միութեան հիման վրայ սակայն զրանց ներկայացուցչութիւնը ցմահ է. 2 արքեպիսկոպոս և 3 եպիսկոպոս իրենց աստիճանի իրաւունքով, 10 ուրիշ եպիսկոպոս ըստ աւագու-

* Անգլիայի բարձր դասակարգի մարդիկը, բարոնները:

թեան ձեռնապրութեան, և գատաստանական լորդ ի-
րենց պաշտօնի իրաւունքով:

Բայց թագաւորը կառավարութեան խորհրդով
իրաւունք ունի Անգլիայում անթիւ նոր պէրեր
նշանակելու, իսկ իունաղիայի համար այն հաշով,
որ տիտղոսակիր տոհմերի թիւը՝ 100 աւելի չլինի:
Շոտլանդական պէրեր նշանակելու իրաւունքը նա
չլինի: Թէպէտ լորդերի պալատում զանազն դասա-
կարգի մարդիկ են, թէպէտ իրենց հմտութեամբ և
փորձառութեամբ աչքի ընկնող պետական մարդկանց
հետ կան և բազմաթիւ աննշան և օրէնսդրութեամբ
և կառավարական գործերով քիչ հետաքրքրուող
մարդիկ, բայց և այնպէս անգլիացիները գնահատում
են վերին պալատը, որովհետև ժողովրդապետական
պետութեան քաղաքական կեանքում նա չափաւորու-
թիւն պահպանող մի գործօն է:

Համտձայն օրէնքի՝ լորդերի պալատի անդամներն
իրաւունք չընեն մասնակցելու համայնքների պալա-
տի անդամների ընտրութեան և ձառներ խօսելու յօ-
գուտ իրենց կուսակցութեան թեկնածուների: Լորդ-
կանցը, որ մինխարների կարինետի անդամ է,
միենոյն ժամանակ լորդերի պալատի սպիկերը կամ
նախագահն է, Համայնքների պալատի սպիկերը չէ-
զոք պիտի լինի, վեճաբանութիւններին չէ հարող
մասնակցել, իսկ լորդ-կանցը լորդերը, ինչպէս մինխար,
պատականելով կառավարող կուսակցութեանը, միւս
պէրերի պէս զիմում է պալատին և խօսում:

Լորդերի պալատում յանձնաժողովի համար անդամ-
ներ իրենք են ընտրում, և այդ պաշտօնների համար
նրանք առաջին վարձատրութիւն են ստանում:

Լորդերի պալատան իւր կազմով և ոզով աւելի
պահպանողական հաստատութիւն է: Հաշուել են, որ
պալատին մասնակցող լորդերի անշարժ կայքը Մեծ
Բրիտանիոյ վեցերորդ մասն է կազմում: Նրանք
միշտ պատրաստ են ամեն մի ձանապարհ փակելու,
որ տանում է զէպի իրենց հայրենակիցների վիճա-
կի բարուոքումը: Բայց անգլիական դէմակրատիան
խոշնդրոն հեռացնելու համար կարիք չունի յեղա-
փոխութեան դիմելու, որովհետեւ, երբ երկու պալատ-
տների միջև ծագում է մի լուրջ, սկզբունքի տա-
րածայնութիւն, միշտ կարող է աւելացնել լորդերի
թիւը, ինչքան ուղենայ: Նախանձելի չէ այն պետա-
կան կազմն, այն սահմանադրութիւնն, որի զարգաց-
ման համար բացի յեղափոխութիւնից ուրիշ ձա-
նապարհ չկայ: Եւ անգլիական սահմանադրութիւնն
իւր թերութիւններով հանգերձ եւրոպական բոլոր
սահմանադրութիւններից կատարեալն է:

Մի ժամանակ Գլագուսոնը, երբ նա չկարողացաւ
յաջողեցնել հոմքուլի բիլը, ու զում էր ոնչացնել
լորդերի պալատը, սակայն դա շուտով, մօտ ապա-
գայում չէ կարող իրագործուել, որովհետեւ Անգլի-
այի ժողովուրդն արմատական փոփոխութիւններ չէ
սիրում*: Այդ պատճառով կարող է խօսք լինել մի-
այն այդ պալատը վերանորոգելու, նրա իրաւունքնե-
րը սահմանափակելու մասին: Իոլանդացի Մակնելլը

* Առաջին լեղափոխութեան ժամանակ 1649 թ. ոչնչացրել
են լորդերի պալատը, բայց երբ Ստիւարտները նորից Անգլիա
վերադարձան, լորդերի պալատն էլ վերականգնեց:

Յայտնի է, որ ներկայումս կրկին յարուցուած է այդ հարցը,
բայց դեռ ևս առանց հետևանքի:

մինչև անգամ հաւատացնում է, թէ ոչ մի բարենորդումն անելու կարիք չկայ, պէտք է մացնել հին, բայց վաղուց արդէն մոռացուած օրէնքը, այն է լորդերին պալատ հրաւիրելու թագաւորի իրաւունքը: Նա ասում է, բաւական է չկանչել այն լորդերին, որոնք հակառակում են համայնքների պալատի մեծամասնութեան կամքին, և բանը պրծած է, որովհետեւ նրանք պալատու չեն գալ: Բայց Անզլիայում ոչ մի մինխար իւր վրայ չի առնիլ այդ միջոցին դիմելու պատասխանաւուութիւնը, որովհետեւ դրա հետեւանքը կարող է ներքին խռովութիւն լինել:

Աւելի գործնական են այն նախագծերը, որոնք ուղղուած են լորդերի պալատի նետօ զնելու իրաւունքի դէմ: Համաձայն այդ նախագծերի, եթէ մի բիլ համայնքների պալատն երկու անգամ ընդունում է, իսկ լորդերի պալատը մերժում, ու յուր օրէնք է դառնում, եթէ երրորդ անգամ համայնքների պալատում անց է կենում:

Մի այդպիսի բարենորոշում, անշուշտ, կըկսարէր լորդերի պալատի յետադարձական ցյժն և միաժամանակ համայնքների պալատին էլ օրէնսդրական հաստատութեան բնաւորութիւն կըտար:

Բ) Պառլամենտական կառավարութիւն.

Մենք ասացինք, որ ժամանակակից սահմանադրական պետութիւններում թագաւորը կամ նախագահն ինքն անձաւիր ոչինչ անել չէ կարող թէ օրէնքներ հրատարակելու և թէ քաղաքականութեան այս կամ այն ընթացքը տալու կողմից: Գործ անողները մինխարներն են, և այդ

պատճառով էլ պատասխանաւուութիւնն էլ նրանց վրայ է ծանրանում: Անզլիայում մինխարութիւնը պատասխանաւու է բացառապէս համայնքների պալատի առաջ, թէպէտ ազատ չեն և զատաստանական պատասխանաւուութիւնից: Դատաստանական պատասխանաւուութեան են ենթարկում ապօրինի գործերի համար, իսկ համայնքների պալատի առաջ՝ ազգի համար վնասակար և սխալ միջոցներ գործ դնելու պատճառով: Եւ ահա այդ բոլորից երեք զրութիւն է առաջ գալիս: 1) Թագաւորի անպատասխանաւուութիւնը, 2) մինխարների պատասխանաւուութիւնը և 3) որ անմիջապէս բղնում է նախարնթաց երկու դրութիւնից՝ թագաւորը չպիտի հրատարակէ և չէ էլ հրատարակում ոչ մի ակտ առանց համապատասխան մինխարի մասնակցութան և ստորագրութեան:

Անզլիայում այդ զրութիւններն այնպէս են զարգացել, որ ոչ մի կառավարչական կամայականութիւն տեղի ունենալ չէ կարող: Անզլիայում, ասում է Դայսին, իւրաքանչեւր պաշտօնական անձ, սկսած առաջին մինխարից մինչև վերջին ոստիկանը կամ հարկահանը, ամեն մի ապօրինի գործի համար նոյն պատասխանաւուութեան է ենթարկում, որին և միւս քաղաքացիները:

Տասն և չորրորդ զարում մինխարին գատի յանձնելու համար համայնքների պալատը պիտի մեղադրէր նրան լորդերի պալատի առաջ, որպէս բարձրագոյն գատաստանական տաեանի: Ներկայում մինխարներին օրէնքով խիստ հետամուտ չեն լինում, պատժելու տեղ նրանց պաշտօնից հեռացնում են,

Եղբա համար բաւական է որ համայնքների պալատը վստահութիւն ցցց չտայ: Լորդերի պալատի կողմից վստահութիւն ցցց չտալն ոչ մի նշանակութիւն չունի մինիստրների համար. այդ կողմից գերակշռող է համայնքների պալատը: Մինիստրները համայնքների պալատի մեծամասնութեան ներկայացուցիչներն ու նրա կամքի արտայայտիչներն են: Երբ այդ մեծամասնութիւնն այլ ևս հաւատ չէ ընծայում կարինեան, մինիստրները հրաժարական են տալիս:

Պառլամենտական կառավարութիւն կամ կարինեաի կառավարութիւն լինում է այն երկրներում, ուր կայ ժողովրդի ներկայացուցչութիւն, և իշխանութիւնը բաժանուած է լինում՝ օրէնսդրականն առանձին, զործագիրը կամ կատարողականն առանձին: Գործադիր իշխանութեան ներկայացուցիչը պետութեան զլուխն է լինում, այն է թագաւորը կամ նախագահը, սակայն բոլոր զործերը կանիսապէս որոշում, վճռում են բոլոր մինիստրները միասին: Թէպէտ թագաւորը մինիստր ընտրելու և արձակելու իրաւունքն ունի, բայց իրօք ընտրողը պառամենտն է: Որ կուսակցութիւնը համայնքների պալատում մեծամասնութիւնն է կազմում, այն կուսակցութիւնից էլ ընտրուում է առաջին մինիստրը, սովորաբար կուսակցութեան պարագլուխը, իսկ յետոյ սա էլ միւսներին է ընտրուում և կարինեատ կազմում: Իրենք մինիստրները պալատի անդամ պիտի լինեն: Երբ վերը կուսակցութեան պարագլուխը, կարինեատ է կազմակերպում, աշխատուում է մի ուղղութեան մարզկանց հրաւիրել և այդ պատ-

թառով թագաւորը կամ նախագահը միայն առաջին մինիստրին է նշանակում. իսկ յետոյ սա էլ իրեն համար օգնականներ է ընտրուում և պաշտօններ բաժանուում նրանց: Բոլոր մինիստրները միասին կարինեատ են կազմում, և առաջին մինիստրը նրանց զլուխն է: Խորհրդակցութիւնների ժամանակ թագաւորի փոխարէն նա է նախագահում և պալատի առաջ նա է խօսում կարինեատի կողմից: Պալատները հսկողութիւն ունին մինիստրների զործունէութեան վրայ և նրանց գործ զրած միջոցների ու կարգադրութիւնների մասին հարցումներ են անում: Սակայն մինիստրների պատասխանատուութիւնը զուտ քաղաքական է և ոչ քրէսական, և եթէ համայնքների պալատը, ինչպէս ասացինք, հաւատ չէ ընծայում մինիստրներին, ամբողջ կարինեատը հրաժարական է տալիս: Իսկ եթէ մինիստրներից մէկն է պարտութիւն կրում իւր արած մի որեւէ զործի պատճառով, այն ժամանակ մենակ նա է հրաժարում, և կարինեատը շարունակում է իւր զործունէութիւնը: Հաւատ ըլնծայել մինիստրին նշանակում է հրամայել նրան, որ հեռանայ, և այդ կողմից կարծես թէ պալատն ոչ միայն օրէնսդրական, այլ և զործադիր իշխանութիւն ունի: Պետութեան զլիսի զերն էլ այն է, որ զեկավարէ մինիստրներին. նա կարող է համամիտ և համակարծիք չլինել մինիստրներին, կարող է չթողնել այս կամ այն կարգադրութեան զործադրութիւնը և կարինեատի միջոցով երկիրը կառավարել ի հարկէ, դուրս չգալով օրէնքների ու հրահանգների սահմանից: Այդ գէպում պետութեան զլիսի մասնակցութիւնը կախու-

ած է նրա անձնական յատկութիւններից և հայեցքներից: Նա կարող է և կրաւորական դեր խաղալ, ամեն ինչ թողնելով առաջին մինհստրին կամ կարինեալին, և միայն յարգանք ու պատիւ վայելել, և ընդհակառակը՝ կարող է եռանդուն մասնակցութիւն ունենալ երկիրը կառավարելու գործում: Ներկայումս սովորաբար կարինեան է կառավարում, իսկ թագաւորը չափաւորութիւն և հաւասարաշղութիւն պահպանող մի տարր է: Պետութեան գլուխը մի ուրիշ էական իրաւունք էլ ունի զիմալրելու պալատի կամքին, այն է՝ պատգամաւորների լիազօրութեան եօթնամեայ ժամանակը չըրացած արձակել պառլամենտը, երբ տեսնում է, որ նա չէ համապատասխանում ազգի շահերին: Սակայն այս դէպքում էլ մինհստրներն իրենց վրայ են առնում պատասխանատւութիւնը: Ճիշտ է, երբեմն նրանք այդ անում են ոչ թէ ազգի շահերն աչքի առաջ ունենալով այլ իրենցը: Բայց պառլամենտն էլ խիստ միջոցներ ունի կատարողական իշխանութիւնն իւր կամքին ենթարկելու: այդ միջոցն այն է, որ կարող է մերժել տարեկան բիւջէն, իսկ Անգլիայում բացի զրանից, կարող են մերժել զօրք պահելու և նրա վրայ ծախսք անելու իւրաքանչիւր տարի նորոգուող լիազօրութիւնը:

Թէպէտ պառլամենտն արձակելու իրաւաբանական իշխանութիւնը թագաւորին է պատկանում, սակայն այդ սպառնալիքին զիմելու կարիք չէ լինում, որովհետեւ հասարակական և քաղաքական կեանքի զանազան դէպքերի և կուսակցական պայքարների պատճառով մինհստրները՝ լիազօրութեան

ժամանակը չըրացած՝ հրաժարում են և զիմում թագաւորին, որ պառլամենտն արձակէ ժողովրդի կամքն իմանալու համար, և նոր ընտրութիւնն են սկսում:

Երբ կարինեալը տալիս է իւր հրաժարականը, նա հպատակւում է, ինչպէս վերն ասացինք, համայնքների պալատի մեծամասնութեան կամքին, որի անդամներն երկրի ընտրած ներկայացուցիչներն են: Այդ հպատակութիւնը ցոյց է տալիս, որ ընտրողները կողմնակի կերպով ձայն ունին երկրի գործում: Բնականաբար, երբ ժողովուրդը պարզ յայտնում է իւր կամքը, գործադիր իշխանութիւնն անմիջապէս պիտի խոնարհուի նրա կամքի առաջ: Այդպէս էր հասկացել Բիկոնսֆիլդն ընտրողների իրաւունքը: 1868 թ. ընտրութիւններին յաղթութիւնը տարան ազատամիտները: Պահպանողական լորդ Բիկոնսֆիլդն (որ այդ ժամանակ մինհստր էր Դիզրայէլ անունով), չէ սպասում, մինչև որ նոր պառլամենտը բացուի, այլ անյապաղ հրաժարում է: Այդ ժամանակից ի վեր սահմանագրական սովորութիւնն է գարձել խիզյն և եթ հրաժարական տալ եթէ ընդհանուր ընտրութիւններին ընտրողները ներկայ մինհստրների դէմ են լինում: Գլազուունըն էլ միշտ հետեւում էր Բիկոնսֆիլդի օրինակին: Միայն 1892 թ. Առիւտերին հնարաւոր համարեց սպասել, մինչեւ որ պառլամենտը կըբացուի, որովհետեւ այդ թուականին ազատամիտներն ընտրութեան ժամանակ աննշան տուաւելութիւն ստացան և այդ մեծամասնութեան մէջ էլ վճռական ձայնն իուլանդացիներինն էր:

Սահմանավրութեամբ պատգամաւորների լիազօրութիւնն եօթը տարի է: Այդ ժամանակամիջոցում պառլամենտը հնարաւորութիւն ունի իրադրժելու իւր օրէնսդրական իշխանութիւնն ոչ միայն այն յատուկ հարցի նկատմամբ, որ ընտրողական ծրագրի կենտրոնական հարցն էր, այլ և արտաքին ու ներքին քաղաքականութեան բազմաթիւ հարցերի վերաբերութեամբ, որոնց առթիւ ընտրողները միջոց չէին ունեցել իրենց կարծիքն յայտնելու ընտրութիւնների ժամանակ: Այդպէս էր, օրինակի համար, 1900 թ.: Կառավարութիւնն արձակում է պառլամենտը, որպէս զի ժողովուրդը կարողանայ իւր կարծիքը յայտնել—ընդունում է Զեմերլէնի քաղաքականութիւնը հարաւային Աֆրիկայի նկատմամբ, կամենում է պատերազմ՝ մղել, թէ ոչ: Ընտրողները չուզեցին ծիշա այդ ժամանակ, երբ պատերազմն արդէն մղւում էր, փոխել մինիստրների սկսած գործն և պալատ ուղարկեցին պահպանողական մեծամասնութիւն 132 մարդու առաւելութեամբ: Այսպէս ուրեմն ժողովուրդը հաւատ ընծայեց պահպանողական կուսակցութեան և կառավարութեան, իշխանութիւնը նրան տուեց եօթը տարի ժամանակով, որպէս զի նա յաջողութեամբ վերջացնէ պատերազմը: Բայց պատերազմը 1½ տարի տևեց, և պահպանողական կուսակցութիւնը սկսեց զբաղուել զանազան հարցերի վերաբերեալ օրէնսդրութիւնով և, ի հարկէ, իւր կուսակիցների օգտին: Սահմանադրութեան հիման վրայ այդ մինիստրութիւնը կարող էր իւր գործողութիւնը շարունակել մինչև 1907 թ. և անթիւ օրէնքներ հրատարակել, որոնց

ժողովուրդը թերեւս իւր հաւանութիւն չէ տալիս: Այդպէս՝ պատերազմը վերջացնելուց յետոյ մինիստրութիւնը դպրոցական օրէնքներ հրատարակեց, առաջնակարգ անհրաժեշտ իրերի վրայ հարկեր դրեց, զինուորական օրէնքներ մշակեց և այն: Բայց արդեօք այդ նոր օրէնքները համապատասխանում էին բնակչութեան մեծամասնութեան կամքին, թէ, ընդհակառակը, նրա կամքը բռնաբարւում էր: Զէ՞ որ 1900 թ. ընտրութիւններին այդ հարցերի մասին ամեններն խօսք չէր եղել թեկնածուների կողմից առաջարկուած չէին նրանք: Միւս կողմից էլ, երբ պատերազմը վերջացաւ, առաջ եկան նորանոր հասարակական հարցեր: օրինակ՝ արդիւնաբերութիւնն ընկած լինելու պատճառով՝ առաջ եկաւ անգործ մնացած բանուորներին օգնելու հարցը: Եւ 1900 թ. ոչ կառավարութիւնն և ոչ էլ համայնքների պալատն ոչնչէ յանձնաբարութիւն չէին ստացել այդ հարցերի նկատմաբ: Ի՞նչ արած այդպիսի դէպքում: Սպասել մինչև նոր ընտրութիւնները՝ երկար է, ե., բացի դրանից, այդ ժամանակամիջոցում կառավարութիւնը ու պառլամենտն ինչքան աղէտ կարող են հասցնել ժողովրդին:

Այդ վտանգի առաջն առնելու համար Անգլիայում զյութիւն ունին մասնակի ընտրութիւններ, որոնք որոշ չափով գուշակում են, թէ մօտակայ ընդհանուր ընտրութիւններն ինչ բնաւորութեամբ պիտի լինեն: Այդ ընտրութիւններով ընտրողները միջոց են ունենում քուէարկութեամբ յայտնելու իրենց կարծիքն այն բոլոր դէպքերի մասին, որ աեղի են ունեցել վերջին ընդհանուր ընտրութիւններից յե-

այց: Իրաւ է, ձայն է տալիս մի շըջան, մի նոհաննդ, այսինքն ընտրողների սահմանափակ թիւ, բայց եթէ այդ շըջանի ընտրողները խիստ կարծիք յայտնեն գոյութիւն ունեցող կառավարութեան դէմ, եթէ պառլամենտ ուղարկեն հակառակ կուսակցութեան՝ ընդդիմադրող թեկնածուներ, և եթէ երկրի զանազան շըջաններում կատարուող մասնակի ընսրութիւնները նոյն հետեանքը տան, այն ժամանակ պարզ է, որ կառավարութիւնը չէ վայելում երկրի վրատահութիւնը, և կարինեար կամաց կամաց այդ հանգամանքն աչքի առաջ պիտի ունենայ: Նոր ընտրուածներն ամեն օր յիշեցնելու են կարինեարին նրա արածները. նրանց հետ միտսին յիշեցնելու է և մամուլը, որ այդ դէպքերում կարուկ և անողոք կերպով քննադատում է կառավարութեան արածներն և աւելի ևս տարածւում: Վերջապէս, որ և ամենադլխաւորն է, կարինեարին կըյիշեցնեն սեպհական կուսակցութեան այն անդամները, որոնք ստէպ ստէպ, դաւածանելով անցնուում են ընդդիմադրականների կողմը: Պատգամաւորները, տեսնելով որ երկրի քաղաքական կեանքը փոխւում է և երկիւղ կրելով, որ պառլամենտը ժամանակից առաջ կարող է արձակուել և նոր ընարութիւններ նշանակուել, ձեռնպահ են մնում կառավարութեան կողմից առաջարկուած այն օրէնքները քննելիս, որոնք անհաճոյ են ժողովրդին: Նախկին կուսակիցներից մի քանիսն անցնուում են ընդդիմադրողների կողմը, և որովհետեւ սրանք միշտ միահամուռ են գործում, կառավարութեան մեծամասնութիւնը կամաց կամաց պակասում է և ուղառնում մի օր փոքրամասնու-

թիւն դառնալ: Այս հանգամանքներում ի՞նչ պիտի անէ կառավարութիւնը: Անշուշտ պէտք է արձակել պառլամենտը, նոր ընտրութիւններ նշանակել, որ ժողովուրդը մեծամասնութեան հայեացքներին համապատասխան նոր պալատ ընտրէ:

Այդպէս էր Բալֆուրի մինիստրութիւնը, որ մի շարք կարևոր հարցեր անց կացրեց, իսկ ձեռնպահ մնաց այնպիսիներից, որոնք առաջարկուած էին ժողովրդի զանազան խմբերից: Ի՞նչ դիլք բոնեց ժողովուրդը կառավարութեան այդ տեսակ քաղաքականութեան վերաբերմամբ: Բուրերի հետ պատերազմ սկսեցին պահպանողականները, ընդհանուր ընտրութիւններին կառավարութիւնը մեծամասնութիւնն ստացաւ, որով ընտրողները վաւերացրին այդ պատերազմը. պատերազմ մղելիս մասնակի ընտրութիւններին ընտրողների մեծամասնութիւնն էլ կառավարութիւններին կողմը բոնեց: Բայց երբ պատերազմը վերջացաւ և մասնակի ընտրութիւններ եղան, ընդդիմադրականներն աշազին մեծամասնութիւն կազմեցին 3272 ձայնի առաւելութեամբ: Դա պարզ ապացոյց էր, որ ընտրողների արամադրութիւնն փոխուել էր, և կառավարութիւնն ու պառլամենտը չէին վայելում ժողովրդի վատահութիւնը: Սահմանադրութեան հիման վրայ այդ ժամանակ կառավարութիւնն և պառլամենտը զեռ ևս ըրս տարի էլ կարող էին իշխանութիւնն իրենց ձեռքում պահել բայց միենոյն սահմանադրութեան օգու և սովորութեան համաձայն պառլամենտը պիտի արձակուէր, և նոր ընտրութիւններ պիտի նշանակուէին: Բայց եթէ այդպիսի դէպքում պառլամենտը չէ արձակուում, զրա-

պատճառն այն է, որ հակառակ բանակում անշուշտ պառակտութիւն կայ, հետևաբար և մեծամասնութիւն կազմելու քիչ յոյս:

Վերն ասածներից պարզ երեսում է, թէ ինչքան մեծ նշանակութիւն ունին մասնակի ընարութիւնները: Այդ ընարութիւնները լինում են այն ժամանակ, երբ համայնքների պալատի անդամներից մեկը մեռնում է կամ կամաւորապէս հրաժարւում է: Բացի դրանից՝ Անգլիայի սահմանադրութեան ոգու համաձայն, կայ էլե երկու դէպք, երբ մասնակի ընարութիւններ են նշանակում: Առաջին դէպքն այն է, երբ ընարողները գժգոհ են իրենց պատգամաւորի ընթացքից պալատում: Այս դէպքում ընարողական կոմիտէն հրաւիրում է ընարողներին և իւր պատգամաւորին և նրանից բացատրութիւն պահանջում պալատում նրա բռնած դիրքի մասին: Եթէ այդ ժողովում ընարողների մեծամասնութիւնը հաւատ չէ ընծայում իւր պատգամաւորին, նա հրաժարւում է, և ապա նոր ընարութիւններ են նշանակում: Մասնակի ընարութիւններ անելու երկրորդ արտակարգ առիթն էլ այն է լինում, երբ ժողովով ներկայացուցիչը պետական պաշտօն է ստանում ռոճիկով: Ենթագրում է, որ ներկայացուցիչը մի այդպիսի պաշտօն ստանալուց յեաց որոշ չափով կորցնում է իւր անկախութիւնը, հետևաբար և պէտք է հնարաւորութիւն տալ ընարողներին, որ նրանք յայտնեն իրենց կարծիքը՝ կամենում են փոխարինել նրան ուրիշ անձով, թէ ոչ: Հարկաւ կառավարութիւնը պաշտօններ է տալիս իւր կուսակցութեան մարդկանց և որովհետեւ չէ ու զում անցածողու-

թիւն ունենալ մասնակի ընարութիւններին, այդ պատճառով էլ պաշտօն է տալիս պալատի այն անդամին, որ առաջ ձայների աշագին առաւելութեամբ էր ընարութիւնները մի կամ երկու ամսով ընդհատում են, մինչև որ նոր պատգամաւոր ընարութիւն յեաց արդէն վերսախն սկսւում է նրա գործունէութիւնը: Բայց եթէ մասնակի ընարութիւններից յեաց ընարողներն ընդդիմագրական կուսակցութիւնից ներկայացուցիչը ուղարկեն հնի փոխարէն, դա արդէն նշան է, որ կառավարութեան վարին ընկնում է:

Այսաեղ աւելուկ չենք համարում աւելացնել որ պալատները կամ պառլամենտն իրաւունք ունին նիստերի ժամանակի պատասխանաւութեան հնմարկել և կամ բանտ գնել իրենց անդամներից մէկն կամ նոյն իսկ կողմանակի մարդու՝ տուած արածութիւնները խախտելու կամ անպատճառ վարմունքի համար. օրինակ, ապօրինի կերպով նիստին ներկայ լինելու, սպիկերի կամ կանցլերի կարգադրութեանը չնաղանդուելու համար և այն:

Բայց դրանից պալատներն արտօնութիւն ունեն իրենց կարգապահութիւնը չխախտելու համար պատահի զնել ամեն մէկի վրայ, ով որ կը համարձակուի չճանաչել սպիկերի կամ կանցլերի, պալատի սովորութիւնների ու պահանջների հեղինակութիւնը: Իսկ ամենաէականնը պառլամենտի աղաւատութիւնն է. 40 օր պառլամենտի նստաշընանը բացուելուց առաջ, 40 օր էլ փակուելուց յեաց նրանց ձերբակալել չէ կարելի: Նիստերի ժամանակ նրանք

կատարեալ ազատութիւն ունին, վիճաբանութիւնների ժամանակ ազատօրէն կարող են յայտնել իրենց կարծիքն առանց ենթարկուելու որ և է պատմի:

գ) Օրէնսդրութեան եղանակը:

Անդլեական կառավարութիւնն իրաւունք չունի անկախօրէն օրէնքներ հրատարակելու. այդ իրաւունքը պառլամենտին է: Թէ թագաւորը, թէ լորդերի և թէ համայնքների պալատներն օրինագիծ առաջարկելու իրաւունքն ունին: Լորդերի պալատի անդամն այդ կարող է անել առանց կանխապէս թցյլութիւն ստանալու, իսկ համայնքների պալատի անդամն առաջուց պիտի ստանայ իւր պալատի հաւանութիւնը: Սովորաբար օրէնսդրութիւնն իւր ըսկիզբն առնում է ներքին պալատում, և որովհեան մի կարեոր դէպքում նաև պարտադիր է համայնքների պալատի նախաձեռնութիւնը, ուստի մենք կը պատմենք, թէ ինչպէս է կատարւում օրէնսդրութիւնը, երբ նա համայնքների պալատի կողմից է առաջարկուում: Օրէնքի նախագիծը կամ՝ ինչպէս առում են, բիլն երկու տեսակ է լինում՝ պետական և մասնաւոր. պետական, երբ նրանք պետութեան շահերն են պաշտպանում, մասնաւոր՝ երբ մասնաւոր մարդկանց կամ ընկերութիւնների շահերին են վերաբերում: Սովորաբար բիլ առաջարկողը լինում է կառավարութեան անդամներից մէկը:

Մի որևէ պետական օրէնք անց կացնելու համար պալատի անդամներից մէկն առաջարկութիւն է առում՝ յայտնելով զրա մասին: Եթէ պալատի կող

մից արգելք չէ լինում, նա տալիս է իւր հաւանութիւնն, և առաջարկութիւն անող անդամը մըտցնում է այդ բիլը, միւսներն էլ պահպանում են: Բիլը պալատի առենադպրին ներկայացնելուց յետոյ՝ առաջին անգամ կարդում են առանց վիճաբանութիւնների, ուզարկում են տպելու և տպաօր նշանակում երկրորդ անգամ կարդալու համար: Եթէ ընդդիմագրականներն առաջարկեն, որ բիլն երկրորդ անգամ ն ամսից յետոյ կարդացուի, դա նշանակում է, թէ նրանք բոլորովին չեն ուզում ընդունել այդ բիլը: Երկրորդ անգամ կարդալիս քննում են, թէ առաջարկուած օրինագիծն որքան նպատակայարմար է: Եթէ պալատի մեծամասնութիւնն ի նպաստ առաջարկուած բիլի է յայտնում իւր կարծիքը, այն ժամանակ նա յանձնում է ամբողջ պալատի կոմիտէի քննութեանը, և այդ ժամանակ նախագահում է ոչ թէ սպիկերն, այլ կոմիտէի նախագահը: Եւ որովհետեւ սպիկերն ունի իւր առանձին գաւազանը, գաւազանապահը վերցնում է այն սեղանի վրայից և տանում: Առաջուց է այն սեղանի վրայից և տանում: Դրա քննում է այդ կոմիտէին տուած հրահանգը: Դրա նախագահը պալատի անդամներից է լինում, և նա չէզօք պիտի լինի, և պաշտօնը վարձատրում է: Կոմիտէի նիստերն ազատ են աւելորդ ձևականութիւններից, և իւրաքանչիւր անդամ իրաւունք առնդ երբ օրինագծի նկատմամբ տարածայնութիւն չէ լինում կուսակցութիւնների մէջ, և կամենում չէ լինում կուսակցութիւնների մէջ, և կամենում են լաւ մշակել բիլը: Կառավարութեան կողմից

առաջարկուած բիլլերն մասնապէաներ՝ իրաւունքի զանազան ճիւղերի հետ քաջ ծանօթ անձեր են կազմում:

Իւրաքանչիւր բիլլ բաղկացած է լինում յառաջաբանից, յօդուածներից կամ պրակներից և ծանօթութիւններից: Յանձնաժողովում օրինապիծը յօդուած առ յօդուած կարգացւում է, երբեմն տողտող, այդ ժամանակ ուղղում են և առաջարկներ անում լրացնել ուրիշ յօդուածներով: Երբ յանձնաժողովը կարգում է, քննում և լրացնում բիլլը պալատը քննում է և վճռում թէ պէտք է կարգալ երրորդ անգամ, կամ յետ է ուղարկում յանձնաժողովին նորից քննելու, կամ ամբողջապէս և կամ մի մասն ուղղելու համար: Եթէ բիլլը յանձնաժողովում առանց փոփոխութիւնների է անց կենում, իսկոյն երրորդ անգամ են կարգում, և այդ ժամանակ միայն բերանացի կարելի է ուղղել թերութիւնը, իսկ ապա՝ պալատն իւր վերջնական կարծիքն է յայտնում նրա մասին: Դրանից յետոյ հրամայում են համայնքների պալատի տաենադպրին, որ բիլլը տանէ լորդերի պալատն և «խնդրէ նրանց աջակցութիւնը»: Այստեղ առաջին անգամ կարգում են բիլլն և կարգալուց յետոյ տամն և երկու օրուայ ընթացքում պալատի անգամներից մէկն առաջարկութիւն պիտի անէ երրորդ անգամ կարգալու, հակառակ դէպքում՝ նըշանակում է, որ պատրամենուի այդ նստաշրջանում բիլլը չէ քննուելու: Սովորաբար երրորդ անգամ էլ կարգում են, և նոյնն է ինում, ինչ որ և համայնքների պալատում: Եթէ լորդերն ուղղում են

անում, բիլլը վերադարձնում են համայնքների պալատին, բայց արքելով թէ ինչու համար են ուղղումներ մտցնել: Համայնքների պալատը կարող է պատասխաննել նրանց այդ թղթին: Առաջներն այդպիսի դէպքերում երկու պալատի ներկայացուցիչը ները խառն ժողով էին անում համաձայնութիւն կայացնելու նպատակով, բայց դա վերացել է, և վերջին այդպիսի ժողովն եղել է 1386 թ.: Լորդերը սահմանադրական իրաւունք ունին պնդելու իրենց ուղղումների վայ և մինչև անդամ մերժել այն բիլլերն, որոնց հետ համաձայն չեն, և այդ իրաւունքին նրանք յաջախ են զիմել ՏՎ դարում: Նրանց ընդդիմադրութիւնը կարող է իրական յաջողութիւն ունենալ այն ժամանակ, երբ հասարակական կարծիքը բաւականաշափ որոշուած և միացած չէ: Օրինակի համար, իուլիսդական հարցի նըկատմամբ շատ շուտ պարզուեց, որ անզիւհայիների մեծ մասը չէ ուղում զիջումներ արած լինել իռլանդացիներին, ուստի և Գլազառոնի կազմակերպած ազատամիտ մեծամասնութիւնը շուտով քայլայուեց: Այլ է, եթէ լորդերն ընդդիմադրում են այն վերանորոգութիւններին, որոնց հասարակական կարծիքը պահպանում է: Այդպիսի դէպքերում նրանց քը պաշտպանում է: Այդպիսի դէպքերում նրանց գիմադրութիւնը միայն առ ժամանակ գագարեցնում է գործի ընթացքը, և վերջ ի վերջը նրանք ցնում է գործի ընթացքը, և վերջ ի վերջը նրանք ատիպում են զիջումն անելու: Եթէ լորդերը մեծ յամառութիւն ցոյց տան և կամենան իրենց ասածըն անել, համայնքների պալատը, ինչպէս առաջըն անու համայնքների պալատը, ինչպէս առաջապահների, նրանց գէմ կոռւելու լաւ գէնք ունի ասացինք, նրանց գէմ կոռւելու լաւ գէնք կարող է այնքան նոր պէրեր նշանակել, որքան

պէտք կըլինի ձայների մեծամասնութիւնն ունենալու համար: Այդպիսի դէպքեր երբէք աեղի չեն ունեցել, միայն 1832 թ., պառլամենտում վերանորոգումներ մտցնելիս, առաջին մինիստր լորդ Գրէյն ստացաւ թագաւորի համաձայնութիւնն, որ նա, եթէ կարիք լինի, նոր պէրեր կընշանակէ, սակայն վերջին րոպէին լորդերի պալատը զեջեց: Գործերի սովորական ընթացքի ժամանակ լորդերի պալատը համարեա միշտ՝ վաղ թէ ուշ, համամիտ է լինում համայնքների պարտախն, և բիլն օրէնք է զառնում, երբ թագաւորը հաստատում է: 1707 թ. վերջին դէպքն է եղել, երբ բիլն երկու պալատումն էլ ընդունուել է, բայց թագաւորն իւր վետօն է զրել: Թէպէտ վետօնելու իրաւունքը չէ փոխուած, բայց իրօք նա այլևս գցութիւն չունի: Եւ երբ թագաւորը հաստատում է, համայնքների պալատի անդամները նոյն հանդիսով հրաւիրում են լորդերի պալատը թագաւորի համաձայնութիւնը լսելու:

Դրամի վերաբերեալ բիլլեր միշտ կառավարութիւնն է առաջարկում, թէ ինչ բանի դրամ պէտք է յատկացնել ինչ հարկեր գնել ժողովրդի վրայ կամ ինչ տուրքեր վերցնել նրանից: Պառլամենտի առանձին առանձին անդամները կարող են ընդհանուր բնաւորութեամբ վճիռներ առաջարկել թէ այս ինչ կամ այն ինչ բանի վրայ որքան դրամ ցանկալի է մսիսել բայց որոշ օրինադիմ միայն կառավարութիւնն է առաջարկում: Այդ սովորութեան նպատակն այն է, որ ֆինանսական հարցերում խոյս տան բաժան-բաժան և ընտածուած ձեռնարկութիւններից: Յետոյ՝ ներքին պալատում երկու յանձնագո-

զով կայ այդ հարցերի համար, որոնցից մեկը խորհում է և քննում, թէ ինչ գործի համար և որքան փող պէտք է նշանակել, որ զանազան մինհստրութիւններ պահանջում են. իսկ միւսը քննում է, թէ ինչ միջոցներով և ձանապարհներով կարելի է այդ ծախսերը ծածկել: Եւ եթէ մուտքի աղբիւրները չեն կարող ծածկել ծախքերը, մտածում են, թէ ինչ նոր հարկեր գնեն:

Հորդերն իրենց զիրքով ընդհանուր առմամբ չեն կարող հարկատուների ներկայացուցիչներ համարուել ուստի և ֆինանսատկան բիլերը մշակում են միայն համայնքների պալատում, և լորդերը չեն մասնակցում այն հարցերի քննութեանը, որոնք վերաբերում են ժողովրդի վրայ հարկեր գնելուն և առուրք առնելուն։ 1860 թ. համայնքների պալատը դրականապէս յայտնում է իւր օրոշումը դրա մասին, չէ թողնում, որ այդպիսի բիլերում լորդերը մի որևէ է փոփոխութիւն կամ ուղղումն մտցնեն, այլ և մերժեն կամ հաստատեն, այնպէս որ լորդերի մասնակցութիւնը ֆինանսատկան բիլերի քննութեան գործում լոկ ձեականութիւն է։

Մասնաւոր մարդկանց, երկաթուղիների կամ ու-
րիշ հասարակական նշանակութիւն ունեցող գործե-
րի բիլերը նցյ ձեռվ են քննուում: Բիլյն առաջար-
կում է անդամներից մէկն, և նախապէս ձեականու-
թեան կողմից խնդիրը քննուում են երկու պալատից
ընտրուած առանձին քննիչներ: Ձեականութիւնից
յիտոյ բիլն երկու անդամ կարդում են ներքին և
վերին պալատում և ապա յանձնում են մասնաւոր
բիլեր քննող յանձնաժողովներից մէկին, որոնք սո-

Վորաբար հինգ հոգուց են բաղկացած լինում: Յանձնաժողովը հրաւիրում է ինդրատուներին և նրանց հակառակորդներին, կանչում և հարցուփորձ է անում վկաների, տեղեակ և մասնագէտ մարդկանց, առ հասարակ գործում է, որպէս մի դատասահնական հաստատութիւն: Վերջ ի վերջոյ այդ առթիւ նա զեկուցումն է ներկայացնում պալատին, որ և վճռում է—ընդունմէ, թէ մերժել բիլլը: Եթէ ընդունումն է, ընդհանուր կարգով դնում է լորդերի պալատը:

Դ) Պառլամենտի նիստերը:

Երբ համայնքների պալատի անդամների ընարութիւններն, որոնց մասին կրխօսենք հետեւեալ յօդուածներից մէկում, վերջանում են, թագաւորի կողմից եղած ծանուցման համաձայն, պալատներն առանձին-առանձին գումարուում են: Բայց պառլամենտի բացուելուց առաջ համայնքների պալատի անդամները «սև գտազան» կրողին միջոցով հրաւիրում են լորդերի պալատը, և այդտեղ մեծ հանդիսով բացուում է: Երբ ամենքը հաւաքւում են, լորդ-կանցլերը յայտնում է, որ երբ բոլոր անդամները կերպուին, թագաւորը կը յայտնէ, թէ ինչու է նրանց կանչել: Դրանից յետոյ համայնքների պալատի անդամները դալիս են իրենց պալատն և սպիկեր կամ նախագահ են ընտրում: Սպիկերը կուսակցական մարդ չպիտի լինի: Նախագահի պաշտօնը վարձատրում է. նա մօտաւորապէս 50000 ռ. է ստանամ և բնակարան—պառլամենտի շնութեան մէջ: Մառայութիւնը վերջացնելուց յետոյ, որ տե-

ռում է մինչև պառլամենտի պարապմունքներն աւարտելը, սպիկերը ստանում է պէրի կոչում և կենսաթօշակ մինչեւ 40000 ռ. տարեկան, իսկ նրա մահից յետոյ այդ գումարն ստանում է նրա աւագութեան գումար:

Այն սենեակը, ուր օրէնսդրութիւնն է տեղի ունենում, մի մեծ սենակ է, որի պատերը ծածկուած են քանդակագործ կաղնիով: Առաստաղի փոխարէն ապակեայ կտուր է, ուսկից մեղմ ելքարական լոյս է սփուռում: Սենեակի մշտեղում մի մեծ սեղան է, որի առաջ բաղկաթոռ կայ զբան, իսկ բաղկաթոռների առաջ մի հովանու տակ գահն է: Երբ համայնքների պալատում քննուում է ամբողջապէս մի օրինագիծ, նախագահում է ինքը սպիկերը, և նրա տեղը ըստ գահն է: Բայց երբ պալատը քննում է բիլլ մասնաւոր հարցերը, նա թողնում է գահը, հեռանում և նախագահում է մասնաժողովի նախագահը: Նա նատում է սեղանի ծայրին և նրա կողքին նստում են նրա երկու գործավարները՝ սպիտակ կեղծ մազերով և մաքուր ածիլած դէմքով: Գահի երկու կողմից ամբողջ սենեակում երկար նստարաններ են շարուծ՝ զրելու համար ոչ մի յարմարութիւն չունենալով: Այդ տեղ են նստում անդամները:

Վերը՝ պատերի շուրջը պատշգամ է շինած հասարակութեան և լրատուների համար. իսկ ամենավերը՝ երկու իրար հանդէկալ պատերի մէջ երկաթէ վանդակներ են շինած, ուր կանայք են լինում: Բանից երեսում է, որ «ազնիւ լէզիները» չեն կարող լինել տղամարդկանց համար նշանակած պատշգամում, և աշա ինչու: Անցեալ դարի սկզբում պաշտ-

զամում անխտիր կարող էին լինել թէ կանայք և և թէ տղամարդիկ: Բայց մի անգամ առաջին նստարանի վրայ ձիշը սպիկերի դէմուզէմ, նստած է լինում մի արտակարգ գեղեցկութեամբ լէդի: Զնայելով որ սպիկերը պատկառելի հասակ է ունենում, այնու ամենայնիւ գեղեցկուհին գրաւում է նրա ուշագրութիւնը, նաև չէ նկատում, որ Ճառախօս հռետորն աւարտել է իւր խօսքն և իւր ժամանակին խօսքը չէ աալիս նոր հռետորի: Մի խայտառակ դէպք, որի նմանը չէ եղել անզիւական պարլամենտի տարեկրութեան մէջ: Եւ բանը վերջանում է նրանով, որ ոչ թէ սպիկերն է պատժում, այլ ամբողջ գեղեցիկ սեռը, որին աւելի վեր են տանում: Այդ ժամանակից նրանք վերև են գնում և միայն նիստերի ընդհաման ժամանակ կարող են ցած գալ և կորրիգորներում իրենց գեղեցկութեամբ հրապուրել դաժան օրէնսդիրներին:

Հին սովորութեամբ, սպիկերն էլ կեղծ մաղ է
դնում գլխին, հազնում է կարծ, մինչև ծնկները,
վարտիկ, երկայն զանկապաններ և երկայն թիկնոց:
Պալատի նիստերին նա նախագահում է, բայց ինքը չէ
խօսում. նրա գործը կարգապահութիւնն է: Նա
նոյնպէս ներկայ չէ գտնելում պալատի կորրիգորնե-
րում, ուր ձայներն են հաշւում:

Մինչև սպիկերի ընտրութիւննը գահը բռնում է պետական մի աստիճանաւոր, որին յայտնի է, թէ պալատի անդմներից ով է առաջարկելու այդ պաշտօնի համար արդէն կանխապէս որոշուած անձին, և նա առաջարկում է այդ անդամին, որ նա մի մարդ նշանակէ սպիկերի պաշտօնի համոր: Անդամը տե-

զեց բարձրանում է, դիմում աստիճանաւորին և
առաջարկում, թէ «այս ինչ անդամը, թող բռնէ նախա-
քաղաքի պատկառելի անդամը, թող բռնէ նախա-
գահական աթոռը, որպէս սպիկեր»։ Երբ ամենքն
իրենց հաւանութիւնը տալիս են սպիկերի ընարու-
թեանը, նա վեր է կենում, յայտնում իւր շնորհա-
կալութիւնն և իսկոյն բռնում իւր տեղը։ Պատա-
հում է, որ այդ պաշտօնի համար երկուսին են ա-
ռաջարկում, և այդ գեղքում, սակայն շատ հաղեւ
է լինում, քուէարկում են։ Ընարութիւնից յետոյ
գաւազանապահը գաւազանը բերում է զնում նրա
սեղանի վրայ, որ մնում է այնտեղ քանի որ սպի-
կերը նստած է։ Այդ գաւազանը փայտից է, ծայրը
քանդակած և սսկեղօծած։ Կոթը չորս սաաչափ է.
գործածութիւնը պառլամենտի սկզբից է։ Ընարու-
թիւնը յետոյ՝ միւս օրը սպիկերը համայնքների պա-
լատի այն անդամների հետ, որոնք ցանկանում են, զը-
լատի այն անդամների հետ, որոնք ցանկանում են, զը-
լում է լորդերի պալատը, ուր նրան յայտնում են,
թէ թագավառը տալիս է իւր հաւանութիւնն այդ
ընարութեանը։ Ապա սպիկերը պահանջում է, լոկ-
ձեականութեան համար, «Հին և անժիսելի իրա-
ւունքներ և արտօնութիւններ» թէ իրեն և թէ
համայնքների պալատի համար, այն է՝ որ ինքն և
իւր ծառաներն ազատ լինին ձերբակալութիւնից և
բռնութիւնից, խօսքի աղատութիւն վեճարանութիւն-
ների ժամանակ և աղատ մուտք թագաւորի մօտ,
երբ կարիք կը լինի, հաւասարապէս և այն, որ իրենց
բարձր գործողութիւնների տեսլի բարեմիտ բացա-
բուր տրութիւն տրուի։ Յետոյ սպիկերը վերադառնում է
տրութիւն տրուի։ Յետոյ սպիկերը վերադառնում է
համայնքների պալատն և եղելութիւնը պատմում,

իսկ ապա սկսում են երգուել: Երդման մէջ ի միջի այլոց առուած է. «Երգուում եմ, որ հաւատարիմ և անձնուեր կը լինիմ նորին մեծութեան և խոսաւնում եմ ճշտիւ պահպանել և պաշտպանել գահաժառանգութեան կարգն այնպէս, ինչպէս այն սահմանուած և որոշուած է Վիլհէլմ III թագաւորի օրով հրատարկած ակտով, որ կը ում է՝ «Թագի իրաւունքների հետագայ սահմանափակման և հպատակների իրաւանց ու ազատութեանց լաւագոյն պահպանութեան ակտ» վերնազիրը, նշնպէս և Շուրլանդիայի և Խոլանդիայի միութեան հետագայ ակտերով: Եւ արդ՝ Աստուած թող օգնակալ լինի ինձ»: Երբ պառլամենտն արձակուում է, իսկ հին կարինեար դեռ ևս հրաժարական չէ տուել բայց ընարութիւններին հակառակ կուսակցութիւնն է յաղթութիւն տարել այդ դէպքում մեծամասնութիւն կազմող նոր կուսակցութիւնը քուէարկում է՝ հաւատ ընծայել կարինեաին թէ ոչ իսկ ապա՝ կարինեար տալիս է իւր հրաժարականը: Լիդերը կամ կուսակցութեան պարագուիր կարող է և լորդերի պալատի անդամ լինել ինչպէս Սոլիւսերին էր, և համայնքների պալատի անդամ, ինչպէս Գլազունն էր: Կուսակցութեան պարագուիրն առաջին մինիստրըն է լինում և միաժամանակ ֆինանսների մինիստրի պաշտօն կատարում, որի համար նա 50000 ռուբլի ռոժիկ է ստանում: Երբեմն նա կարող է և ուրիշ պաշտօն ստանձնել ինչպէս Սոլիւսերին, որ 1886—1892 թ. արտաքին գործերի մինիստր էր: Առհասարակ առաջին մինիստրն օգնականներ են ունենում, իսկ ինքն զբաղւում է զլիաւորապէս ընդ-

հանուր քաղաքականութեամբ: Գլագսառնի մինիստրութիւնը 25 վարձատրուող պաշտօններից էր բաղկացած, որոնցից միայն 18 կարինեաի մարդիկ էին, իսկ մնացեալներն՝ օգնականներ, ինչպէս՝ լորդիութարքայ Խոլանդիայի, Մորդիաստաբան և այլն, որոնք թէ մինիստրութեան են պատկանում, բայց կարինեաի անդամներ չեն:

Երբ առաջին նիստը բացւում է կուսակցութիւններն իրենց աեղերը փոխում են: Կառավարութեան կուսակցութիւնը, այսինքն մեծամասնութիւնը, բըռնում է աշակողմեան նստարանները, հակառակ կուսակցութիւնը, փոքրամասնութիւնը—ձախակողմեան նստարանները: Այդ կողմից՝ առաջին նստարանի վրայ նստում են մինիստրները, իսկ ձախ կողմից՝ մինիստրութեան նախկին անդամները, որոնք այժմ ընդդիմադրականներ են: Երկու կուսակցութեան պարագուիրներին բաժանում է միայն կլէրկի կամ՝ պետական պաշտօնեայի սեղանը:

Նիստը բացւում է գահական ձառով, որի մէջ կառավարութիւնը բերում է իւր օրէնսդրական ծրագիրը: Գահական ձառը լսելու համար համայնքների պալատի անդամները հրաւիրում են լորդերի պալատը: Այդահեղ լորդ-կանցլերը կարգում է թագաւորի թուղթը, որի մէջ մի առ մի առաջեն բերում այն միջոցները, որ կառավարութիւնը կը կամենար պառլամենտի այդ նստաշրջանում անց կացնել: Այդ ենթադրութիւնները շատ ընդարձակ են լինում և երբէք պառլամենտի մի ընդարձակ են լինում և պատկանում ամբողջապէս: Թանստաշրջանում անց չեն կինում ամբողջապէս: Թագաւորի թուղթը լսելուց յեաց՝ սպիկերն և համայն-

քի պալատի անդամները վերադառնում են իրենց տեղն, և համաձայն ընդունուած սովորութեան, ամենից առաջ մի որեւէ բիլ է կարգացւում: Այդ անում են այն նպատակով որ ցոյց տան համայնքների իրաւունքը, թէ նրանք կարող են աւելի շուա իրենց գործերով զբաղուել, քան թէ գահական ժամանվ: Երբ բիլը կարգում են վերջացնում, սպիկերը ծանուցումն է անում, թէ եղաւ լորերի պալատում և լսեց թագաւորի սղորմած ձառն և ինքն սկսում է կարգալ այդ ձառը, իսկ ապա վեճաբանութիւններ են ըսկուում պատասխան-ուղերձի առիթով: Երբեմն այդ վեճաբանութիւնները 2—3 շաբաթ են տևում: Կառավարական կուսակցութիւնը, լինի նա ազատամիտ թէ պահպանողական—միևնույնն է, առաջարկում է գոհունսոկութեան ուղերձ տալ, ընդ նմին այդ առաջարկն անող անդամները վենուորական նշանազգեստով պիտի լինին, եթէ նրանք այդ իրաւունքն ունեն, կամ թէ պատգամաւորական՝ վենձորեան նշանազգեստով, որ բացատիկ հանդիսաւոր դէպքերում համայնքների պալատի անդամները հազնում են: Պալատը քննում է առաջարկուած ուղերձը, և ընդդիմապրական կուսակցութիւնը, կամենալով նախարինք ցոյց տուած լինել կառավարութեան առաջարկուած միջոյների նկատմամբ, ուղղումներ է անում այդ ուղերձի մէջ: Այդ ուղղումները քննուում են և քուէարկուում: Եթէ մի ուղղումն անց է կենում, դա նշննն է, թէ կառավարութեանը հաւաա չեն ընծայում, և կարինեալ հրաժարուում է: Առաջարկուում են բազմաթիւ փոփոխութիւններ, և նայած թէ նրանից որբանն է անց կենում և ինչ

է անց կենում, որոշում են կուսակցութիւնների համեմատական ոյժերը:

Համայնքների պալատում նիստերը սկսում են ամեն օր 3 ժամին, բայցի կիրակի, չորեքշաբթի և շաբաթ օրերից, և շարունակուում են մինչև զիշերուայ մի ժամը: Չորեքշաբթի օրերին նիստը լինում է 12—6 ժամը, իսկ շաբաթ օրերը հաւաքուում են միայն այն ժամանակի, երբ պատյամենար փակուելու վրայ է լինում և չվճռուած գործեր շատ, նոյնպէս 12—6 ժամը: Նիստը բանալուց առաջ քահանան աղօթք է կարգում: Աղօթքը չկարգացած ոչ ոք իրաւունքը չունի տեղ բռնելու, բայց ընարուած տեղերում կարող են թողնել զիշարկը կամ ձեռնոցը: Համայնքների և ըրդերի պալատների անդամները նիստերին զիշարկով են լինում, բայց ներս մտնելիս կամ դուրս գալիս, միմեանց չետ խօսելիս կամ պալատում ժառ ասելիս զիշարկները վերցնում են: Նստել զիշարկով կարող են:

Նախ և առաջ քննում են մասնաւոր գործեր, իսկ ապա մասնաւոր մարդկանց և ընարողների խնդրագրերը, որոնք վերաբերում են զանազան միջոյների և ցանկութիւնների: Սովորաբար խնդրագիր ներկայացնում է պալատի անդամներից մէկը, որ յայտնում է նրա բավանդակութիւնը, կամ թէ պալատի կլէրին ամբողջապէս կարգում է: Խնդրագրերը մի կողմ են դնում, որ քննում է մասնաժողովը և նրանց մասին զեկուցումն ատլիս պալատին: Դրանից յետոյ քննում են արձակուրդ խնդրող պալատի անդամների գործերը: (Սովորաբար պալատի անդամներն այսպէս են անում: մի կուսակցու-

թեան անդամ՝ որ ժամանակից առաջ գնալ է ուղում; բայց չկամենալով որ քուէարկութեան ժամանակ իւր կուսակցութիւնը թուլանայ, հակառակ կուսակցութեան մէջ փնտում է մի այնպիսի անդամ, որ նոյնպէս կամենում է գնալ, և ապա երկուսն էլ հանդիսա հեռանում են): Այստեղ էլ անդամները յայտարարութիւն են տալիս այն հարցումների մասին, որ մտազիր են յետոյ անելու: Հարցումներ անւում են մինխարճներին զանազան միջոյների, հաստատութիւնների գործունէութեան, կառավարչական դէպքերի մասին և այլն: Առաջօրէն յայտնուած հարցումները տպազլուում են օրուայ պարապմունքի ցուցակում, և հարցում անել ցանկացողներին սպիկերը հերթով կանչում է: Երբեմն մի օրում 60—70 հարց է առաջարկուում: 1888 թ. նստաշրջանում 5,549 հարց է առաջարկուած եղել կառավարութեանը: Նատ անդամ պարապմունքի ամենաշետաքրքրական մասը հարցումներն են լինում: Երբեմն անում են այսպէս ասուած (առաջարկներ հաստարակական գործերի քննութեան սկզբում): Պրանք կամ խնդիրք են նիսար յետաձգելու, որպէս զի պալատի ուշադրութիւնը դարձնեն մի որեւէ կարեոր, անյետաձգելի հարցի վրայ, կամ թէ պալատում գործեր վարելու եղանակների մասին առաջարկներ են: Առաջին տեսակի առաջարկները շատ հազեւ են լինում՝ բացառիկ դէպքերում: Օրինակի համար, եթէ ոստիկանութիւնն ապօրինի կերպով է արգելք լինում խմբովին գործադրուների կամ եթէ նրա գործողութիւններն սպառնում են, որ լուրջ անկարգութիւններ կարող են յառաջանալ, այն

ժամանակ համայնքների պալատի իւրաքանչիւր անդամն իրաւունք ունի քննադատելու ոստիկանութեան ընթացքը: Այդ նպատակով նա պաւոր զեկուցումն է տալիս սպիկերին գործի մտսին, և երբ հարցումները վերջանում են, յայտնում է, թէ ինդրում է յետաձգել նիսար հասալակական մեծ կարեսրութիւն ունեցող մի գործի ասթիւ խորհրդակցելու համար, և ապա պատամում է նրա էութիւնը: Եթէ անդամներից 40 հոգի յետաձգելու համար ձայն արուին, անդամը շարունակում է իւր խօսքը, բայց եթէ վեր կացողների թիւը 40-ից քիչ է և 9-ից ոչ պակաս, այն ժամանակ այդ հարցը քուէարկում է:

Ազօթքից յետոյ՝ գեռ ևս օրուայ պարապմունքը չակած, հին անդամներից երկուսը ներկայացնում են նորերին, և երբ սրանք գնում են սպիկերի ձեռը սեղմելու, բարեկամները ծափահարում են նրանց: Ապա նրանք տեղ են բանում իրենց կուսակցութեան շարքում, իսկ յետոյ արդէն պալատն սկսում է իւր պարապմունքը, այսինքն՝ վիճաբանութիւններ են սկըսում բիլի առաջին, երկրորդ կամ երրորդ անդամ կարգալու առթիւ, կամ մասնաժողովում բիլին են քննում և այլն: Վիճաբանութիւնների ժամանակ իւրաքանչիւր անդամ մի անդամ խօսելու իրաւունք ունի և, չնայելով դրան, տարձեալ վիճաբանութիւնները յաձախ երկու շարաթ են տեսում:— Երկու կուսակցութիւնների աչքի ընկնող հաետորները սովորաբար խօսում են երեկոյեան $4\frac{1}{2}$ — $7\frac{1}{2}$ և $9\frac{1}{2}$ — 12 ժ.: Հարցերի կարգը սկիզբն է որոշում, և զանազան կուսակցութիւնների ծառանիրը պարապական են

իրենց անդամներին քուէարկութեան կանչելու։ Այդ ծառաները գիտեն, որ այս ինչ ոքը պատասխանելու է այն ինչ ոքին, և հաղորդում են սպիկերին, որ և ձառախօններին համարեա այն հերթով է կանչում, ինչպէս որ նրանք՝ կուսակցութեան անդամներն են ուղում խօսել։ Երբ վիճականութիւն ները վերջանում են, սպիկերը հարցը գնում է պալատի վճռին, և ամենից առաջ վճիռը կայտնում են «այս» կամ «ոչ» ասելով. ապա նա ասում է, թէ մէծամասնութիւնն որ կողմն է. եթէ ընդդիմադիրները համաձայն չեն լինում, քուէարկութիւն են անում։ Այդ նպատակով պալատի դուռը մի երկու փայրիեան փակում են, սպիկերը նորից հարց է աալիս, և անդամները նորից պատասխանում են՝ «այս» կամ «ոչ»։ Եթէ նորից հերքում են սպիկերի կարծիքը, «այս» ասովները գնում են աջակողմեան գալլերէան, իսկ «ոչ» ասովները՝ ձախակողմեանը, և պալատի անդամներից երկու մարդ է ընտրում ձայները հաշուելու համար։ Սրանք հաշում են և ապա յայտնում սպիկերին։ Զայների հաւասարութեան ժամանակը սպիկերը միանում է այս կամ այն կուսակցութեանը։

Վիճաբանութիւնների ժամանակ արգելուած է խօսել լորդերի պալատի մասին, յիշել թագաւորի անունը, պալատի համար վերաւորական գարձուածներ գործ ածել, օրէնքների դէմ խօսել բայց այն օրէնքից, որի մասին խօսում են վերացնելու կամ փոփոխելու նպատակով։ Պալատի անդամներին դիմելիս՝ նրանց անուանում են ընարողների շրջանի անունով օրինակի համար՝ այս ինչ գաւառի պատ-

կառելի անդամը, բայց անունն ու ազգանունը չեն տալիս։ Եթէ մէկը բողոքում է միւսի խօսքերի դէմ կէրկը պիտի արձանագրէ այդ խօսքերը, կրկնէ և զեկուցանէ պալատին, եթէ ասուել են մասնաժողովում։ Ասովը բացատրութիւն պիտի տայ և կամ ներողութիւն պիտի խնդրէ և կամ ասածները յետ պիտի վերցնէ։ Բայց եթէ նա հրաժարուի զրանցից գէթ մէկն ու մէկն անելուց, կարող են արգելել պառլամենտի նիստերին մասնակցել առաջին անդամ մի շաբաթ, երկրորդ անդամ՝ երկու շաբաթ և երրորդ անդամ՝ մի ամիս։ Այդպիսի անդամն իսկոյն և եթ թողնում է պալատն և հեռանում։

1888 թ. կանոն է դրուած, որ վիճաբանութիւնների ժամանակը կրծատուի, և քուէարկութեամբ որոշում են, թէ երբ պէտք է վերջացնել։

1715 թ. ակտի հիման վրայ, պառլամենտն 7 տարի պիտի աւելի և ապա նոր ընտրութիւններ պիտի լինեն։ Ստկայն շատ հազիւ է նա այդքան երկար շարունակում իւր գործունէութիւնը. կամ ինքը պառլամենտը—կուսակցութիւնների քայլքայման պատճառով—ինդրում է թագաւորին ժամանակից առաջ արձակել։ Ինչպէս պառլամենտի բացուելն, այնպէս էլ փակուելը հանդիսաւոր կերպով է լինում, և յայտարարում է թագաւորի անունից՝ համայնքների պալատի սպիկերի ներկայութեամբ։ Երբ պառլամենտը պիտի արձակուի, սովորաբար նիստերն առաջօրէն յետաձդում են։ Թէ արձակելն և թէ նիստեր յետաձդելը թագաւորն է վճռում խորհրդում, և ապա յայտարարութիւն է հրաժարակւում հետեւալ բո-

վանդակութեամբ. «Յայտարարութիւն թագաւորի
կողմից ներկայ պառլամենտն արձակելու և նորը
հրաւիրելու մասին». յետոյ արդէն գալիս է յայտա-
րարութեան բովանդակութիւնը, թէ պառլամենտն
որ օրը պիտի փակուի և որ օրը նորը պիտի բացուի:



6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԵՐԸ

Անզլիայի պետական կենքի ղեկավարը հասարա-
կական կարծիքն է, այդ պատճառով էլ մեծ նշա-
նակութիւն ունի այն հանդամանքը, թէ ինչ ուղ-
ղութիւն նա կունենայ: Քաղաքական կուսակցու-
թիւններ են կազմակերպւում, որ երկրի կառավա-
րութեան գործն իրենց ձեռքը ձգեն կամ նրա վրայ
որոշ ազգեցութիւն ունենան: Ժողովրդի մէջ երկու
հիմնական կուսակցութիւն կայ. նաև յառաջադի-
մական, որ գէպի առաջ է նայում և ձգտում բա-
րելաւել գոյութիւն ունեցող պայմանները. իսկ ա-
պա՝ պահպանողական, որ աւանդութիւնների կողմէ
նակից է և աշխատում է արդին ձեռք բերած բա-
րիքները պահպանել: Անզլիական հրապարակախօս-
ներից մէկն տառւմ է, թէ ամեն մի անզլիացի կամ
փաքրիկ աղասակիտ է ծնւռում, կամ փոքրիկ պահ-
պանողական: Ամեն մի 5 անզլիացուց երկուսն ան-
պատճառ պահպանողական են լինում, երկուսն ա-
ղասակիտ և վերջապէս հինգերորդը յայտնի չէ, թէ
ինչ է, և նրա վճռից է կախուած, թէ որ կուսակ-
ցութեան կառավարութիւն կը լինի Անզլիայում: Ան-
ցեալ գարի երրորդ քառորդում այդ հինգերորդ
մարդիկ միանում էին ըստ մեծի մասին աղա-
սակիտներին, իսկ վերջին քառորդում սկսեցին ա-

ւելի և աւելի յարիլ պահպանողականներին: Գլադստոնն երկք անգամ կարողացաւ նրանց իւր կողմը զբաւել բայց որովհետեւ անզլիական սահմանազրութեան առանձնապատկութիւնների պատճառով պառլամենտի անգամ լինել կարող են միայն հարուստ մարդիկ, իսկ հարուստներն առհաւարակ չեն սիրում արմատական բարենորոգութիւններ, ուստի վերջին 10—15 տարուայ ընթացքում ազատամիաների բանակից սկսեցին անցնել պահպանողականների բանակը, որով և ուժեղացրին պահպանողական կուսակցութիւնը:

Սնգլիայի պառլամենտում կուսակցութիւնները հաւասար իրաւոնք ունեն: Նյոն իսկ փոքրամասնութեան վրայ կառավարութիւնը նայում է որպէս մի ոյժի վրայ, որ վաղը մեծամասնութիւն կարող է դառնար: Ընդդիմազրական կուսակցութիւնն այնտեղ՝ «անբարեմիտ» և հասարակական տարրերի՝ «Հիմք քանդող» մարդկանցից չէ բազկացած, այլ ընդհակառակը, կառավարութեան կանոնաւոր գործունէութեան համար նա անհրաժեշտ պայմանն է: Իւր նշանակութեամբ նա հաւասար է գործող կառավարութեան, և օրէնքներում տասծ է ոչ թէ ընդդիմազրութիւն ընդդէմ թագաւորի, այլ թագաւորի ընդդիմազրութիւնը:

Հիմնական երկու կուսակցութեան գործը փոքրինչ բարգում են ծայրահեղ տարրերը՝ մի կողմից արմատականներն ու բանուորների ներկայացուցիչները, որոնք ձգտում են խիստ փոփոխել քաղաքական և հասարակական կեանքը, իսկ միւս կողմից՝ անզլիկանները, որոնք երազում են վերականդնել

եկեղեցու միստիկական դերը: Սակայն այդ խմբերն այնքան էլ մեծ չեն և նշանաւոր դեր չեն խաղում: Ուրիշ բան են իուլանդական խմբերն, որոնք նոյնափակ են հետաքրքրութեան վերաբերում: Սնգլիայի քաղաքական գործերով, որչափ որ այդ գործերը նրանց ազգային ձգտութիւններին են վերաբերում: Եւ որովհետեւ բուն անզլիական կուսակցութիւնները քիչ թէ շատ հաւասար են, այդ պատճառով իուլանդացիները նշանաւոր ազգեցութիւնն են ունենում հարցերը վըճուելիս՝ այս կամ այն կուսակցութեան յարելով, նայած թէ նրանց համար որն է շահաւետ: Նյոն իսկ իուլանդիայի ինքնավարութեան հարցը, ինչպէս յայտնի է, պառակտութիւնն ձգեց անզլիական կուսակցութիւնների մէջ: Բայց իուլանդիայի և իուլանդական կուսակցութեան մասին մի քիչ յետոյ կը խօսենք:

Այսպէս թէ այնպէս՝ մինչև օրս էլ գել խաղացող կուսակցութիւններն երկուսն են, ազատամիտ և պահպանողական: Սնշուշտ երկու կազմակերպուած կուսակցութիւնը բաժանուած պիտի լինեն սկզբունքով տեսղական կարե որութիւն ունեցող հարցերի նկատմամբ, և երբ այդ տարբերութիւնը չէ լինում: այն ժամանակ նրանք միմեանցից էլ չեն դանազանուում: Ներկայումս այդ երկու կուսակցութեան մէջ սկզբունքի որևէ տարբերութիւն չկայ, եթէ դատելու լինենք նրանց մասին ոչ թէ արտասանած ձառներով, այլ նրանց գործունէութեամբ, և դրանով պէտք է բացատրել այն երեսյթը, որ ազատամիտների բանակից փախչողների և պահպանողականների կողմն անցնողների թիւը բազմանում է:

Մինչև անցեալ դարի սկիզբն երկու ազնուապետական կուսակցութիւնից իւրաքանչիւլն իրեն էր ուղում վերապահել իշխելու իրաւունքը, այն է տորերն ու վեգերը, որոնցից առաջինները պալատական ազնուականներ էին, իսկ երկրորդները—կալուածատէրեր։ Վեգերին են յարւում քաղաքների հարուստ գասակարգերը, իսկ երկրագործ գասակարգի յայտնի ու նշանաւոր մարդիկ՝ տորերի կուսակցութեանը, որոնք իրենց նախկին արտօնութիւններն էին պաշտպանում։ Այդ երկու կուսակցութիւններն իրենց դասակարգային շահերն էին պաշտպանում և էութեամբ միմեանցից չէին զանազանուում, այլ միայն ինքնավարութեան և հաւատի համբերատարութեան սկզբունքի գործադրութեան աստիճանով։ Տորերն իրենց աւանդութիւնով կապուած էին միապետութեան և եպիսկոպոսական եկեղեցու հետ, մինչդեռ վեգերն աւելի յառաջալիմական հայեացքներով էին զեկավարւում։ Սակայն երկու կուսակցութիւն կազմողներն էլ միմնոյն հասարակութեան մարդիկ էին և կարողանում էին միմեանց դէմ կրիւ մղել մէծ անձնազապութեամբ և հիմնական համերաշխութեան զգացումով։ Անցեալ դարից բուրժուազիան սկսում է զօրեղանալ և ձուլուել վեգերի հետ։ 1832 թ. բուրժուազիան քաղաքական տիրապետութիւն է ստանում, և վեգերի կուսակցութիւնը դառնում է ազատամիտ կուսակցութիւն, իսկ տորերինը—պահպանողական։ 1832 թ. մինչև 1848 թ., այսպէս ասած չարտիստական շարժման ժամանակ, արգարե, կուսակցական կառավարութիւն էր Սնգլիայում, որովհեաւ երկու կու-

սակցութեան մէջ խոր սկզբունքի տարածայնութիւն էր։ Հայի օրէնքների ծանրութեան տակ ժողովրդը հիւծում էր, և երիտասարդ բուրժուազիան, որ ազատ առեւտրի կարօտ էր իւր ձեռներկութիւնները զարգացնելու կողմից արժան հացի համար մղած կուտում ժողովրդի կամքի ներկայացուցիչն էր։ Ոյդ ժամանակ կռիւ էին մը շում մի կողմից զործարանատէրերը ժողովրդի դէմ, իսկ միւս կողմից՝ հողատէրերի, և, ինչպէս յայտնի է, յօդուտ ժողովրդի վերջացաւ։ «Երբ Պիլլը, պատմում է Ֆրեդերիկ Գէլլը, յորենի մաքսը փոխել տալու օրէնքն անց կացնելուց յետոյ պալատից փողոց գուրս եկաւ, նա տեսաւ, որ փողոցը լցուած է ժողովրդով։ Իսկ երբ ժողովուրդը տեսաւ Պիլլն, զիսարկը հանեց և լուս, զիսարաց տարաւ, տուն հասցրեց նրան»։ Դրանից յետոյ Սնգլիայի պատմութեան մէջ չէ եղել մի դէպք, որ այնպէս պերապով որոշէր այդ երկու կուսակցութիւնների կերպարանքն, ինչպէս վերցիշեալ դէպքն էր։

Մենք ասացինք, որ գեռ ևս Գլադիոնի օրով ազատամիտ կուսակցութեան բանակից անցնում էին պահպանողական կուսակցութիւնը, բայց երբ զատամիտ կուսակցութիւնը պարտութիւն կրեց, կառավարական շրջանների մէջ նոր ուղղութիւն մտաւ, որ յայտնի է նաև լիտվանց անունով կամ ազատամիտ իմպերիալիստների կուսակցութիւն։

Երկար տարիներ Սնգլիան՝ տիրապետած լինելով համաշխարհային շուկաներին՝ այնպիսի խոշոր գումարներ էր կիաել որ առանց գործադրութեան էին

մնում այնտեղ։ Այդ աւելորդ գումարները մասամբ օտար պետութիւններին էին պարագ տալիս, մասամբ էլ գործ էին ածում նոր, երիտասարդ արդիւնաբերող երկրների վրաց՝ բնական հարատութիւնները շահագործելով։ Արտասահմանում զետեղուած գումարներից Անգլիան ներկայումս առ նուազն 1,200,000,000 ռ. եկամուտ ունի տարեկան։ Այդպիսով Անգլիան ձեռք է բերել մի առանձին զիրք։ Գլադստոնի մահից յետոյ այդ նոր ուղղութիւնը, որի ծրագիրն այն է, որ Անգլիան գերակշռող լինի թէ Եւրոպայում և թէ ուրիշ երկրներում, որ նա պահպանէ իւր ապրանքներն արտահանելու համար ունեցած շուկաներն և նորերը ձեռք բերէ, — աւելի ևս սասակացաւ, և սկզբում նրա ներկայացուցիչը Ռողբերին էր, բայց յետոյ հրաժարուեց պարագլուխիներուց։

Անգլիայի վերջին տարիների քաղաքականութիւնը այդ զրոշակի տակ էր կատարում։ Եգիպտոսն ու Հարաւային Աֆրիկայի փոքրիկ հասարակագետութիւնների նուռածումն այդ քաղաքականութեան արդիւնքն էր։ Սակայն երկարատեղ լինել այդ քաղաքականութիւնը չէր կարող այն երկրում որ ազատ հաստատութիւններ ունի։ Իմպերիալիզմի շնորհիւ ածում են պետական պարաքերն, աւելանում են հարկերն և ազգային արդիւնաբերութեան ու առեւտրի զարգացման խոշնութ են լինում։ Եւ հազիւ 10—15 տարի անցաւ, Անգլիան այժմ մտածում է, թէ ինչպէս վերականգնէ մշտ անցեալում ունեցած իւր փառաւոր պետական վարկը և թէ ինչպէս ծանր հարկերի ածման առաջն առնէ։

Յառաջազեմ գասակարգերը մատնանիշ են անում, թէ զրա համար հարկաւոր են սոցիալական բարենորոգութիւններ, ժողովրդական և բարձրագոյն լուսաւորութիւնն աւելի ևս բարձրացնել գիտութիւններ տարածել ժողովրդի մէջ և այն։ Բայց այդ հարցն այլ կերպ է վճռում Զեմբերէնը։ Նա ասում է, թէ Անգլիայի վատանգաւոր մրցակիցները միջազգային շուկաներում Միացեալ Նահանգներն և Գերմանիան են, և զրա պատճառն այն է, որ նրանք հովտնաւորում պաշտպանում են իրենց երկրների արուեստակերտութիւնը, հետեւաբար Անգլիան էլ պիտի թողնէ ազատ առեւտրի դրօշակը և դիմէ հովտնաւորութեան կամ պրոաէկցիոնիզմի։ Այսպէս իմպերիալիզմից ծագում է պրոաէկցիոնիզմ, որ, ենթալրուում է, պիտի փրկէ անգլիական արդիւնաբերութիւնն օտարազգի մրցութիւնից, պիտի անգործ բանուորների թիւը պակսեցնէ և բանուորների օրավարձը բարձրացնէ։ Միևնույն ժամանակ մաքսերն այնքան եկամոււտ կրաան Անգլիային, որ հնարաւոր կրլինի ծերացած բանուորներին պետական գանձարանից թոշակ տալու օրէնքն էլ անց կացնել։ Բայց Զեմբերէնի համար ոչնչ նշանակութիւն շունի այսօր ամենախորին համոզմունքով պացուցանել այն, ինչ որ երեկ հերքում էր։ Մինչ 1886 թ. ծայրահեղ արմատական էր, և այդ թուականին նա դուրս է գալիս Գլադստոնի մինիստրութիւնից, կորսատաբեր համարելով հոմբուլի նախագիծը, որ մշակել էր Գլադստոնը։ Զեմբերէնի օրինակին հետեւեցին մի քանի տասնեակ ազատամիաներ, որոնք առաջ կազմեցին ազատամիանիւնի-

օնիստական կուսակցութիւնը, իսկ յետոյ ձուլուցին պահպանողականների հետ: Դաւաճանելով իոլանդիայի գործին, որի ջերմ պաշտպանն էր, Զեմբերլէնը, կամաց-կամաց զլորում է և, այդպէս զընալով, 1895 թ. Սոլիւսքերի պահպանողական կարինետի մէջ նոք նրան տեսնում, որպէս զաղութների մինիստրի: Այդ ժամանակից ի վեր նա շարունակում է գաւաճանութեան քաղաքականութիւնը: 1895 թ. նա խոստանում է բանուոր ընտրողներին բազմատեսակ լաւ օրէնքներ անց կացնել, որով և յաջողեցնում է իւր ընտրութիւնը: Իսկ ընտրուելուց յետոյ արդէն առաջ է քաշում արտաքին քաղաքականութեան հարցերի մի ամբողջ շարք, որպէս զի ներքին բարենորոգութիւնների նկատմամբ ոչ մի շարժում չինի: Ապա առաջ բերելով հարաւային Աֆրիկայի հատարակապետութիւնների գէմ պատերազմը, նոյն պատերազմի ժամանակ նոր ընտրութիւններ է սարքում. իսկ նրա կինը եղայրը, աղջկերքը, փեսաներն այդ միջոցին ընդարձակում են իրենց գործարանները, որոնք զինուորական և ծովային մինիստրութիւնների գլխաւոր մատակարարներն էին: Զեմբերլէնին մեղաղրում էին, մերկացնում էին, բայց նա իրեն չէր կորցնում. ամեն բանի պատրաստ էր: Եւ երբ միլլիարդներ մախուեցին և տասնեակ հաղարաւոր մարդկանց կեանք զոհուեց, Զեմբերլէնը, որպէս խաղաղարար, զնում է չարաւային Աֆրիկա, թողնելով որ Բալֆուրն և սրա օգնականներն պատասխան տան երկրի քայքայման համար և տանեն արթնացած ժողովրդի ցասման առաջին հարուածները:

Զեմբերլէնն Սնովիայի չար ողին է: Նա ոտնի տակ տուեց Սնովիայի զինուորական և բարոյական վարկը: Այդ երկարատեւ և ստոր պատերազմի պատճառը նա էր, և այդ ժամանակ Սնովիայի առետրի մեջ մասն անցաւ ուրիշների ձեռքը:

Զեմբերլէնն որոշ չափով թուլացրեց աղատամիտ կուսակցութիւնը, որ իւր բոլոր թերութիւններով հանդերձ յառաջադէմ կուսակցութիւն էր: Իսկ յետոյ էլ նա զբաղուած էր աղատամիտ-իւնիօնիստների կուսակցութիւնը քանդելով, որի պարագուխն երկար տարիներ իրօք ինքն էր:

Այսպէս աղատամիտ կուսակցութիւնը թէպէտ յետ չէ զնում, բայց պահպանողականութիւնն անշուշտ առաջ է զնում, որի կուսակիցների թիւն օրէցօր շատանում է, և այդ երեցիթը, ինչպէս առաջինք, նկատելի է 1886 թ., երբ աղատամիտ-իւնիօնիստները հեռացան աղատամիտ կուսակցութիւնից:

Բանուորական կուսակցութիւն, այսինքն մի այնպիսի կուսակցութիւն, որ պատլամենտում զուտ բանուոր դասակարգի շահերը պաշտպանէր, ինչպէս Գերմանիայում, Բելգիայում կամ Ֆրանսիայում է, Անգլիայում չկայ: Ճիշտ է, համայնքների պալատում մի տասը, տասնեւհինգ մարդ կըլինեն, որպէս ներկայացուցիչներ, բայց այդ խմբի մէջ անկախ կուսակցութիւն կազմելու սաղմն անդամ չկայ, կուսակցութիւն, որ իւր զասակարգի որոշ ծրագիրն ունենար: Այդ բանուոր պատգամաւորներին ուղարկում են իրենց շնչաններն ոչ թէ ընդհանուր բանուոր զասակարգի շահերը, այլ ընդհանուակը,

ուղարկող շրջանի նեղ շահերը պաշտպանելու, որոնք կարող են և հակառակ լինել ուրիշ շրջանների բանուորական շահերին։ Այսպէս՝ մի շրջանի ածխահանքի բանուորները՝ կազմակերպուած մի հզօր արէգիւնիօն (դաշնակցութիւն, միութիւն) են կազմում, երկու բանուոր պատգամաւոր են ուղարկում, որ նրանք կուուեն օրեկան ուժ ժամ բանելու վեմ, որովհետեւ այդ նրանց համար ձեռնառ չէ։ Մի ուրիշ խումբ, նոյնպէս կազմակերպուած, ուղարկում է իւր ներկայացուցիչներին, ընդհակառակը, 8 ժամուայ աշխատանք պաշտպանելու։ Հաւասարապէս և ուրիշ արհեստաների արէգիւնիօններն ուղարկում են իրենց ներկայացուցիչներին յատուկ նրա համար, որ այս ինչ կամ այն ինչ խմբերի շահերը պաշտպանեն։ Իսկ ինչ վերաբերում է ընդհանուր պետական կամ ընդհանուր ազգային հարցերին, ընտրողները լիակատար ազատութիւն են տալիս իրենց ներկայացուցիչներին։ Ի հարկէ, քանի որ բանուորական ներկայացուցիչները չունեն ընդհանուր ծրագիր, չունեն ընդհանուր գաղափար, վերոյիշեալ հարցերի ժամանակ միանում են ազատամիտներին, իսկ երբեմն ել պահպանողականներին։ Առ հասարակ զրանք չխօսկան ներկայացուցիչներն են, խօսք են խնդրում միայն այն ժամանակ, երբ իրենց շըրջանի շահերին են դիպում։

Անզիւական բանուորների շրջանում տարածուած չէ սոցիալականութիւնը։ Իրա պատճառները շատ են և ի միջի այլաց Անզիւայի հասարակական գաղափարական կեանքի առանձնայակառութիւնները, և բոլոր վին կախումն չունի մարդու կազմակերպուած մարդուից։ Պատ-

ձառներից մէկն ել այսպէս է բացատրում Գայնդմանը. Անզիւայում սոցիալականութիւնն առաջ չէ զընում արէգիւնիօնականութեան զարգացման շնորհիւ։ Տրէգիւնիօնականները նեղ ու եսական են և աւելի հետաքրքրուած իրենց բանուորական վարձով կամ բանուորական օրը կրծատելով, քան թէ որնէ գաղափարականավ։ Այդ պատճառով արէգիւնիօնականութիւնը մի սարսափելի պահպանողական ցոյ է։

Սակայն վերջին քսան և հինգ տարուայ ընթացքում առաջ են եկել բանուորական նոր կազմակերպութիւններ, զաշնակցութիւններ, որոնք նորատակ են զրել՝ յենուելով բանուոր գասակարգին՝ բանուորական կուսակցութիւնն ստեղծել պառլամենտում։ Կան այնպիսի կազմակերպութիւններ, որոնք աշխատանքութիւններ, որ ապագայ բանուորական կուսակցութիւնը զուտ սոցիալիստական բնաւորութիւն ունենայ, իսկ միւսները, ընդհակառակը, ճիզն են թափում, որ բանուորական կուսակցութիւն չլինի, այլ բոլոր ժողովրդականների միութիւն լինի առանց խորելու, թէ ինչ են դաւանում՝ սոցիալականութիւն, արմատականութիւն թէ ազատամատութիւն։

Մինչեւ վերջին ժամանակներս Անզիւայի բանուոր գասակարգը բաւականանում էր քաղաքացիական աղատութեան այն իրաւունքներով և անտեսական կուուի ազատութիւնը պաշտպանող այն իրաւունքներով, որ կառավարող գասակարգերն ընդունում էին բանուորների նկատմամբ։ Բանուոր գասակարգը հաւատում էր, որ արէգիւնիօնների կանոնադրութիւնների սահմանում թոյլատրուած տնտեսական կուուով, ընտրութիւններին կողմնակի ձնշումն գործ 7

գնելով կառավարութեան վրայ և խնդրազրերի ու ժողովների միջոցով կը կարողանայ մարդավայրել գոյսութեան պայմաններ ձեռք բերել: Եւ երկար տարիների ընթացքում տրէդ-իւնիօնականութեամբ տարած յաղթութիւնները փաստելով վաւերացնում էին այդ հաւատի հիմնաւորութիւնը: Սուկայն վերջին տարիներս կեանքն սկսեց խախտել այդ հաւատի հիմքը: Բանուորներն աշազին գործադուլներ էին անում, որ մեծ զոհեր տուին տրէդ-իւնիօններին, և բանուորները տանուլ տուին, որովհետեւ գործարանատէրերի միջև գաղանի դաշնակցութիւն կար: Բացի զրանից՝ մեծ հարուած տուին ոչ թէ այս կամ այն տրէդ-իւնիօնինին, այլ տրէդ-իւնիօնականութեան սկզբունքին: Երկաթուղու բանուորները գործադուլ են անում, և տէրերը պահանջ են յայտնում երկաթուղու բանուորական միայնալ դաշնակցութեանն և մնան ուղում: Երկու տարի տեսում է այդ գատը, և տրէդ-իւնիօնը տանուլ է տաղիս, 100 հազար ռուբ. առելի մսիսելով դատական ծախքերի վրայ: Եւ միութիւնը վճարեց տէրերին 200,000 ռ. մնան է:

Դատարանի այս որոշումից յետոյ տրէդ-իւնիօնները կորցրին իրենց հաւատը, իրենց զրամարկը, որ անձեռնմխելի է, անհնարին դարձաւ գործադուլների միջոցով կոռուեն, որովհետեւ Անդիխում այդ տեսակ կուիւր շատ թանկ է նստում: Այդ պատճառով էլ բանուորներն սկսեցին մտածել մի կուսակցութիւն կազմակերպելու մասին, որ պառլամենտում ներկայացուցիչներ ունենան աշխատաւոր դասի իրաւունքները պաշտպանող օրէնքներ անց կացնելու համար: Քիչ չնստեց բանուորների վրայ և

վերջին տարիների կառավարութեան կործանիչ քաղաքականութիւնը, որի պատճառով հարկ զրին հացի, որ սակայն 1903 թ. վերացրին, թէյի, շաքարի, ծխախոտի և գարեջրի վրայ: Եւ ահա անկախ բանուորական կուսակցութիւն սաեղծելու համար 1901 թ. տրէդ-իւնիօնականների և սոցիալիստների ներկայացուցիչների համաժողով է լինում, և այդուղի հիմք է գրւում բանուորական ներկայացուցութեան կոմիտէին, որի ամեն մի անդամը տարեկան մի շիլլնդ պիտի վճարէ ծախքերը ծածկելու համար՝ թէ ընտառութիւնների ժամանակակից և թէ ներկայացուցիչներին վճարելու համար: Այդ կոմիտէի անդամների թիւը ներկայացում մի միլիոնից անցել է, հետեւաբար պարզ է, որ բանուորական դասակարգն արգէն ոտք է դրել քաղաքական ասպարէզը:

Կայ մի ուրիշ առաջնակարգ նշանակութիւն ունեցող երեցիթ, որ անկասկած մօտ ապագայում իւր կուիրը կը նէ քաղաքական կեանքի վրայ. դա իուլանդական հարցն է:

Դեռ անցեալ գարի 40-ականներին իուլանդիայում յեղափոխական շարժում է սկսում, մինչեւ անդամ ապստամբութեան փորձ է լինում: Այդ պատճառով այնտեղ վերացրին «Հարէսա-Կորպորացու» օրէնքը և բայառիկ միջոցներ գործադրեցին: Մինչեւ 60 թ. հանգստութիւն է տիրում, բայց յետոյ կրկին նորոգուում է յեղափոխական շարժումը: Հողի պակասութեան և ծայրահեղ չքառորդութեան պատճառով Ամերիկա գաղթած իուլանդացիները համար են այնտեղ այսպէս ասուած ֆէնիների ըն-

կերութիւնը, որ նպատակ ունէր բոլորովին, ան-
ջատուել Անդղիայից և անկախ հասարակապետու-
թիւն հաստատել Իոլանդիայում: Սյդ ընկերութիւնը
նոյն իսկ Իոլանդիայում անդամներ ունէր, բայց անդ-
ղիական կառավարութիւնը շուտ հասկացաւ նրանց
միաքը, պարագլուխներին ձերբակալեց, գատի մատ-
նեց և 1865 թ. նորից բացառիկ օրէնքներ մայրեց
այնտեղ: Ապա սկսեցին տեղի ունենալ գաղտնի ըս-
պանութիւններ և հրկիվութիւններ, իսկ 67 թ.
նրանք նորից փորձեցին ապստամբելու, բայց անյա-
ջող: 1869 թ., երբ Գլազոստոնն առաջին մինիս-
տրը եղաւ, կարողացաւ մի շարք միջոցներ անց կաց-
նել իոլանդայինների վիճակը թեթևացնելու համար,
թէպէս պառամենար սաստիկ ընդդիմապրութիւն
էր ցոյց տալիս: Մինչև 70-ական թուականներն Անդ-
ղիայում երկու քաղաքական կուսակցութիւն կար՝
պահպանողական և ազատամիտ, իսկ 70-ական և
80-ական թուականներին պառամենատում կազմո-
կերպւում է իոլանդայինների մի ուրիշ կուսակցու-
թիւն, որ աշխատում էր իոլանդիան բաժանել
Անդղիայից և այնտեղ հաստատել մի առանձին, ան-
կախ պառալամենտ: Գաղանի ընկերութիւններ կազ-
մակերպուեցին, դարձեալ սկսեցին սպանել անդղիա-
ցիններին, նորից սկսուեցին քաղաքական սպա-
նութիւններ կատարուել: Իոլանդական կուսակ-
ցութեան հիմնադիրն էր իոլանդացի փաստաբան
Բուտար: Սյդ կուսակցութիւնը զատուած էր թէ
պահպանողականներից և թէ ազատամիտներից,
բայց պատրաստ էր պաշտպանել այն կուսակցութիւ-
նը, որ համաձայն կըլինէր բաւարարութիւն տալ

նրա պահանջներին: 80-ական թուականներին առաջ
է գալիս իոլանդացի Պառնէլլը, որ պառլամենտում
մի ուժեղ կուսակցութիւն կազմակերպեց, որի անդամ-
ների թիւը հասնում էր 86-ի, և պարագլիսի ընդու-
նակութիւնների շնորհիւ այնպիսի ազգեցութիւն ու-
նեցաւ այդ կուսակցութիւնը համայնքների պալա-
տում, որ Գլազոստոնն սկսեց զիջումներ անկել երկրի
աղմայոյդ վիճակը խաղաղացնելու համար: Դեռ ևս
1869 թ. Գլազոստոնը պառլամենտում անց կացրեց
այն օրէնքը, որով իոլանդայում եկեղեցին բաժան-
ւում է պետութիւնից, և դա մի արգարացի միջոց
էր կաթոլիկ ժողովրդի վերաբերմար, որ հարստա-
հարութեան էր մատնուած ստորերկրեայ՝ արուեստա-
կան կերպով ստեղծուած և արուեստական կերպով
պահպանուող հիմնարկութիւնների կողմից: Դրանից
յետոյ գալիս է հողատիրական ակտը, որ պաշտպա-
նում էր իոլանդացի կապալառուներին անդղիացի
կալուածատէրերի կամայականութիւնից, այն է հե-
ռացնելուց, իսկ 1881 թ. առաջին օրէնքը հրատա-
րակուեց, որի հիման վրայ կապալառուի կողմից կա-
լուածատիրոջ վճարուող վարձը կախուած է ոչ
միայն երկուստեք համաձայնութիւնից, այլ և հար-
կաւոր եղած դէսքում որոշում է մի առաձին գա-
տական վարչական յանձնաժողով: Սակայն այդ բո-
լոր զիջումները չեն կարող բուժել իոլանդացի
պատմական հիւանդութիւնը՝ անբնական յարաբ-
րութիւնները, որ առաջ էին եկել անպլիացների
կողմից բնիկներին ձնշելուց: Համայնքների պալատում
ազատամիտ և իոլանդական կուսակցութեան մէջ գաղ-
ալատամիտ և համաձայնութիւն կար: Գլազոստոնն այդ ժամա-
նի համաձայնութիւն կար:

Նակ առաջարկեց իւր հոմ-րուլը: Պահպանողականները նոյնպէս կամենում էին համերաշխութիւն կայացնել իուլանդական ազգային կուսակցութեան հետ: Բայց հենց այդ հոմ-րուլի պատճառով ազատամիտների բանակում պառակութիւն ընկաւ, ազատամիտիւնիօնականներն անցան պահպանողականների կողմը, այնպէս որ սա բաւական ուժեղացաւ, և Սոլիստիրին հրաժարուեց իուլանդական կուսակցութեան հետ միանալու մտքից և կռիւ յայտնեց Գլազոտնի առաջարկած հոմ-րուլի նախագծի դէմ: 1886 թ. էր, որ ազատամիտները չընտրուեցին, և նրանց կուսակցութիւնը լուծուեց: Բացի գրանից 1890 թ. մեռաւ Պառնէլլը, պառակտութիւններ ծագեցին իուլանդական կուսակցութեան մէջ, որի շնորհիւ և նա թուլացաւ: 1892 թ. ազատամիտները կրկին յաղթեցին և Գլազոտնը նորից մինիստրութեան զլուխն անցաւ: 1893 թ. նա վերատին առաջարկեց հոմ-րուլի նախագիծը փոփոխութիւններով, որ համայնքների պալատում 34 ձայնի առաւելութեամբ անց կացաւ, իսկ լորդերի պալատում 419 ձայնով ընդդէմ 41-ի մերժուեց: Գրանից յետոյ 1894 թ. Գլազոտնը հրաժարուեց և խորին ծերութեան պատճառով (այդ ժամանակ նա 85 տարեկան էր) բոլորովին հեռացաւ քաղաքական ասպարէղից:

Իոլանդացիք դարձեալ շարունակում էին 80
մարդ պատղաժաւոր ուղարկել պառլամենտ, որոնք
հոմ-լույի պաշտպան էին, կամենալով տաել զբանով,
թէ ազգային պառլամենտ ունենալին ամբողջ ժողո-
վրդի պահանջն է. և կախումն չունի տառաջնորդների
մէջ եզած պառակտումից կամ համերաշխ զործու-

թիւնից ծիշա է, Սոլեսբերին՝ հակառակ լինելով
հոմ-րուղին՝ այնու ամենայնիւ անհրաժեշտ սեպեց մի
քանի զիջումն անելու իռանդացիներին: Տեղի ունե-
ցան մի քանի կալուածատիրական բարենորոգութիւնը՝
երկրագործութեան մինխորութիւն հաստատեցին,
տեղական ինքնավարութիւն տուին ժողովրդապետա-
կան ամենաընդարձակ սկզբունքներով: Բայց և այն-
պէս այդ բոլորը գոհացնել իռանդացիներին չէր կա-
րող հետեաբար և չէր կարող նուազեցնել հօմ-րու-
լի պահանջը: 1888 թ. երկու իռանդացի հայրենա-
սէր, Վիլեամ Օհրայէն և Մայկոլ Դէկեստ հիմնում
են Միացեալ իռանդական Ընկերութիւնը*, որի գրո-
շակի տակ խմբւում է ամբողջ իռանդական ժողո-
վուրդը, իսկ նրա նպատակն է հողը վերադարձնել
ժողովրդին և ազգային պարամենտ վերաստեղծել:
Իռանդական ազգային կռուի զիստոր պահանջն
այն է, որ հողն երկրագործներին վերադարձնուի և
լէսոլորդիզմն ոչչացուի, որ երկրի ամբողջ հիւթը
ծծողորդիզմն է: Դա մի կենսական պահանջ է, որովհե-
ծակ լէսոլորդերը յափշտակել են հողերն և այնպիսի
բարձր գներով են կապալով տալիս, որ սովոր այն-
տեղ մի քրօնիկական երեսյթ է: 1846 թ. իռան-
դացի բնակչութեան թիւը պակասում է և $8\frac{1}{2}$
մլւ հասել է $4\frac{1}{2}$ մլւ: Իսկ լէսոլորդիզմին վերջ տա-
լու համար նրանք իրենց պառլամենտը պիտի ունե-
նան և իրենք իրենց համար օրէնքներ պիտի սահ-
մանեն: Անզիայի պառլամենտի միջոցով նրանք այդ
բարենորոգութիւնն անել էին կարող այն պատճա-

* Որոնք Ասգլիայի և Իոլանդիայի միութիւնն (ուսիա, ուսրուտիստ) էին կամանում:

սով որ լորդերն ու պահպանողականները նոյնպէս
մեծ կալուածատէրեր են և բնականաբար դաշնակից
լէնդլորդերին, և հէնց այդ իսկ երկիւղն աչքի առաջ
ունենալով, որ լէնդլորդիզմը կարող են վերացնել,
պահպանողական կուսակցութիւնն անհաշտ թշնամի
է հոմ-բուլին:

Բայց և այնպէս Գլադստոնի և Սոլիւսբերիի մու-
ճած բարենորդումների շնորհիւ կապալավարձի մի
երրորդը պակասեց: Բայցի զրանից՝ ժողովրդապետական
ինքնավարութիւնն իուլանդիայի տեղական կեանքից
հալածեց լէնդլորդերի ազգիցութիւնը, քչացրեց նը-
րանց եկամուտը, հետեւաբար նրանց համար հողա-
տիրութիւնն այլ ևս չունի առաջուայ հրապոյը: Վերջապէս
մօտ մի տարի առաջ Թուբլինում մի
ժողով էր եղել՝ լէնդլորդերից և երկրագործ-
ներից բազկացած, ուր մի նախագիծ էր մշա-
կուած, որի հիման վրայ բոլոր հողն անցնում է
գիւղացիների ձեռը, ի հարկէ ժամանակի ընթացքում
արժէքը վճարելով, և պայմանները ձեռնուու էին եր-
կու կողմի համար էլ: Դեռ ևս 1902 թ. Բալֆուրի
կառավարութիւնն իուլանդական պատգամաւորներից
10 մարդոց աւելի էր բանտարկել, իսկ ապա դաշ-
նակցութիւն հաստատեց ազգայինների կուսակցու-
թեան հետ, պատգամաւորների պատաստում օրինա-
գիծ անց կացրեց իուլանդական հողերը գնելու մասին
գանձարանի երաշխաւորութեամբ և 120,000.000 ռ.
գանձարանից օժանդակութիւն աալով՝ չվերադարձ-
նելու պայմանով: Իսկ երբ կալուածատիրութիւնը
իուլանդիայում, կրկորցնէ իւր նշանակութիւնն, այն
ժամանակ կը վերանայ Սնդիայի և իուլանդիայի մե-

ջե եղած դարաւոր թշնամութիւնը, և իուլանդային
կը արուի անկախ պառլամենտ: Մինչդեռ իուլանդա-
կան կուսակցութիւնն առաջ ընդդիմագրութիւն էր
կազմում պառլամենտում, այժմ պահպանողական
կուսակցութիւնն է միացել, որովհետեւ լորդերի պա-
լատը միշտ նրանց կողմն է լինում, հետեւաբար և
միայն այդ կուսակցութիւնը կարող է իրագործել
իուլանդացիների փափագած բարենորոգումները:

7. L U S P N H Ø H H U U B R C

ա) Պատմական տեսութիւն

Դեռ ևս XVIII դարում անգլիական պառլամենտի գերիշխանութիւնը սերտ շաղկապուած էր մի փաքսաթիւ գասահարգի՝ հողատէր լորդերի հետ։ Բայց և այնպէս նրա բոլըր զործերի գաղտնի հիմքը ժողովրդապետութեան գաղափարն էր, և, այդ գաղափարին յենուելով պառլամենտն իրեն է ստորագրում երկրի միւս իշխանութիւնները։ Կառավարող գասահարգն օգտում է իւր քաղաքական արտօնութիւններից յանուն երկրի ինքնավարութեան, և հասարակական կարծիքը, որ յաճախ բոլորովին տարբեր և քիչ թէ շատ աղաւաղուած է լինում, բայց դարձեալ քաղաքական կեանքին ուղղութիւն է տալիս և կարեորազգյն գէպքերում նա իրեն ցոյց է տալիս թէ ուղղակի՝ ընտրութիւնների միջոցով և թէ կողմանակի՝ երկրում քաղաքական որոշ միջնորդաւութիւնների մասունական պառլամենտի գործ առեղջելով։

Այդ շրջանում դլետառը գերը կատարում էր կալուածատիրական կամ հողատիրական հարցը— հողի սեպհականութիւնն անյնում է սակաւաթիւ կալուածատէր ազնուականներին։ XIX դարի վճակագրութիւնը պարզ ցոյց է տալիս զրա հետեւանքը։ Մօտ 1880 թ. Միացեալ թագաւորութեան՝ $\frac{4}{5}$ մասը

7000 մարդու էր պատկանում, Անգլիայի կեսը 150
մարդու սեպհականութիւն էր: Շոտլանդիայի կեսը
—75 մարդու, իուլանդիային—35 մարդու: Եթէ
այս հանդամանքներում յեղափոխութիւն չյառաջա-
ցաւ, դրա պատճառն այն է, որ հոգատէրերն սկսե-
ցին վաճառել և թողնել իրենց հողերը, որպէս զե-
արդիւնաւէտ կերպով տեղաւորուին քաղաքների
գործարաններում ու արհեստանոցներում, իրենց ձեռ-
քը ձգեն անգլիական առևտրի խոշորագոյն շահերը,
որ կամաց կամաց առաջնակարգ տեղ էր բռնում
աշխարհում: Նրանք նյոնպէս սկսեցին գաղթել գէ-
պի աշխարհիս հինգ մասերում ունեցած իրենց գա-
ղթները: Եւ այսպէս անգլիական միւս գասակար-
գերն ազնուականութեան առաջնորդութեամբ համաշ-
խարհային վաճառականութեան գլխաւորները հան-
դիսացան և երկրագնդիս վայրենի կամ կիսավայրենի
կրկների բնական հարստութիւնների շահագործող-
ներն եղան:

Սյսպէս թէ այնպէս քաղաքական գլխաւոր դերը
կատարում էր աղնուականութիւնը. պառլամենտի
ընտրութիւննելը նա էր կատարում և պառլամենտի
միջոցով նա գերակշռութիւն ունէր թէ տեղական
և թէ գաւառական կառավարութեան մէջ: Առեւտրի
և արդիւնաբերութեան բարգաւաճան շնորհիւ դրա-
մատէրիի թիւն Անգլիայում օրէ ցօր աճում էր:
Ըստ էր իրի թիւն Անգլիայում օրէ ցօր աճում էր:
Ըստ էր իրի թիւն Անգլիայում օրէ ցօր աճում էր:
Ըստ էր իրի թիւն Անգլիայում օրէ ցօր աճում էր:

մայնքների պալատի համար: Բայցի դրանից՝ ընտրողների թիւը շատ սահմանափակ էր, մանաւանդ քաղաքներում, և ընդհակառակը՝ կային այսպէս առուած «փթած գիւղեր»), որոնք շատ քիչ բնակիչ ունենալով հանդերձ վաղաց ի վեր պատգամաւոր ուղարկելու իրաւունքը վայելում էին: 1768 թ. Անդիպատման ընտրողների թիւը 16,000-ից աւելի չէր: Գրել այն ժամանակ այդ բաների մասին չէր կարել, որովհետեւ լրագրեր չկային, խօսողին էլ առաջնն ինքը պառլամենտը կըհալածէր:

Սակաւաթիւ ազնուականների գերիշխանութեանը նպաստում էր և ցենզը, կոմսութիւնից (դաւառ) ներկայացուցիչ լինելու. Համար 500 ֆունտ եկամուտ պիտի ունենար (մօտ 5000 ռ.), գիւղաքաղաքից կամ քաղաքից ընտրուելու համար՝ 300 ֆ.: Եւ բայց դրանից՝ պատգամաւորները վարձատրութիւն չին ստանում, իսկ ընտրութիւններն էլ մեծ ծախք էին պահանջում:

Դէորդ III-ի օրով սասաիկ զարգացել էր հովանաւութեան սիստեմը: Մինիստրները, մուտք ունենալով արքունիքը, միայած ոյժերով զանազան միջոցներ էին դորձ գնում, որպէս զի պալատներում իրենց ցանկացած անդամները լինեին: Պառլամենտը մի քանի անգամ փորձ է անում խոյս տալու իւր զագալմնակէտին հասած հովանաւորութիւնից, բայց և այնպէս այդ նրան չէ յաջողւում XVIII դարի վերջում: Պետական հայրենասէր մարդիկ առաջարկում են այդ կորստարեր, կործանիչ աղքեցութեան առաջն առնելու համար բարենորոգել ընտրողա-

կան իրաւունքն և պատգամաւորական շրջանները նորից բաժանել:

Այսպէս ընտրութիւնների եղանակը հնացած և անկատար էր: Պատգամաւորներ էին ընտրւում շատ աննշան զիւղերից, հարուստները թէ իրենք էին փողի շնորհիւ պալատ ընկնում և թէ նոյն փողի շնորհիւ կաշառքով ընարել էին տալիս իրենց մարդկանց: 1816 թ. էին եղանակով համայնքների պալատի համար ընտրուած 658 անդամներից միայն 171 հոգի էին կանոնաւոր ձանապարհով ընտրուած, իսկ մնացեալ 487 հոգին զանազան ազգեցիկ մարդկանց կողմից առաջուց արդէն առաջարկուած էին ընտրողներին: Տարկաւ շատերը գժկոհ էին ընտրութիւնների այդ եղանակից և 1770 թ. սկսած 27 տարուայ ընթացքում 7 անգամ պառլամենտում հարց են բարձրացնում ընտրութեան եղանակը բարենորոգելու մասին, բայց միշտ էլ անյաջողը: Միայն XIX դարի սկզբում պառլամենտի արամազրութեան մէջ փոփոխութիւն է սկսում նկատուել և երբ 1830 թ. ձայների մեծամասնութիւնը վիզերն են ստանում, սկսում է բարենորոգումների շրջանը:

Ամենից առաջ երեան է գալիս քաղաքական գլուխանութեան մէջ ժողովրդապետական ուղղութիւնը, որ անկասկած նպաստել է քաղաքական հաւասարութեան յաջողութեանը: Գլխաւորապէս նայալթութիւն տարաւ այն պատճառով, որ ժողովրդի ստորին դասակարգերը գիտակցօրէն զարթնել էին և եռանդուն կերպով պաշտպանում էին այդ ուղղութիւնը: Ակզեմ, ինչպէս սովորաբար լինում

է, աշխատում են տեղի չառլ այդ նոր հոսանքին, իսկ ապա՝ խելայի զեջութիւնը են անում: 1819 թ. յետագարձական կուսակցութիւնը հրէշաւոր օրէնքներով է գուրս դալիս քաղաքական ընտրութիւնների դէմ և կոտորած անում ընտրողական իրաւունքներն ընդայնելու համար ագիտացիա անող զիւաւոր կենարոններից մէկում՝ Մանչսուրում: Բայց արդէն 20-ական թուականներին Ուկլինգտոնի և Պիլլի մինխարութեան օրով սկսում են զեջութիւններ անել: Ամենից առաջ Ճնշութիւնից ազատուեցին այն քաղաքայինները, որոնք իրենց դաւանութեան պատճառով զրկուած էին քաղաքական իրաւունքներից, թէև մնացեալ բաներում նրանք ոչնչով չէին տարբերում իրենց հետ հաւասար հասարակական դիրք ունեցող միւս անզլիացիններից:

1830 թ. մեռնում է Գէրոգ IV թագաւորը, և գահն անցնում է նրա եղբայր Վիլհելմ IV-ին: Թագաւորը պառլամենտ է գումարում, և վիզերն աւելի ոժեղ են լինում: Սյդ ժամանակ լրդ Գրէյն առաջարկում է ընտրութիւնների նոր օրէնքներ մշակել բայց Ուկլինգտոն մինխարը բոլորովին մերժում է: Քաղաքում յուղումն է սկսում: Հետեւեալ օրը մինխարութիւնը ճայների մեծամասնութիւնը չէ ստանում, թագաւորը մինխար է նշանակում Գրէյն: 1831 թ. մարտ ամսին 1-ին Ուսոսէլը բարենորոգութիւնների բիլլ է առաջարկում: Պահպանողականները սասափի կատաղել էին, իսկ ազատամիտներն ուրախացել և պահպանում նրան: Ժողովուրդը մեծ բերկութեամբ է ընդունում նոր օրէնքները, որոնք սաստիկ հարուած են տալիս ազնուականութեանը, որովհետեւ «Փը-

թած զիւղերից» օճ-ը ներկայացուցիչներ ուղարկելու իրաւունքից զրկուեցին, մինչ դեռ նրանք 112 մարդ էին ուղարկում: Ուրիշ աեղերից էլ 32 ներկայացուցիչն պակսեցրին: Մեծ քաղաքներից 22-ը, որոնք մինչ այդ պատճամաւոր ուղարկելու իրաւունքից զուրկ էին, երկու-երկու մարդ ուղարկելու իրաւունք են ստանում, իսկ 20-ը—մի մի մարդ ուղարկելու իրաւունք: 47 քաղաք, որոնք 2000-ից քիչ բնակիչն ունէին, փոխանակ երկու-երկու պատճամաւոր ուղարկելու, մի-մի մարդ կարող էին ուղարկել: Լոնգոնն ևս 8 ներկայացուցի իրաւունք ստացաւ: Ընտրողների շրջանը լայնացաւ: Սյդ ժամանակ ննթաղութիւն կար ընարելու իրաւունք տալ եւ տանտէրելին, եւ բնակարան վարձողներին, որոնք 10 ֆունտից պակաս վարձ չէին վճարում: Բայց այդ օրէնքները շատ գժուար էին անցնում, անդամների կէսը հակառակ էր, և այնպիսի ուղղումներ էին մտցնում, որ օրէնքի միաբը փոխում էր: Գրէյնի խորհրդով թագաւորն արձակում է պառլամենտը: Իսկ երբ նորից է գումարեւում նոր օրէնքները ընդունուին: Բանուորներն էլ պահպանում էին, որ ընտրողական իրաւունքն ամենապահպանում էր հարուստների և քի համար ընդհանուր լինի, թէ հարուստների և թէ աղքատների, նաև ընարութիւններն ամեն տարի լինին: Երկում յուղումն ու վրդովումն էր տիրում: Գրէյն ստիպում է հրաժարական տալու, ժողովուրդն էլ աւելի ևս զրգուած է լորդերի պալատի

դէմ: Ապա Գրէյը նորից մինիստր է նշանակւում, և լորդերը թագաւորի խնդրանօք զիջում են անում: 1832 թ. յունիսին բարենորոգումների բիլլն օրէնք դարձաւ: Երկու հարիւր քսան հազար մարդ էլ ընտրելու իրաւունք ստացան, պատգամաւորների կաղմը բարւոքուեց, և սկսեցին տւելի լաւ պարապել զործերով ժողովուրդն էլ տւելի շատ սկսեց հետաքրքրուել պառլամենտով: Համապատասխան փոխիսութիւններ էլ մայրին եռանդիայի և Շոտլանդիայի ընտրողական եղանակի մէջ:

Նոր օրէնքներով ընտրելու իրաւունք ունենալու համար ցենզ էր հարկաւոր կամ սեպհականատէր պիտի լինէր մարդ, կամ տան, կրտակի, պահեստի և կամ գործարանի կապալաւու, որոնք տարեկան 10 ֆունտից պակաս վարձագին չեն բերում. կամ հողատէր պիտի լինէր և կամ երկար տարիներ հողի կապալաւու: Պարզ է, որ բանուոր գասակարգը դուրս էր մնացել ընտրելու իրաւունքից զօնիւնել էր, և այդ նոր օրէնքները ձեռնառու էին զիւաւորապէս արդիւնաբերող գասակարգերին: Մինչ դեռ XIX-դ դարում Անգլիայի անտեսական կեսնքի զարգացման շնորհիւ առաջ էին եկել երկու նշանաւոր գասակարգ—գործարանատէրեր և բանուորներ: Ի հարկէ դրանք գոհ լինել չեն կարող որ պառլամենտում հողատէրերն են դերակշռում, ուստի այդ երկու գասակարգերն էլ ձգտում էին պառլամենտում ձայն ունենալ որպէս զի իրենց օգտին մի բան անել կարողանան: Եւ ահա 32 թ. օրէնքները բաւարարութիւն շտուին միայն բանուորներին, սակայն նրանք չփհատեցին, յետոյ հասան-

իրենց նպատակին Գլադստոնի մինիստրութեան ժամանակ:

Դեռ ևս 1830 թ. Անգլիայում բանուորների թիւն աճել էր, և երբ 32 թ. օրէնքները նրանց ունիւնքներին, սկսեցին զրգուուել և դժգոհութիւններ ցոյց տալ: 20-ական թուականներից արգէն բանուորները սկսել էին կազմակերպուել փոխադարձ օգնութեան ընկերութիւններ հիմնել: Դրանց մէջ սկսում է յղանալ պառլամենտում ներկայացուցիչներ ունենալու միաբը: Մի քանի տարուց յետոյ հիմնուում է «Լոնդոնի բանուորական միութիւնը», որ նոր օրէնքներ և իրաւունքներ էր պահանջում: Այդ քաղաքական շարժումը հետեւալ վեց կէտերում ամփոփեց իւր պահանջները. 1) որ բոլոր չափանիւ առանց բացառութեան ձայն տարու իրաւունք ունենան (ընդհանուր ընտրողական իրաւունք.) 2) որ պառլամենտի անդամներն իւրաքանչիւր տարի ընտրուին և ոչ թէ հօթը տարի մի անգամ. 3) որ գաղտնի քուէտարկութիւն լինի. 4) որ համայնքների պարագաներին կատամածք կայքիցենզը վերացուի. 5) որ պառլամենտի անդամներին վարձատրութիւն տրուի, որովհետեւ այդ գէպօւմ ներկայացուցիչ կարող են ընտրուել և ոչ հարուստները և 6) որ երկիրը բաժանուի համահաւասար ընտրողական շրջանների:

Այդ յօդուածները մի մեծ միախնդում կազմեցին, որ իսկոյն և եթ 3000 մարդ ստորագրեցին և վճռեցին օրէնքի նախագիծ մշակել պառլամենտին առաջարկելու համար: Եւ 1838 թ. ամբողջ երկրում չարկելու համար: Եւ ամբողջ երկրում ստորագրութիւնն էին հաւաքում այդ խնդրագրի առաջարկան ներկայացնելու համար: Այդ տակ պառլամենտին ներկայացնելու համար:

խնդրազրում նրանք բողոքում էին ծանր հարկերի, բանուորների աղքատութեան, ժողովրդի կրած բոլոր անարդարութիւնների դէմ: Այնտեղ ասած էր, թէ ժողովուրդը յշս ունէր, որ 1832 թ. օրէնքներն ու բարենորոգութիւնը կը թեթևացնէին բանուորների վիճակը, բայց այդ գասակարգը բնաւ չշահուեց նրանցից. իսկ ապա գալիս են վերոյիշեալ վեց կէտերը: Այդ խնդրազրի առիթով բազմաթիւ և բազմամարդ ժողովներ եղան և ամեն տեղ էլ նոյն բանաձեն ուրշեցին: Կառավարութիւնը ցրւում էր այդ ժողովները, ուստի եղան մարդիկ, որոնք սկսեցին քարոզել թէ պառլամենտից և թագաւորից ուժով պէտք է ստանալ բարենորոգութիւնը և զեջութիւնը: Պահպանողականներն ու ազատամիաները, որոնք ըստ մեծի մասին հարուստ գասակարգերից էին, հաւաքւում են և վճռում ոչ մի զեջութիւն չանել ժողովրդին, այլ ընդհակառակը պահանջում են կառավարութիւնից, որ չժողնէ ժողովրդին իրաւունքներ ուղենալու և մինչեւ անգամ խիստ պատմէ պարագլուխներին և առաջնորդներին: Ժողովուրդն էլ երկու խմբի է բաժանում. մէկը կամենում է իւր պահանջները խաղաղ ձանապարհով, զբելով ու խօսելով ստանալ իսկ միւսը, — ուժով: Օրէ յօր յուղմունքը սաստկանում էր, սաստիկանութիւնն էլ շարունակ ձերբակալութիւններ էր անում: Այնու ամենայնիւ 1832 թ. յուլիսի 12-ին խնդրազրերը, որին 1,000,000 մարդ էր սաստիկալ պառլամենտին ներկայացրին: Ժողովրդի պահանջները պաշտպանում էր Արտվուրը, բայց նրան պատասխանում էին, թէ ինչ որ ժողովուրդը պահանջում է, չէ կարելի տալ: Այս անյա-

ժողովութիւնից յետոյ բանուորական շարժումը թուլացաւ: Գործարանատէրերն սկսեցին դուրս անել շարժմանը մասնակցած բանուորներին, ապա սրանց մէջ էլ պառակտութիւն ընկաւ. մի մասը թողեց քաղաքականութիւնն և սկսեց զբաղուել փոխագարձ օգնութեան խաղաղ ընկերութիւններով ու միութիւններով, իսկ միւս մասը յարեց այն ընկերութիւններին, որոնց նպատակն էր քաղաքական իրաւունքներ ձեռք բերել: Մանաւանդ անյողդողդ մնացին իռլանդացիք, որոնց պարագլուխն Օ'Կոննորն էր: 1842 թ. նորից առաջարկում են պառլամենտին նոյն խնդրազրին, աւելացնելով մի նոր կէտ, այն է բաժանել իռլանդիան Անգլիայից և տալ նրան իւր առանձին պառլամենտը: Այդ խնդրազրի ըլ 3 միլիոն 300 հազար մարդ էր սաստիկալ:

Ժամանակը շատ տագնապալից էր և աղմկայց գրանուորները շուտ շուտ խմբւում էին և գործադրուներ անում, գործարանները կանգնում էին. բանուորների և զօրքի միջև շարունակ ընդհարութիւններ էին տեղի ունենում: Նորից բանուորական կուսակցութեան մէջ պառակտութիւն է ընկնում, գարձեալ նրա շարժումը թուլունում է, և միայն 1847 թ. նորից շաժում է սկսում, երբ այդ կուսակցութիւններից մի քանի հոգի, ի միջե այլոց և Օ'Կոննորը պառլամենտի անդամներ են ընտրում: 1848 թ. ֆրանսիական յեղափոխութեան լուրերն աւելի ևս յօյս տուին բանուորական կուսակցութեան, որի կողմից համակրական ուղերձ ուղարկուեց Պարիզ և երրորդ անգամ նոյն խնդրազրիր պառլամենտին ներկայացուեց: Սակայն այս անդամ էլ գործնական յաջողու-

թիւն նա չունեցաւ, այս անգամ էլ «ժողովրդի քարտի» կուսակցութեան շարժումը բոլորովին խլացաւ: Բանուորները անձնատուր եղան ինքնապաշտպանութեան և փոխազարձ օգնութեան ընկերութիւնների կազմակերպութեան՝ ամեն մի ծիւղի համար առանձին: Բայց յետոյ Անգլիայի բանուորները նորից պահանջներ առաջարկեցին, որոնցից մի քանիսն արդէն իրագործուած են, և թէսէտ բանուորական շարժումն Անգլիայում մի առանձին յաջողութիւն չունեցաւ, բայց և այնպէս նա սովորեցրեց բանուորներին հոգս քաշել իրենց վիճակի մասին և հետաքրքրուել հայրենիքի քաղաքական գործերով:

Յիսնական թուականներին արդիւնաբերութիւնն հսկայական քայլերով առաջ էր գնացել, ժողովրդի բարօրութիւնը բարւոքուել էր, ուստի դասակարգերի կոհել կորցրել էր իւր սուր բնաւորութիւնը: Այդ շրջանն անցնում է առանց փոփոխութիւնների: Բայց որովհետև բանուորներին արգելուած էր ժողովներ անել, գործադուլ լինել, հետեւաբար իրենց վիճակի բարւոքման համար կոիւ մղել գործարանատէրերի գէմ նրանք չէին կարողանում, այդ պատճառով միացան արձատականների հետ, որպէսզի կարողանան պառամենտում փոփոխել տալ այդ օրէնքները: Այդ շարժման զլիսար ներկայացուցիչը Գլացիստոնն էր: 1866 թ. ընտրողական ցենզի նոր օրինագիծ առաջարկուեց, սակայն անց չկացաւ: Նորից բանուորները յուզուեցին, ժողովներ արին և պահանջեցին, որ ընդհանուր ընտրողական իրաւունք լինի: Եւ ահա 1867 թ. պահանջնողական Դերբի և Դիզրակլի մինիստրները ստիպուած են լինում զիջումներ անել և ընդունել

ընարողական իրաւունքի բարենորոգութիւնը, որ պատրաստել էին աղաւամիտներն և տարածել ժողովրդի խաւերում: Այս նոր օրէնքով ամեն մի գործի աէր մարդ, որ աղքատների օգախն հարկ է վճարում, ընտրելու իրաւունք է ստանում. նյոնպէս և ամեն մի բնակարան վարձող հետեւաբար և բանուորները (յենզը գարձեալ 100ռ. մնաց). 11 դիւզաքաղաքից ներկայացուցիչներ ուղարկելու իրաւունքը խլեցին, 35-ին միայն մի մարդ ուղարկելու իրաւունքը թողին: Ընդհանր կանոնաւորեցին և խածայները նրանց տուին: Նոր օրէնքների հիման վրայ պարագաներն արձատականներն ու բանուորների ներկայացուցիչները, որոնք կողմնակից էին բարենորոգութիւնը յօգուա բանուորների: Երբ 1884 թ. Գլացիստնը կրկին անգամ մինիստր եղաւ, ընդհանուր քուէտութեան իրաւունքն էլի առաջ գնաց: Զայն տալու սկզբունքը զործադրեցին և զիւզական բանուորների նկատմամբ, բայց յենզը գարձեալ մնաց, ուստի բառիս լայն նշանակութեամբ մինչեւ օրս Անգլիայում ընտրողական ընդհանուր իրաւունք չկայ: 1872 թ. մայրին գտղտնի քուէտարկութիւն:

բ) Ժամանակակից ընտրութիւնները:

Ընարողական պայքարն Անգլիայում չըրս զլիսար գործողութիւնից է բազկացած. յուցակագրութիւնից, կուսակցութեան անգամներ գտնելուց, աթիւնից, կուսակցութեան անգամներ գտնելուց, պատաշիայից և վերջապէս քուէտարկութիւնից: Ամեն մի գիտացիայից և վերջապէս քուէտարկութիւնից: Ամեն մի թեկնածու իւր ընտրութիւնն յաջողեցնելու համար պիտի ունենայ փորձառու և նուիրուած օգնական-

ներ, ահազին գումար պիտի ծախսէ և ժամանակ կօրցնէ:

Թեկնածուի և ընտրողների միջև միշտ կապ է լինում: Թեկնածուն ինքն անձամբ կամ օգնականների միջոցով հետեւում է իւր ըջանի ամեն մի ընտրողն, գալիս է նրա տունը, բացարում է իւր ծրագիրը, տալիս է նրան թռուցիկներ և զանազան բրոշերներ: Եթէ ընտրողներից մէկը փոխել է իւր բնակարանը, գտնում է նրան, հետեւում է ցուցակագրութեանը, պակասը լրացնում է, բաղմաթիւ ճառեր է արտասանում, ժողովներ է անում բացօգեայ աեղերում՝ հրապարակներում և կամ դահլիճներում: Թեկնածուի ընտրութիւնից յետոյ էլ այդ կապը չէ խզում: Անհրաժեշտ է, որ յետոյ էլ պարբերաբար ժողովներ անէ և պահպանէ իւր յարաբերութիւններն ընտրողների հետ, որպէս զի միւս անգամ էլ նրան ընտրեն:

Իւրաքանչիւր ըջանի քաղաքային իշխանութիւնն է ընտրողների ցուցակը կազմում, և եթէ թեկնածուն նկատում է, որ այս-ինչ կամ այն-ինչ ոքն ընտրելու իրաւունք ունի, բայց անունը ցուցակի մէջ չէ մտցրած, մտցնել է տալիս: Կան շատերը, որոնք չէզօք կամ անտարբեր են դէպի քաղաքական գործերն և ուշադրութիւն չեն դարձնում՝ իրենց անունները մտցրած են ցուցակի մէջ թէ ոչ: Ցուցակի մէջ, ընդհակառակը, կարող են լինել այնպիսի մարդկանց անուններ, որոնք ընտրութեան իրաւունք չունին: Այդ պատճառով էլ ցուցակներն ըստուգւում են երկու կուսակցութիւնների թեկնածուների կամ նրանց լիազօրների կողմից: Իսկն ըստ

ինքեան հասկանալի է, որ ամեն մի թեկնածուի համար կարեւոր է, որ այս-ինչ ընտրողական ըջանում ապրողներից և իրեն համակրողներից որքան կարելի է շատ մարդու անուն ցուցակագրուի, որովհետեւ ոչ ոք, եթէ միայն անունը ցուցակ չէ մըտցրած, ձայն տալ չէ կարող: Միևնույն ժամանակ նրա համար շատ ձեռնատու է, որ իւր հակառակորդի կուսակցութիւնից, որքան կարելի է, քիչ մարդ զի կուսակցութիւնից, որքան կարելի է ապահովառուի: Եւ ահա այդ պատճառով թեկնածուներից իւրաքանչիւրն աշխատում է ձշղիտ տեղեկութիւններ հաւաքել ընտրողական ըջանի բոլոր բնակիչների մասին և խստիւ հսկել ընտրողալըր բնակիչների մասին: Այդ գործը հեշտ գործ չէ, բաւական ժամանակ է պահանջում և գործ չէ, բաւական ժամանակ է պահանջում: Այդ կան շրջաններ, որոնք մինչեւ 200,000 բնակիչ ծախք: Կան շրջաններ, որոնք մինչեւ ունին, այդքան բազմութեան մասին տեղեկութիւն հաւաքեն, ակներեւ է, մեծ աշխատանք է պահանջում: Աչքի առաջ պէտք է ունենալ և այն հանգամանքը, որ անդիւնական օրէնքով ընտրողական ցուցակը, որ անդիւնական օրէնքով ընտրութիւն և ձայնի իները կազմւում են տարուայ վերջում և ձայնի իները ըստունք ունին նրանք, որոնք մի որոշ շրջանում ըստունք վերջին յուլիս ամիսը բնակուել են 12 ամինչեւ վերջին յուլիս ամիսը բնակուել են, որովհետեւ որևէ պատճառով տեղափոխուել են, որովհետեւ որևէ պատճառով կախուած է լինում երբեմն ընտրութիւնների երբը կախուած է լինում պահնի ձայնից, որոնք այս կամ այն կուսակցուի քանի ձայնից, որոնք այս կամ այն կուսակցուի թեկնածուն ինքն թեկնածուն առաւելութիւն են տալիս: Թեկնածուն ինքն թեկնածու կամ իւր գործականների միջոցով գտնում անձամբ կամ իւր գործականների միջոցով գտնում է այդպիսի ընտրողներին, այցելում է նրանց, զրա-

ւում է իւր կողմն և մինչեւ անգամ միջոց է տալիս դալ ձայն տալու: Օրէնքով թեկնածուն իրաւունք չունի իւր հաշուով ընարողին բերել այնահեղ ուր քուէատութիւն է լինում: Բայց ի՞նչպէս կարելի է զրա առաջն առնել. թէ թեկնածուն և թէ նրա գործակալները միթէ չեն կարող ընարողի յաւ ծանօթը կամ բարեկամը լինել և միասին դալ:

Եթէ ցուցակում պատահում են այնպիսի մարդկանց անուններ, որոնք ընտրելու իրաւունք չունին, շահախնդրուած թեկնածուն կամ նրա գործակալ ներն իսկոյն յայսնում են բարբիստերին: Բարբիստերն իրաւաբան է, որ քաջ տեղեակ է օրէնքներին, և նրան լրդ-կանցլերն է նշանակում ցուցակները վերստուգելու: Երբ ցուցակները նա հաստատում է, տպւում են, պաշտօնապէս հրատարակւում, և նրանցով էլ ընտրութիւններ են անում:

Ընտրութիւնների երկրորդ և աւելի դժուար գործը կուսակիցներ հաւաքելն է: Այդ նպատակով թեկնածուն շրջաբերական կամ թռուցիկ է ուղարկում ընտողական շրջանի իրաւասուներին և բացատրում նրանց իւր քաղաքական հայեացքներն և ծրագիրը, քննադատելով հակառակ կուսակցութեան քաղաքականութիւնն և ծրագիրը: Երբ թեկնածուն ուղարկում է նրանց իւր շրջաբերականն և պրծնում, ինքն անձամբ կամ նրա գործակալներին ու օգնականները գնում են կուսակիցներ ժողովելու. նրանք մտնում են իրենց շրջանում գտնուող բոլոր տներն և ամեն տեսակ միջոցներով աշխատում են իրենց կողմը զրտւել տան տիրոջ: Թէեկ-

նածուն կամ նրա օգնականն այդտեղ գործ է դընում ամեն բան, ինչ որ օրէնքը չէ արգելում և մինչեւ անգամ արգելուածը, եթէ միայն յոյս ունի, որ անվտանգ կարող է անցնել: Նա համբուրում է և գլուում երեխաներին, հածոյախօսութիւններ է անում տան տիկնոջը, հարց ու փորձ է անում նրա կարիքների մասին, խորհուրդներ է տալիս, խօսակցութիւն է անում տան տիրոջ հետ, աշխատում է համոզել նրան ամեն տեսակ առարկութիւնով իւր հակառակորդի քաղաքական հայեացքների սըխալ լինելը, սուտ ու մուտ վչում է նրա մասին, մի խօսքով Ճիգ է թափում նրա ձայնը ստանալու, և յաճախակի յաջողուում է: Բայց ցան այն է, որ հակառակորդն էլ քնած չէ. նա էլ նոյնն է անում:

Անզիլայում, ինչպէս արդէն յիշել ենք, կանայք ձայն չունին, բայց կուսակիցներ հաւաքելու զործում նրանք բաւական մեծ զեր են կատարում: Ուռանց որևէ նիւթական շահ սպասելու նրանք մեծ եռանգով անձնատուր են լինում այդ զործին: Տնէ տուն են վաղում, զրբոյներ ու թռուցիկներ են տարածում, տատանուողներին համոզում են, եթէ մեկին տանը չեն գտնում, դէս ու դէն են ընկնում նրան գտնելու և հետը խօսելու, վերատուգում են և ուղղում ընտրողական ցուցակները. ամեն բան, ինչ որ միայն օրէնքը թոյլատրում է, անում են կուսակիցներ գտնելու նպատակով: Նրանք յերեկով կուսակիցներ գտնելու նպատակով: Նրանք յերեկով փողոցներում միտինդներ են սարքում, երեկոյեան տներում ժողովներ են կազմում և ձառախօսութիւններ անում: Նրանք այդ բոլորն անում են ոչ թիւններ անում:

թէ ընտրողական պայքարի ժամանակ, այլ և ուրիշ ժամանակ՝ ապագայ ընտրութիւնների համար հող պատրաստելով:

Պահպանողական կուսակցութիւնը, քաջ ըմբռնելով թէ ինչ օգուաներ կարող են տալ կանայք, 1883 թ. ի յիշատակ Բիկոնսֆիլդի հիմնում է կանանց ակմբանոց, որի նպատակն է պաշտպանել սահմանադրութիւնը, կրօնն և կայսրութիւնը: Այսպէս ուրեմն պահպանողական կուսակցութիւնը պարզ ընդունում էր, որ կանայք էլ ընդունակ են տղամարդկանց հետ հաւասարաշափ մասնակից լինել երկրի քաղաքական կեանքին: 1885 թ. նրանց մասնակցութիւնն ընտրութիւններին այնչափ օգտաւէտ եղաւ, որ Սոլիւսերին ու Բալֆուրը հարկ համարեցին հրապարակով իրենց գոհունակութիւնը յայտնել նրանց: Այդ ակմբանոցի անդամների թիւը կարծ ժամանակամիջոցում աճեց ու զարգացաւ, իսկ ապա նրա ճիւղերը բացուեցին Մեծ Բրիտանիայի բոլոր քաղաքներում: Այդ ակմբանոցի անդամների թիւը՝ բացի նոտանդիսայից և Խոլանդայից՝ միայն Անգլիայում միլիոնից աւելի է: Primrose-League-ը՝ այդպէս է կոչում ակմբանոցը, որովհետեւ Բիկոնսֆիլդի սիրած ծաղկելը ձնծաղկին՝ primros-ն էր, — պահպանողական կուսակցութեան ամենաազգեցիկ ակմբանոցն է, և առաջին մինիստրը նրա տարեկան ժողովներում իւր «մեծ» քաղաքուկան ձառն է ասում:

Պահպանողականներից յետ չմնացին և աղատամիտները: 1886 թ. կազմակերպուեց աղատամիտ կանանց միութիւնը տիկին Գլազոսոնի նախագահու-

թէամբ, իսկ 1888 թ. միութիւն կազմեցին և աղատամիտ իւնիօնիստ կանայք: Դրանցից առաջինն եռանգուն պաշտպանն է Հանդիսանում կանանց քաղաքական իրաւունքների և նրա պահանջմամբ երկու անգամ պալատում օրինագիծ է առաջարկուել կանանց ընտրողական իրաւունք տալու մասին: Առաջին անգամ 1892 թ., երբ աղատամիտ մինիստրութիւն էր, այդ օրինագիծը 175 ձայնի մեծամասնութեամբ էր, երբ պահպանողական մինիստրութիւն էր, այդ բիլը 230 ձայն է ստանում և երկրորդ անգամ կարդալուց յետոյ անցնում է, բայց երրորդ անգամ կարգալիս՝ հակառակորդների գործ դրածում պէս պէս խորամանկութիւնների շնորհիւ, մերժում է:

Այդ կազմակերպութիւններին մասնակցում են հարուստ կանայք, և այդ հանդամանքը մոլորեցնում է թէ պահպանողական և թէ աղատամիտ կուսակցութիւնների պարագուխներին: Հարուստ պահպանողական կանայք անհամեմատ աւելի են, քան թէ աղատամիտները, ուստի պահպանողական լիդերները, պարագուխները, կարծում են, որ եթէ կանայք ընտրողական իրաւունք սատանան, պահպանողական կուսակցութիւնը կը զօրեղանայ: Իսկ աղատամիտ պարագուխները հակառակում են նրանց այդ իրաւունքը տալու, երկիւղ կրելով որ իրենց նշանակութիւնը կը թուլանայ երկրում: Սակայն երկու կուսակցութիւններն էլ մոռանում են, որ բացի այդ հարուստ կանանցից, որոնք թէ բաւական աղատական ունեն կուսակիցներ հաւաքելու և թէ ժամանակ՝ ունեն կուսակիցներ հաւաքելու

մտաւոր պատրաստութիւն, կայ մի անհամեմատ խոշոր մեծամանութիւն, այն է՝ ստորին դասակարգի կանացք, որոնք կարող են ի վերև հանել երկու կուսակցութիւնների յօյսերը:

Կանայք Անգլիայում միշտ զուրկ չեն եղել ըն-
տրելու իրաւունքից: Մինչև 1832 թ. բարենորո-
դումն՝ ընտրողական օրէնքի աեսակէտից, զանազանուու-
թիւն չկար, թէ ով է անշարժ կայքի սեպհականա-
տէրն—տղամարդ թէ կին, և սեպհականատէրն
անխտիր, եթէ միայն որոշ ցենող ունէր, ունէր և
ընտրութեան իրաւունք: Մինչև 1832 թ. Անգլիայ-
ում բոլոր ընտրողների թիւը 500 հազար էր, որի
հօթներորդ մասը կանայք էին: Երբ բարենորոգումն
արին, ընտրողների թիւը հասաւ մի միլիոնի, բայց
կանանց զրկեցին ընտրելու իրաւունքից. այդ իրա-
ւունքն ունէին միայն այն կանայք, որոնք մինչև
1832 թ. ձայն էին տալիս և այդպէս էլ տեսց մին-
չև 1867 թ.: Յիշեալ թուականին ընտրողների թիւ-
ը բարենորոգումների շնորհիւ համառում է 2 միլի-
ոնի, և կանայք արգէն բոլորովին դուրս են մնում,
նրաց անունն էլ չէ մատնում ընտրողների ցուցակի
մէջ: Սյդ տեղի ունեցաւ լորդ Դիզրեէլի մինիստրու-
թեան օրով, որ գեռ մի տարի առաջ յօցուած կա-
նանց էր խօսում: 1873 թ. նրան և Գլազուանին
կանայք յուշագիր են ներկայացնում 11 հազար
ստորագրութեամբ, բայց դարձեալ անհետեանք ան-
ցաւ: 1867 թ. մինչև 1883 թ. կանանց ընտրողա-
կան իրաւունքի մասին մի քանի անգամ են օրի-
նագծեր առաջարկուել համայնքների պալատին, և
աղատամիաները պաշտպանել են, կամեցել են անց

կանցնել, իսկ պահպանողականները միշտ մերժել են: Բայց երբ 1883 թ. հաստատուեց վերոյիշեալ Պրիմոռդ Միութիւնը, զերելը փոփոխուեցին. պահպանողականներն սկսեցին պաշտպանել կանոնից, իսկ ազատամիտները հակառակուել: Փաստն այն է, որ Անդիքիայում մինչև օրս էլ կանայք զուրկ են ընտրելու իրաւունքից: 1869 թ. կանանց վերագրաձրին տեղական ինքնավարութեան համար ընտրութիւն անելու իրաւունքը, որ նրանք մինչև օրս էլ վայելում են:

Ըստըութիւնների երկորդ գլխաւոր դարձողութիւնն անգիտացիան է:

Առանձին նշանակութիւն ունին ընտրողների կուսակցական կազմակերպութիւններն և այն միջոցները, որոնցով նրանք ազգում են հասարակական կարծիքի վրայ: Աչքի առաջ պէտք է ունենալ որ որքան ընտրողների թիւը շատանում է, այնքան էլ ամեն մի կուսակցութեան համար կենսական հարց է դառնում մանր անհատների ուշադրութիւնն ու համակրութիւնը զրաւելը, որոնք յաճախ չեն ըմբռնում օրուայ զլիսաւոր վիճելի հարցի էութիւնը և հեշտութեամբ ենթարկում են ձարսիկ առաջնորդներին և ստատիկ զեկավարում են տպաւորութիւններով: Բնականսրար առաջ են գալիս քաղաքագէտներ, լայնածակամ... քաղաքականութեամբ պարտապողներ, լայնածաւալ գտնակցական կազմակերպութիւններ, որոնց նպատակն է տարածել յայտնի քաղաքական հայեացքների շահագրգռութիւն ու եռանդ և կուսակցութեան համար ցանկալի ուղութիւն տալ նրանց: Այդ կազմակերպութիւններն ոչ մի տեղ այնպիսի

ծայրահեղ միջոցների և խորամանկութիւնների չեն դիմում, ինչպէս Ամերիկայում, բայց Անգլիայում էլ այժմ՝ բացառութիւն չեն: Առաջին այդպիսի մեծ կազմակերպութիւնն Անգլիայում ստեղծուել է 1877 թ. Չեմբերլինի ազգեցութեան ներքյ, և դա ազատամիտ ընկերութիւնների միութիւնն էր: Նրանց նըպատճին էր դիմուոր սկզբունքների նկատմամբ համերաշխութիւն կայացնել քաղաքական ծրագիրներ հրատարակել և տարածել ժողովներ կազմել և ձառնախօսութիւններ անել տեղական կենտրոնների ներկայացուցիչների ժողովներ անել թեկնածութիւնը պաշտպանել: Երբ ազատամիտ կուսակցութիւնն այդպէս կազմակերպուելոց յետոյ առաջիկայ ընարութիւններին յաղթութիւն տարաւ, պահպանողականներն էլ յետ չմնացին: Այդ կազմակերպութիւնները չեն կեղծում հասարակական կարծիքն և իրենց հնագանդեցնում ժողովուրդը: Ոչ վերջ ի վերջ հասարակական կարծիքը քիչ թէ շատ գիտակցորէն է փոխում, ամբոխը սովորում է անկախ մտածել:

Իւր ընտրութիւնը յաջողեցնելու համար թեկնածուն, ինչպէս ասացինք, թուուցիկներ և բրոշւրներ է հրատարակում, ծանօթացնում է ընտրողներին իւր քաղաքական հայեացքների և ծրագրի հետ, քըննադատութեան ննթարկելով հակառակորդինը: Նա մեծ և փոքր, բայց միշտ սենսացիօն ոեկամել, ափիշներ է բաց թողնում, նոյն իսկ գարեջրատներում նրա օգնականներն ուկի ժամանակը չեն կորցնում և ազիտացիա են անում: Թէպէտ օրէնքը խսահւ արդելում է ձրի խմեցնել ընտրողներին, բայց միթէ

գարեջրավաճառն իրաւունք չունի իւր կողմից հիւրասիրել կամ շատ չնշին ժողով գարեջրուր վաճառել մադկանց, իսկ ապա փողն ստանալ ումնից որ պէտք է: Եւ ամբոխն՝ օգտուելով դէպքից, լընում է գարեջրատնները, իսկ այն տեղ թեկնածուի գործակատարներն իրենց բանը տեսնում են:

Թէ կուսակիցներ հաւաքելու և թէ ազիտացիա անելու գործը շատ մեծ ծախօթ է պահանջում թեկնածուից, և այդ պատճառով ընտրողական շընաներն ունին իրենց քաղաքական յանձնաժողովներն, որոնք կանխաւ նշանակում են համապատասխան թեկնածուներին, ըստ մեծի մասին հարուստներին: Երբ թեկնածուներն ընտրում են, պառամենտից ոչնչ չեն ստանում, նոյն իսկ ճանապարհածախը: Այդ պատճառով յաճախ կուսակցութեան տեղական անդամներից ոչ ոք թեկնածու չէ ընտրում, այլ ստիպուած կենտրոնական յանձնաժողովներից են նշանակում: Սակայն բանուորական կուսակցութիւնը վճարում է իւր ներկայացուցիչներին, եթէ նրանք նիւթական միջոց չունին:

Գաղափար կաղմելու համար, թէ որպիսի գումարներ են ծախսում թեկնածուներն ընտրութիւնների վրայ, առաջ ենք բերում մի քանի թուեր:

1895 թ. թեկնածուները մախել են ընտրութիւններին 9,585,310 ռուբլի, որից 7,965,380 ռ. ծախսներին 495 պատգամառը Անգլիայում և Ռւէլսում, ու են 72 ներկայացուցիչ Շոտլանդիայում ծախսել են 1,117,610 ռ. և 103 ներկ. Խոլանդիայում՝ 510,820 ռ. Այսպէս՝ Անգլիայում առաջ իւրաքանչիւր ձայնը 2 ռ. 10 կ. է նստել Շոտլանդիայում 2 ռ. 30 ռը

կ., իսկ իռլանդիայում՝ 1 ու 35 կ.: 30 տարի առաջ ծախսենն աւելի եւս ծանր են եղել: 1874 և 1880 թ.թ. իւրաքանչիւր թեկնածուի տեղը գտաւառում 30,000 ռ. է նստել, իսկ քաղաքում՝ 9,000 ռ.: 1892 թ. այդ ծախսերը պակասել էին. գտաւառներում 10 հազարի էր հասել իւրաքանչիւր տեղը, իսկ քաղաքներում՝ 5,820 ռ.: 1880 թ. Գալադստոնն իւր շրջանում 26,930 ռ. էր ծախսել այսինքն՝ նրա համար տուած ամեն մի ձայնը 17 ռ. էր նստել: 1876 թ. մի շրջանում մի տեղի համար 200 հազար ռ. էր ծախսուել: Նոյն թուականին Միլլուէքս նահանգում երկու թեկնածու էին՝ յորդ Զ. Համիլտոն և Հերբերտ Գլադստոն, յայտնի Գլադստոնի որդին: Զ. Գլադստոնը 64,000 ռ. է ծախսում ընտրութիւնների վրայ և գարձեալ յաջողութիւն չ ունենում, ընտրում է Համիլտոնը, որ նոյն նպատակով 130,000 ռ. էր ծախսել: Սակայն այդ ծախքելն ունիչ են աւելի հին ժամանակ եղած ծախքերի համեմատութեամբ, երբ ընտրողների թիւն անհշան էր և կաշառելն էլ օրէնքով արգելուած չէր (1854 թ.): Այդ ժամանակներն իւրաքանչիւր ազատ և անկախ ընտրողի ձայնն իւր միջին գինն ունէր: Այսպէս, օրինակի համար, Շերիգանը տեղ էր ստացել Ստաֆֆորդ քաղաքի ամեն մի ընտրողին 50-ական ռ. վճարելուց յետոյ: Պատահում էլ էր, որ առաջարկութիւնը հասնում էր միանուաղ 7,000 ռ. վճարելու և տարեկան էլ 500 ռ. Թոշակ տալու իւրաքանչիւր ընտրողին, և սակայն ընտրողները հրաժարում էին իրենց ձայնը տալուց: Դա մի բացարութիւն կարող է ունենալ որ հակառակ կուսակցու-

թիւնն աւելի է առաջարկած եղել: Այդպիսի խոշոր գումարներ բաժին էին համառում (անկախ) ընտրողներին, իսկ ոչ ունեւողները սովորաբար աւելի համեստ վարձարութիւնով էին բաւականանում, — այնքան գարեջրով, որ հարբեին, ուտելիքով և մի քիչ էլ ձեռքի փողով: Գինեաներում յանկացողներին ձրի լում էին տալիս, որքան և ուղենային: Այդ ժամանակչք էին տալիս, որքան և ուղենային: Այդ ժամանակ ձայնութիւնը 40 օր էր շարունակում, և այդ 40 օրուայ ընթացքում ամեն օր թեկնածուները հազարներ էին մախում ընտրողներին հիւրասիրելու, զուարձացնելու և իրենց կողմը վրաւելու, արածագրելու համար: 31 գինետոնն և պանդոկի տէրերը մի տեղ հաշեւ են ներկայացնում ի միահմարութիւն ընտրուած թեկնածուի 156,220 ռ.: 1796 թ. թիւնածուներից մէկը մի ուրիշ տեղ քուէարկութեան վերջին 7 ժամում 30000 ռ. է ծախսում, բայց և այնպէս պարտութիւն կրում: Տախսում, բայց յետոյ հետ մրցել են լորդ Միլտոն և Վիլեբրժորս թեկնածուները: Վերջինս 15 օրում 640,000 ռ. է ծախսում, որ «ձրի» պաշտպաննեն նրա թեկնածութիւնը: Միլտոնը, ինչպէս առում են, ոչ ու ձախ փող է շարտել և մինչեւ 2 և կէս միլիոն ծախսել: Բացի ընտրութիւնների ծախսից թեկնածուն ընտրուելուց յետոյ էլ մի քանի հազար սկիտի ծախսել, ժողովներ պիտի անէ, որ իւր կապը պահպանէ ընտրողների հետ: Այդ էլ բաւական չէ: Ուզուիսէ ընտրողների հետ պահպան ու առաջարկութիւնների անդամը ուղարկում, ինչպէս ասացինք, պառլամենտի անդամը ուղարկում, իւրաքանչիւր համայնքների պալտափի միկ չէ ստանում, ուստի համայնքների պալտափի միկ չէ ստանում, ուստի համայնքների պալտափի անդամները համարեա բացառապէս հարուստներ,

միլիոնատէրեր են, հետեւաբար և զարմանալի չէ, որ օրէնսդրութիւնները գլխաւորապէս ունեոր զասակարգի շահերն են պաշտպանում: Բանութիւնների ներկայացուցիչների թիւն աննշան է. միայն 12 հոգի են: Բայց նրանք էլ բաւականացավի նիւթական նրապատճեններից և այդ պատճառով շատ շուտ կախումն են ունենում ազատամիտ կուսակցութիւնից և նրան են յարում: Կան ոչ ունեորներ և իոլանդական պատգամաւորների մեջ բայց քանի որ Պառնէլըն ողջ էր, ընտրութիւնների համար փող էին ուղարկում ամերիկական իոլանդացիները: Նրա մահից յետոյ թուլացաւ իոլանդական շարժումը, չքաւորուեց և ամերիկացու առատ ձեռքը:

Սյամ զառնանք ընտրութիւնների չորրորդ և վերջին գործողութեան—քուէարկութեան:

Համաձայն սահմանադրութեան քուէարկութիւնը տեսում է առաւատեան 8 ժամից մինչև երեկոյեան 8 ժամը: Որովհետեւ ընտրողական շրջանները շատ լայնատարած են, ուստի ընտրողների յարմարութեան համար շրջանը բաժանում է մի քանի մասերի և իւրաքանչիւրի համար առանձին քուէարկութեան տեղ է նշանակում: Զնայելով որ քուէարկութիւնը մի քանի տեղ է, բայց նա միաժամանակ է կատարում, և եթէ կիրակի կամ տօն օրերին լինէր, անշուշտ առանց զժուարութեան աւելի բազմաթիւ մարդիկ ձայն կըտային: Բայց Անգլիայում քուէարկութիւնը լի օրերին է կատարում, և այդ հանգամանքն արդելք է լինում բանութիւններից շատերին թողնել իրենց գործն և գալ ձայն տալու: Սո-

վորաբար բանութիւններն իրենց բնակած շրջանում չեն բանում, և ձայն տալու համար վերստին պիտի գնան գան, որ ծանրացնում է գործը:

Կառավարութեան գործակալը քաղաքներում սովորաբար քաղաքագլուխն է լինում: Թագաւորի հրամանը պարատի արձակման մասին ամեն տեղ միւնցին օրն է ուղարկում և միւնցն ժամին երբ քաղաքագլուխը հրամանը ստանում է, յայտարարում է, թէ որ օրը պիտի ընդունի կուսակցութիւնների թեկնածուների ծանուցագրերն և երբ ընտրութիւնները պիտի կայանան: Հրամանն ստանալու և այդ կարգապրութիւնն անելու միջև և օրից աւելի ըլպիտի անցնի: Գաւառներում փոքր ինչ աւելի է ժամանակ տրում: Թեկնածուներն իրենց բարեկամների հետ գալիս են քաղաքագլուխի մօտ և յանձնում նրան իրենց թուղթը, որի մեջ նշանակուած են նրանց անունը, աղքանունն և կօչումը, նոյնպէս և նրանց կուսակիցների անունները՝ 8 մարդուց ոչ պակաս, այսինչ կամ այնինչ քաղաքի ընտրողներից, և հատուցանում են պաշտօնական ծախսերի համար սահմանուած գումարը: Եթէ նրանք մի թեկնածու են ներկայացրել այսինքն՝ եթէ բոլոր ընտրողները մի կուսակցութիւնից են, այն ժամանակ թեկնածուի ընտրութիւնն օրինական է: Քուէարկութիւնն ինքը քաղաքագլուխն է կազմակերպում: ամեն մի ժողովի համար նա է նախագահ և առենագիր նշանակում, ինչպէս և ձայները հաշուելու համար յատուկ քարառողարներ: Նա է պատրաստում ընտրողական տոմսակները, ուր ապարագուած են լինում բոլոր կուսակցութիւնների թեկ-

նածուների անունները: Երբ ընտրողն ուղում է իւր ձայնը տալ, մօտենում է քաղաքի ներկայացուցչին, որի մօա ընտրողների ժապաւինեալ մատեանն է: Սա հարյուրմ է ընտրողի անունը, աղքանունն և հասցէն: Երբ ընտրողից պատասխան է ստանում, բաց է անում մատեանը և որոնում ընտրողի տոմսակի համարը: Տոմսակը երկու մասի է բաժանուած, մէկը ժապաւինեալ է, որ մնում է մատեանում, միւսը նա կարում է և տալիս ընտրողին: Մի կէսի վրայ տպած է ընտրողի համարը, անունը, ազգանունն և հասցէն, միւս կէսի վրայ՝ նրա համարն և թեկնածուների անունները: Ընտրողն իւր ընտրելի անուան զիմաց խաչ է դնում, տոմսակը ծալում և արկղի մէջ ձգում: Երբ երեկոյեան 8 ժամը խփում է, ընտրութեան տեղերը փակւում են, արկղները կնքում և սոտիկանութեան հսկողութեան ներքոյ տարւում քաղաքային վարչութիւնը: Այստեղ սպասում է քաղաքային վարչութեան առանձին պաշտօնեան, և սրա ու թեկնածուների լիազօրների ներկայութեամբ արկղները բաց են անում և սկսում ձայները հաշուել, որ բաւական երկար է տեսում, որովհետեւ թեկնածուների լիազօրներից իւրաքանչերն աշխատում է, որքան կարելի է, հակառակ կուսակցութեան քուէատոմսերից շատն անվաւեր համարել: Օրէնքի սահմանած ձեից շեղուելն, ինչպէս եթէ խաճն այնտեղ չէ զրուած, ինչուել պիտի լինի, եթէ մի որեւէ աւելորդ նշան լինի կամ խօսք լինի զրած ընտրողի կողմից, բաւական է, որ քուէատոմսը զրկուի իւր ոյժից: Եթէ ձայները հաշուեն պրծնեն, և յաղթութիւն տարած թեկնածուի

անունը յայտնուի, յետոյ ձեի խախտման դէմ բողոքելն արդէն ուշ է: Ընտրութիւնները վերջացնելուց յետոյ յաղթուած թեկնածուն կարող է բողոքել միայն օրէնքի իրաւական խախտման հիմունքի վրայ, այսինքն՝ եթէ նա համոզուած է, որ ձայն են տուել այնպիսի մարդիկ, որոնք այդ իրաւունքը չունեին: Այդ դէպքում նա խնդրագիր է տալիս, որ քուէատոմսերն վերասառուգին: Դատական յաձնաժողովը վերասառուգում է, իւրաքանչեւր քուէատոմսի համարով փընտում է ձայն տուղի անունը վերցիշեալ ժապաւինեալ մատեանում և քննում է, արդեօք նա ձայնի իրաւունք ունէր, թէ ոչ: Բայց այդ խնդրագրի համար էլ հարկ է լինում էլե մի տասնեակ հազար մսիելու:

Անդիսայում վերընտրութիւն կամ կրկին ընտրութիւն չկայ: Ուրիշ սահմանազրական պետութիւններում թեկնածուն ընտրուած է համարւում, երբ նա ցուցակազրուած ձայների բացարձակ մեծամասնութիւնն է ստանում, այն է, կէսից աւելի: Եթէ ոչ պարան ձայն չէ ստանում, նոր ընտրութիւն է նշանակում, և քուէարկում են ամենից շատ ձայն ստացողներից առաջին երկուսին, իսկ միւս թեկնածուներն իրենց ձայները տալիս են այն թեկնածուին, որի ծրագիրն աւելի է համապատասխանում իրենց կուսակցութեան ծրագրին: Այդպէս չէ Անդիսայում: Այստեղ նա է ընտրուած համարւում, ով ձայների հասարակ մեծամասնութիւն է ըստանում: Ընտրութիւնների այս եղանակն իւր առաւելութիւնն ունի: Դրա շնորհիւ այնտեղ պահպանութիւնն ունի: Դրա շնորհիւ պահպանութիւնն է երկու կուսակցութեան սիստեմը, իսկ երում է երկու կուսակցութեան սիստեմը, իսկ

բորդ թեկնածուն ընտրութիւններից հեռացնուում է: Եթէ ընտրութիւնների թանկութիւնը չլինէր, հաւանական է, որ բանուորներն ու մանր բուրժուազիան ընտրութիւն կանէին և իրենց ներկայացուցիչներին պառլամենտ կուղարկէին, բայց կրկին ընտրութիւնների բայսակայութեան պատճառով ասպարէղ չեն գտլիս թէ արձատականներն և թէ սոցիալիստները, որովհետեւ, եթէ հանդէս գան, ձայները կըբաժանուեն:

Պէտք է յիշել անզլիական պառլամենտի և մի ուրիշ առանձնայատկութիւնը: Անզլիական ընտրողական իրաւունքով ամեն մի անշարժ կայքի տէր ձայն տալու իրաւունք ունի: Եթէ մի անզլիայի մի քանի շրջանում անշարժ սեպհականութիւն ունի նա ամեն մի շրջանում էլ կարող է ձայն ունենալ, բայց մի ձայնից ոչ աւելի: Եւ որովհետեւ մեծ ֆիրմաներն անշարժ կայքեր, օրինակի համար, զանադան քաղաքներում կրապակներ կամ գաւառներում հողեր ունեն, ուստի զրանց տէրերը կամ գլխաւոր կառավարիչներն ոչ թէ մի, այլ տասը ձայն էլ են ունենում: Սյդ պարոնները հնարաւորութիւն են ունենում մի տեղ ազատամիա թեկնածուի համար ձայն տալու, մի ուրիշ տեղ՝ պահպանողականի: Միասր թէքսէնդէլլը, որ զանազան շրջաններում շատ հողի տէր է, 43 ձայն ունի: Սյդպիսի մի քանի շրջաններ նպաստում են կռապարութեանը: Սյապէս, օրինակի համար, Զէրտսիի շրջանում 12000 ընտրողներից մօտ 1500 ձայն ունին այնպիսի անձինք, որոնք Զէրտսիում չեն բնակւում, բայց այնտեղ անշարժ կայքեր ունին: Անցեալ ընտրութիւններին

այնտեղ մասնակի կամ ըստցուցիչ ընտրութիւններ են եղել, որոնք մեծ նշանակութիւն են ունեցել ամբողջ Անգլիայի համար, որովհետեւ այն տեղի թեկնածուի ընտրութիւնից էր կախուած, թէ ինչ տեսակ կարինետ կըլինի—պահպանողական թէ արմատական: Եթէ այդ 1500 ձայները չլինէին, արմատական թեկնածուն մեծամասնութիւնը կըստանար: Սակայն ձայն ունենալով՝ ազատեցն պահպանողական մինիստրութիւնը: Իրենց ձայնը տալու համար նրանք ամեն կողմից Անգլիա էին եկել ֆրանսիայից, Բելգիայից և մինչեւ անգամ Սպանիայից:

էլ ներկայ է լինում: Յետոյ՝ XII դարի սկզբում
յայտնուեց, որ կարինետին մասնակցում են միայն
խկական մինիստրները, իսկ նախագահն ու ղեկավա-
րողն առաջին մինիստրը՝ պրեմիերն է, այսինքն ու-
ժեղ կուսակցութեան պարագուխը:

Կարինետի կազմակերպութեան ամենաէական յատ-
կութիւնը մինիստրների համերաշխութիւնն է: Նրա
անդամներից և ոչ մէկը չէ կարող ասել, թէ ինքն
անձամբ չէ մասնակցել այս ինչ վճիռն կայացնե-
լուն կամ թէ համամիտ չէ իւր միւս պաշտօնակից-
ներին: Եթէ կարինետի անդամների միջև լուրջ տա-
րածայնութիւններ են տեղի ունենում, պրեմիերի քա-
ղաքականութեան հակառակ կարծիքների ներկայա-
ցուցիչները կամ պիտի հպատակուեն նրան, կամ
պիտի հեռանան: Անշուշտ, եթէ տարածայնութիւնն-
երը շատ նշանաւոր լինեն և երկառակութիւն լի-
նի իրենց ազգեցութեամբ համարեա հաւասար խմբե-
րի միջև, այդ կ'ազդէ թէ ամերող երկրի և թէ պառլա-
մենտի գործափարութեան փրայ, և վերջ ի վերջոյ մի-
նիստրութիւնը կ'ընկնի:

Կարինետի նիստերն հրապարակական չեն, և ինչ
որ այնտեղ կատարում է, գաղտնի պիտի մնայ: Թէ
պէտ առաջին մինիստրը կառավարութեան գլուխն է
հանգիստանում բառիս բուն նշանակութեամբ և ըն-
դհանուր քաղաքականութեան համար նա է պա-
տասխանատու երկրի առաջ, բայց և այնպէս ոչ կա-
րինետը և ոչ էլ առաջին մինիստրը չեն միջամը-
տում զանազան մինիստրութիւնների կեանքի մանրա-
մասնութիւններին, և, օրինակի համար, զիւանազի-
տական զեկուցումներն ուղարկուում են օտարազգի

8. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՍՆՈՒԹԻՒՆԸ

Նախընթաց գլուխներում մենք ասացինք, որ
թագաւորն Անգլիայում համարեա ոչ մի իշխանութիւն
չունի, որովհետեւ ժամանակի ընթացքում կամաց
կամաց անցել է մինիստրների ձեռը, իսկ սրանք, ինչ
պէս յայտնի է, ընտրուում են համայնքների պալա-
տի մեծամասնութիւնից և միասին կարինետ են
կազմում: Երկրի իսկական գերագոյն գործադիր իշ-
խանութիւնն այդպիսով ներկայանում է մինիստր-
ների կարինետը, որի խորհրդակցութիւններին թա-
գաւորը ներկայ չէ լինում: Կարինետը կամաց կամաց
առաջացել է «Քաղանի Խորհրդի» քաղաքական
բամնից, որի անդամներն ոչ միայն մինիստրներն են,
այլ և թագաւորի անձնական խորհուրդատուններից
զանազան անձինք: Երբ պառլամենտական կուսակ-
ցութիւնն ուժեղացաւ, «Քաղանի Խորհրդի» գե-
րը, որպէս մի ամբողջութեան, սկսեց նսիմանալ և
վերջ ի վերջը բոլորովին թուլացաւ: Իրենց իսկա-
կան նշանակութիւնը պահպանել են միայն նրա բա-
ժանմունքներից մի քանիսը, որոնցից զիսաւորը կա-
րինետն է, որ և կառավարութեան բուն կենտրոնն է:
Միևնույն ժամանակ նա բոլորովին ազատ մնաց թա-
գաւորի անձնական ազգեցութիւնից: Գէորգ I-ի օ-
րից թագաւորն ոչ նախագահում է այնտեղ և ոչ

գործերի պետական քարտուղարին։ Միայն կարեղութցին հարցերն, որոնք վերաբերում են պետական ընդհանուր քաղաքականութեան, քննում են մինիստրները պրեմիերի հետ միասին, կամ կարինեալ ժողովում։

XVI և XVII դարերում «Գաղանի Խորհուրդը» շատ լայն իրաւունքներ էր բանեցնում։ Նրա միջոցով թագաւորը զանազան օրդոնանուեց (Հրամաններ) էր արձակում, որոնք պարտադիր էին բոլոր հպատակների համար։ Այդ ժամանակ իսկական օրէնք էր համարում միայն այն օրէնքը, որ պառլամենտն ընդունել էր և արձանագրել Օրէնքների Գրքում, որ կարող էր փոխուել ուրիշ օրէնքով և այն էլ միայն պառլամենտի միջոցով։ Իսկ օրդոնանուը ժամանակաւոր կարգադրութիւն էր, հրատարակում էր թագաւորի հրամանով և Օրէնքների Գրքի մէջ չէին մտցնում։ Այդ ժանապարհով թագաւորը կարող էր բոլորովին յեղաշրջել ամեն մի օրէնք կամ սահմանափակել նրա նշանակութիւնը։ Եւ ահա այդ «Գաղանի Խորհրդի» ամեն անակի լիազօրութիւնները ձևականապէս մինչեւ օրս էլ չեն փոխուած։ Նրա գործունէութեան մեծ մասըն արդէն անցել է զանազան մինիստրութիւնների և խորհուրդների տեսչութեանը, իսկ ինչ որ մնացել է, այն էլ կատարում է առանձին յանձնաժողովներում, ինչպէս դատական և այլն։ Զեականապէս շատ բան կատարում է «Գաղանի Խորհրդի» անունից, բայց իրօք նու երբէք չէ ժողովում խորհրդակցելու։ Բոլոր կարգադրութիւնները մշակում են համապատասխան մինիստրութիւններում պետական

հաւատարմատարների մասնակցութեամբ և հաստատում է կարինեալ կամ գոնէ առաջին մինիստրը։ Այսպէս՝ «Գաղանի Խորհրդի» հեղինակութեան իմաստն այն է, որ գործադիր իշխանութեան բարձրագոյն մարմիններին լայն լիազօրութիւններ են արուած կառավարչական կարգադրութիւններ անելու, բայց դրանց համար ամբողջապէս պատասխանատու է մինիստրութիւնը և եթէ այդ լիազօրութիւններն ի չարը գործադրուեն կամ սխալ անեն, ամենախիստ պատասխանատութեան են ենթարկում։

Դառնալով զանապան մինիստրների կազմակերպութեան, պէտք է նկատել, որ մինիստրութեան անդամներից երեքն առանձին վարչական մասն չունին։ Պրանք կարինեալ ամենաազդեցիկ և պատուաւոր անդամներն են՝ առաջին մինիստրը, խորհրդի նախագահը և գաղանի կնիքի լորդ-պահապանը։ Սովորաբար առաջին մինիստրը և եկեմաից մինիստրն է լինում, բայց նա ոչ մի յարաբերութիւն չունի գէպի ֆինանսները, որոնց կառավարիչը գանձարանի կանցլերն է։ Դրանք երեքն էլ քաղաքական գործիչներ են և ոչ թէ կառավարիչներ։ Կառավարչական գործը զեկավարում են հետեւեալ մինիստրներն ու հաստատութիւնները։ Տինգ պետական խորհրդական կառավարում են արտաքին ու ներքին գործերը, զինուորական մինիստրութիւնը, գաղութեան ու հնդկաստանը։ Արդարադատութեան մինիստրը լորդ-կանցլերն է, իսկ ֆինանսներինը, ինչպէս ասացինք, գանձարանի կանցլերը։ Սա միշտ չամայնքների պալատի անդամ է, որովհետեւ ֆինանսներին

վերաբերեալ օրինագծերը մշակում է միայն համայնք-ների պալատը: Փոստային գործն անկախ է և նրա գլխաւորն իւր զիրքով հաւասար է մինիստրի, ներկայ է լինում պառլամենտի նիստերին, բայց միշտ էլ կարինեալ անդամ չէ լինում: Ծովային գործերը կառավարում է, այսպէս ասած, ծովագետութեան խորհուրդը, որ բաղկայած է առաջին լորդից և հինգ անդամից, որոնցից չորսը նաւատորմիղի պաշտօնեաներ են, իսկ մեկը՝ քաղաքացիական: Յետոյ գոլիս են զանազան անուակ կառավարչական հաստատութիւններ, որոնց անմիջական կոչումն ոչ թէ կառավարելն է, այլ կառավարութեան կողմից հսկողութիւն ունենալ հաստատական զործունէութեան պէս պէս ձեւերի վրայ: Այզպիսի հաստատութիւններ են՝ առեւտրական, հասարակական շինութիւնների, երկրագործական, տեղական ինքնավարութեան և կրթութեան խորհուրդները: Վերջինս համապատասխանում է մեր լուսաւորութեան մինիստրութեանը: Այս բոլոր հաստատութիւնները կամաց կամաց առաջ են եկել Գաղտնի Խորհրդի կառավարչական մասնաժողովներից: Բարձրագոյն կառավարչական հաստատութիւններին պէտք է աւելացնել և շոտլանդական վարչութիւնը, որի գլուխն ատենադպիրն է և Իռլանդիայի զինաւոր տաենադպիրին, որ թէպէտ ստորագրուած է Իռլանդական նահանգապետին, բայց իրօք կառավարիչը նա է և այդպէս էլ նա ներկայանում է պառլամենտում: Վերջապէս նշանաւոր զեր են կատարում կառավարութեան երկու իրաւաբանները, որոնցից մեկին կարելի է անուանել զինաւոր դատավագ, իսկ միւսին՝ զինաւոր նօտար:

Առանձին պալատական մինիստրութիւն չկայ. պալատական գործերն ու թատերական զրաքննութիւնն անում է լորդ-չեմբերլէնը, որ չէ պատականում քաղաքական գործիչներին:

Կան ևս երկու կառավարութիւն, որոնք չեն մասնակցում քաղաքական պայքարներին. մէկն եկեղեցական գործերի կառավարութիւնն է, միւսը՝ բարեգործական գումարներինը: Առաջնի նպատակը պարզ է: Երկրորդի նպատակն է պահել, ածեցնել և մօխել բարեգործական նպատակներով նուիրած կամ կտակած գումարները. Հաւասարապէս և կառավարում է նոյն նպատակին յատկացրած կալուածները: Դրանք մշտական ներկայացուցիչներ չունին պառլամենտում:

Լորդ-չեմբերլէնի ներկայութիւնն էլ լորդերի պալատում անձնական է և ոչ քաղաքական, իսկ միւս պաշտօնները կարող են մինիստրական պաշտօններ համարուել, ուստի և պահանջում են, որ մասնակցեն պառլամենտին: Նոյն իսկ կարինետում, որ կառավարում է երկիրը, բոլոր մինիստրները չեն լինում: Անհրաժեշտ է տասն և մի անդամի մասնակցութիւնը, այն է՝ պրէմիերի, լորդ-նախագահի, կանցլերի, հինգ պիտական-քարտուղարի, գանձարանի կանցլերի, ծովագետութեան առաջին լորդի և իռլանդական գործոց ատենադպիրի մասնակցութիւնը: Սովորաբար կարինետ են կանչւում և զաղտնի կնիք պահողը, առեւտրական խորհրդի նախագահը, իսկ միւսներից՝ որին կ'ընտրէ պրէմիերը, ներկայումս կարինետի անդամների թիւը հասնում է 20-ի:

Այսպէս, ինչպէս տեսնում ենք, անգլիական կա-

ռավարութեան կաղմակերպութիւնը կրկին բնաւո-
րութիւն ունի. նրա բարձրագոյն ներկայացուցիչները
միաժամանակ և քաղաքական գործիչներ են պառ-
յամենտում, և դեկավարում են կառավարչական
մեքենան. մի դէպքում գերակշռում է մի բնաւորու-
թիւնը, միւս դէպքում միւսը. իսկ մինիստրների վե-
րաբերութեամբ նրանք միացան են: Այդ պատճա-
ռով էլ զուտ վարչական պաշտօնեան չէ կարող
պառլամենտական գործիչ լինել և եթէ պառլամեն-
տի անդամներից մէկը պետական պաշտօն է ստանձ-
նում, կառավարութիւնից ոռօնիկ է ստանում, հա-
մայնքների պալատի անդամ լինել չէ կարող: Դրա
նպատակը շատ հասկանալի է — հեռացնել մինիստրնե-
րի խնամքական հովանաւորութիւնը: Սակայն մինիս-
տրները պիտի պառլամենտի անդամ լինին և պառ-
լամենտի առաջ պիտի պաշտպանեն իրենց խնամքին
յանձնուած պաշտօնի շահերը և նրանց հետ շաղ-
կապուած հարցերը: Վարչական ամրողջ կաղմակեր-
պութիւնը քաղաքական կոիւներից բոլորովին դուրս
է մնում: Երբ մինիստրները փոխւում են, փոխ-
ւում են և կառավարչութեան քաղաքական պարա-
գլուխները, իսկ միւս պաշտօնականները մնում են
իրենց տեղերում: Դրա միանկամայն հակառակն է
տեղի ունենում: Ամերիկայում: Գլխաւոր վարչական
հաստատութիւններում կան ածշատական ատենագլիբ-
ներ, որոնք կախումն չունին քաղաքական տասա-
նումներից: Այսպէս, ճնդկատանի գործերի կառավա-
րին պետական ատենագլիբ է, կամ ազգային լու-
սաւորութեան գործի կառավարիչը նոյնպէս պետա-
կան ատենագլիբ է, բայց դրանց հետ միասին կան

մշտական ատենագլիբներ, որոնք, թէև ստորագրու-
ած են իրենց քաղաքական հշխանաւորներին, բայց
չեն փոխւում. իրենց մտանագիտութեան նկատմամբ
փորձառութիւն ունին և իրօք ընթացիկ գործերի
վրայ նրանք մեծ ազգեցութիւն ունին:

Զէ կարելի լուսութեամբ անցնել զօրքը, եկեղեցու,
կրթութեան և տեղական ինքնավարութեան կաղմա-
կերպութիւնները:

Անզլիացիք մշտական մեծ զօրք պահելն միշտ
վտանգաւոր են համարել երկրի բարորութեան հա-
մար: Որպէս զի կառավարութիւնը չկարողանայ զօր-
քը բանեցնել ժողովրդի գէմ, Անզլիայում զինուորա-
կան ոյժը խիստ սահմանափակուած է արտակադ մի-
ջոցներով: Պաշտօնապէս զօրքը մի աարով է. ամեն
տարի հաստատում են պաշտօնները, զինուորական
առանձին օրէնքները, որոնք անհրաժեշտ են կարգապա-
հութեան համար: Այդ պայմաններում երկիւղ չկայ,
որ միապետութիւնը կարող է զօրքն իրեն հետ կա-
պուած մի հաստատութիւն համարել և ուղեցածի
պէս ժողովուրդի առաջ գուրս բերել: Կանոնաւոր
զօրքի թիւը մեծ չէ, և լրացնում են ցանկացողներով,
որոնք զինուոր են գառնում միայն այն ժամանակ,
երբ հաշտարար զատաւորի ներկայութեամբ զրա-
մասին ծանուցումն են անում և զինուորական
երգումն են տալիս: Ապա նա ենթարկում է զինուոր-
ական իշխանութեանն և զինուորական օրէնքներին,
որ ամեն տարի՝ ինչպէս տասցինք, հաստատում
է պառլամենտը, իսկ քաղաքական ազատութիւններն
այլ ևս նրան չեն վերաբերում: Ճնդկատանի զօրքն
ուրիշ վիճակի մէջ է և նա կախումն չունի վերոյիշ-

եալ սահմանափակող պայմաններից: Թէպէտ հնդկական զօրքը կարող են բանեցնել և հնդկաստանից դուրս, բայց ի շարք գործ դնել նրան ժողովրդի ազատութիւններն խախտելու նպատակով չեն կարող հինյ այն պատճառով, որ նա պահւում է հնդկաստանի հաշուով, իսկ հնդկական դումարների ծայրագոյն վերահսկողութիւնը պառլամենտին է պատկանում: Բայցի կանոնաւոր զօրքից կայ և պահեսափ զօրք, որ լրացնում են կամաւորներով բայց եթէ սրանց թիւը քիչ է լինում, դիմում են վեճակահանութեան: Մի քանի շաբաթով այս վաշտերը կանչում են զենուուական պարապմունքների համար, իսկ պատերազմի ժամանակ պետութեան մէջ զանազան ծառայութիւններ են կատարում: Վերջապէտ կան կամաւորներ և խօմենրիներ—օժանդակ զօրքեր, որոնց կոչումն է պաշտպանել երկիրը, երբ թշնամին ներս է խուժում: Հարաւային Աֆրիկայի հասարակապետութիւնների հետ վերջին կոիւն մղելիս պառլամենտի թոյլտութեամբ նրանց պատերազմի վաշտն ուղարկեցին: Ինչ վերաբերում է անզիւական նաւատորմիդին, ամենքիս յայտնի է, որ նա առաջնակարգ տեղ է բռնում: Անզիւայիք միշտ այն համոզմանն են եղել, որ միայն ուժեղ նաւատորմիդը կարող է ապահովել իրենց անկախութիւնը, ներքին յառաջադիմութիւնն և արեգերական կարողութիւնը: Կարգապահութեան կողմից նաւատորմիդի ստորին պաշտօնեաները զինուորների հետ հաւասար պայմանների մէջ են:

Անզիւայում սատիկանութիւնն ըստ մեծի մասին կախումն ունի ինքնավար համայնքներից ու շրջան-

ներից: Ներքին գործերի մինիստրութիւնն ընդհանութեան հսկողութիւն ունի սատիկանական ծառայութեան կաղմակերպութեան վրայ, գաւառներում նա է նշանակում սատիկանապետներին, ահսուչներին, վերահրակում է Լոնգոնի սատիկանութեանը, բայցի Սիտիից, որի սատիկանութիւնը քաղաքային իշխանութեանն է ստորագրուած: Ներքին գործերի մինիստրութեան հըսկողութեան տակ են զանուում գործարաններն, արհեստանոցներն ու բանտերը: Բայց բարեկարգութեան և ապահովութեան վերաբերեալ կարգագրութիւններ սատիկանութեանն անում են ընարուած ժողովները, գաւառների ու քաղաքների իշխանութիւններն և հաշտաբար գատաւորները: Անզիւայում գաղանի սատիկանութիւն կայ, բայց ոչ մի «քաղաքական» լիազօրութիւն չունի. նա չէ կարող խուզարկութիւններ, ձերբակալութիւններ անել: Ընդհանրապէս անզիւական սատիկանութիւնն այնպէս լաւ է կաղմակերպուած, նրա յարաբերութիւնը գէպի ժողովուրդն այնպէս է, որ նա ամենայն իրաւամբ կարող է պարծենալ իւր գործունէութեամբ: Գուցէ աշխարհումս անզիւական սատիկանութիւնն առաջինն է:

Անզիւայի ամբողջ բնակչութեան երեք քառորդը քաղաքներում է բնակւում: Այդ քաղաքները կառավարուելու ձեփ կողմից երեք տեսակ խումբ են կազմում. 1) 50,000 աւելի բնակիչ ունեցող 2) 50,000 պակաս բնակիչ ունեցող և 3) փոքրիկ քաղաքներ, որոնք կաղմակերպութիւն չունին: Քաղաքային վարչութիւնն ամենուրեք ընտրուում է, և ընտրութիւնների մանրամասնութիւններն որոշուած են այն հրովարտակով, որով քաղաքին կորպորատիւ-

կազմ է արուած: Քաղաքային վարչութեան գլխաւոր օրդանը խորհրդարանն է (զումա), որ բաղկացած է երեք տարով ընտրուած որոշ խորհրդականներից, իրաւասուներից և աղջերմէններից, որոնց ընտրում են իրաւասուները վեց տարով: Մրանցից ընտրում է քաղաքագլուխ մի տարով: Գլխաւորապէս զուման հոգս է տանում աղքատների, հասարակական առողջապահութեան, ժողովրդի լուսաւորութեան վրայ: Ի հարկէ, սրանց հետ միասին քաղաքային վարչութիւնն ունենում է իւր սովորական պարտականութիւնները՝ հսկել քաղաքային կալուածների, փողոցների բարեկարգութեան վրայ և այլն: Ինչպէս քաղաքներում, այնպէս և զեմստվոներում կառավարութիւնն իրեն բոլորովին հեռու է պահում տեղական գործերն զեկավարելուց: Նա միայն բաւականանում է զիտելով և վերահսկելով, և զրա շնորհիւ նա միջոց է տալիս զարգացնելու շատ արդիւնաւոր և հեղինակաւոր գործունելութիւն:

Բնորիշ է նոյնպէս, թէ ինչպէս է զրուած Անգլիայում ժողովրդի լուսաւորութեան գործը: Սկըլբնական ուսումը գտնուում է պետութեան անմիջական հսկողութեան ներքոյ և լիովին կազմակերպուած է: 1870 թ. մտցրած է ընդհանուր գրագիտութիւն, և ամենուրեք կամաւոր կամ զաւանական, աշխարհական կամ պետական ուսումնարանների ցանցով է պատած Մեծ Բրիտանիան: 1902 թ. օրէնքով առաջին տեսակի ուսումնարանների ծախքը նոյնպէս պետութիւնն է հոգում, և ընդ նմին վարչականի կողմից ընդհանուր հսկողութեան ներքոյ են: Նրանց հոգաբարձութիւնը յանձնուած է գո-

ւառներին և իրաւունքների կողմից սրանց հաւասար քաղաքներին, որոնք ժողովների և խորհրդարանի անդամներից առանձին կոմիտէներ են ընտրում ուսումնարանների համար: Ընդհանուր վերահսկողութիւնն ու տեսչութիւնը «Դաստիարակութեան խորհրդարանին» են վերապահուած: Միջնակարգ ուսումնարանները գեռ ևս բաժան բաժան են: Կան «Հրապարակական ուսումնարաններ», որոնք ունեն ժառանգութիւն ստացած ահազին գումարներ ու կալուածներ. կան զանազան տեսակ արուեստագիտական ու արդիւնաբերական ուսումնարաններ, որ հիմնել են մասնաւոր բարեկործներ, կամ տեղական հասարակութիւնները. վերջապէս կան բազմաթիւ մասնաւոր ուսումնարաններ թէ տղայոց և թէ աղջկերանց համար: Նոյն 1902 թ. օրէնքը թշլարում է ուսումնարանական կոմիտէներին ոչ միայն բարեխօսել համանման ուսումնարաններ բանալու, պահելու և նիւթապէս ապահովելու մասին, այլ և իրենց հայեցողութեամբ դասաւանդութեան ծրագիրն և գաստիարակչական մասը կազմելու:

Բարձրագոյն ուսումն աւելի ևս կախուած է հասարակական ոյժերի նախաձեռնութիւնից: Անգլիայում համալսարանները բոլորովին աղատ են պետութեան վարչական խնամակալութիւնից: Պառամենար կարող է նրանց համար, ինչպէս և ուրիշ հաստատութիւնների համար, այս կամ այն օրէնքը հրատարակել մի քանի պաշտօնեաների թագաւորն է նշանակում հիմնալրի իրաւունքով, բայց ընդհանրապէս անգլիական համալսարանների կեանքին չէ միջամտում կառավարչութիւնը. այնտեղ ոչինչ չէ

լուռում մինիստրութեան շըջաբերականների և կարգադրութիւնների, պարտագիր ուսումնական ծրագիրների մասին և այլն: Համալսարանները մի տեսակ ֆեղերատիւ հանրապետութիւններ են, որոնք գտնուում են ազգային կառավարութեան հովանաւորութեան ներքոյ և այդ պատճառով նրանք շատ պահպանողական են:

Եկեղեցու կազմակերպութիւնն էլ Անդիսայում մեծ առանձնայացախութիւններ ունի: Պետական եկեղեցին այնտեղ անդիսիան եկեղեցին է, իսկ Շոտլանդիայում—արքավիտերականը: Մնացեալ գաւառնութիւնները, որոնք չեն ստորագրուում պետական այդ եկեղեցիներին, ենթարկուում են գաւառնութիւնների ազատութեան մասին սահմանուած կանոններին:

Անդիսական եկեղեցին XVII դարում պաշտօնապէս անջատուեց Հռովմից և ընկաւ պետական իշխանութեան հովանաւորութեան տակ: Թէսպէտ դաւանական կողմից թագաւորն եկեղեցու դլխաւոր չէ համարում, սակայն զոգմատականի կողմից նրա ինքնուրոյնութիւնը սահմանափակուած է աշխարհական իշխանութեան վերահսկողութեամբ, իսկ վարչական և կարգապահական կողմից միանգամայն կախումն ունի կառավարութիւնից: Բոլոր բարձրագոյն եկեղեցականներին՝ եպիսկոպոսներին և գեկաններին թագաւորն է նշանակում, պահպանելով մի տարօրինակ ձևականութիւն, այն է թոյլատրել որ այս ինչ անձին ընտրեն: Քահանաներ նշանակելու կախուած է եկեղեցու զանազան պատրոններից, սեպհականատէրերի իրաւունքով: Բոլոր հոգևոր դատարանների դէմ՝

արքիղիակոնական, եպիսկոպոսական և արքեպիսկոպոսական՝ վերջնական բողոք կարելի է ներկայացնել «Փաղանի Խորհրդարանի» գատական կոմիտէին: Եկեղեցական կանոններ հրատարակելու համար Կենտերբերիի և Եօրկի գաւառներում ժողովներ են գումարուում, կոնվոկացիա, որսնց մասնակցում են բացի եպիսկոպոսներից արքիղիակոններ, դեկաններ և պրոկտորներ կամ ծխատէր հոգեռականութեան ներկայացուցիչներ: Սակայն այդ ժողովները գումարելու, կանոնները քննելու և հրատարակելու թոյլատութիւնը կառավարութիւնն է տալիս: Վերջապէս անդիսիան եկեղեցուն պատականող թէ հոգեռականութեանն և աշխարհականներին վերաբերեալ սահմանուած կանոնադրութիւններն հաստատում է պառլամենտն և Օրէնքների Գրքի մէջ մտցնում: 1872 թ. պառլամենտը հաստատում է կոնվոկացիաների ծշակած կրծատեալ ժամասացութիւնը:

Շոտլանդիայի հետ կապած միութեան ակտի հիման վրայ այնտեղ պետական եկեղեցին արքավիտերականն է: Սա կառավարուում է զանազան կարգի ժողովներով, որոնց մասնակցում են պաստօններ և աշխարհականներից—ծերունիներ: Նախ ծուխն է մի քանի ծուխ միասին կազմում են արքավիտերիա, որոնք միանալով սիւնողոս են կազմում, և զրանց թիւը Շոտլանդիայում 16 է: Վերջապէս ամբողջ շոտլանդական եկեղեցին միանում է պաստօնների և աշխարհական ծերունիների ընդհանուր ժողովով: Սրանց ընդհանուր ժողովներն աւելի ազատութիւն են վայելում, քան թէ անդիսական կոնվոկացիաներն, բայց որանց վճիռնե-

րըն էլ ենթարկում են պառյամենտի վերահսկո-
ղութեանն և ընդհանուր դատարանների վերաստու-
գութեանը:

Ամբողջութեան համար մեղ միում է լրացնել
մեր տեսութիւնը՝ մի քանի խօսք նուիրելով Ան-
զիայի գաղութներին:

Միացեալ թագաւորութեան 41 միլ. բնակիչները
համայն Մեծ Բրիտանիայի բնակչութեան մօտառ-
րապէս տասներորդ մասն են, որ 408 միլ. չափ է:
Դրանից 52 միլ. սպիտակներ են, իսկ 356 դանաշան
գոյնի ցեղեր: Այդ ահազին բազմութիւնը, որ ամ-
բողջ երկրագնդի բնակիչների (հաշուելով սրանց
թիւը 1,500 միլ.) քառորդից աւելի է և մի երրոր-
դականից պակաս, պէս պէս եղանակով է կառավար-
ում: կան այնպիսի տեղեր, որոնք լիովին հպա-
տակւում են կառավարութիւնից նշանակուած նահան-
գապետներին, կան այնպիսի երկիրներ, որոնք համա-
րեա անկախ են և ընդունում են միայն Անդիայի
գերիշխանութիւնը: Ընդհանրապէս Անզիայից կա-
խում ունեցող երկիրները կարելի է բաժանել չորս
կարգի:

Առանձնակի է Հնդկաստանի կառավարութիւնը:
Թէև նա ենթարկում է պառյամենտի ծայրադյուն
իշխանութեանը, բայց 1858 թ. ակտի հիման վրայ
այդ լայնատարած երկիրը կառավարում է Պետա-
կան-ատենագլուխն իւր մօտ զանուող խորհրդարա-
նի անդամների հետ միասին: Խորհրդարանի ան-
դամներին, որոնք 10—15 հոգի են լինում, նշա-
նակում է Պետական-ատենագլուխը ցմահ: Հընդ-
կաստանի վերաբերեալ բոլոր կարեռագոյն միջոց-

ներն ու կարգադրութիւնները կամ խորհրդարանն
է մշակում է կամ Պետական-ատենագլուխը խոր-
հրդարանի մասնակցութեամբ և ոչ թէ «Գաղտնի
Խորհրդարանն» է հրամաններ արձակում: Միայն
երբ պէտք է լինում վարչութեան պաշտօնեաններին
կամ հնդկական գործերի տեսչութեան ծառայողնե-
րի ոռօճիկը փոխել պահանջւում է «Գաղտնի Խոր-
հրդարանի» հրամանը: Թագաւորին փոխարինում է
փոխարքան, որ նշանակում է 5 տարով: Փոխար-
քան ունի 5 անգամից բաղկացած մի խորհուրդ, որ
լրացւում է օրէնսդրական նպատակների համար եղած
լրացւցիչ 16 անգամներով: Սրանց փոխարքան է
նշանակում: Գաղութների առաջին խումբը նմա-
նում է Հնդկաստանին միայն այն տարբերութեամբ,
որ ստորագրուած է գաղութների ատենագլուխին և
Գաղտնի Խորհրդարանին: Այդ տեսակ գաղութները
կառավարում են նահանգապետներն իրենց նշանա-
կած խորհրդարանների աջակցութեամբ: Երկրորդ
խմբի գաղութներն ունեն օրէնսդրական ժողովներ,
որ ընտրում է ինքը ժողովուրդը: Վերջապէս կան
գաղութներ, որոնք խսկապէս անկախ պետութիւն-
ներ են: Այդ գաղութներում կառավարութիւնը
պատասխանատու մինիստրների ձեռքին է, որոնք
պիտի յարմարուին պառլամենտի գերակշող կու-
սակցութեան: Իւրաքանչիւր համանման զաղութ
սովորաբար ունենում է երկու պալատից բաղկա-
ցած օրէնսդրական ժողով: Վերին պալատի անդամ-
ներին կամ ինքը ժողովուրդն է ընտրում, կամ
ներքին պալատը: 1867 թ. կանադան և 1901 թ.
Աւստրալիան ֆեդերացիաներ են, ուր կառավարու-

թեան գլուխն օրէնսդրական պալատներն են և մի-
նհարութիւնները։ Նցին ձեռվլ են կառավարում
և վերջին ժամանակներս նուածած հարաւային Ա-
ֆրիկայի հասարակապետութիւնները։ Այդ գաղութ-
ներում Մեծ Բրիտանիայի կառավարութեան ներ-
կայացուցիչները ընդհանուր նահանգապետներն են
իրենց խորհրդարաններով, որոնք գործում են որպէս
սահմանադրական թագաւորներ, ունենալով և veto-ի
իրաւունք, բայց անզինական պառլամենտը կարող է ըլ-
փաւերացնել նաև ընդհանուր նահանգապետների հաս-
տատածները։ Զօրք, նաւատորմիդ կազմակերպելու
կօղմից, տնտեսական և սոցիալական քաղաքակա-
նութեան կողմից զրանք համարեա անկախ են։ Հիւ-
սիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները կոր-
ցնելուց յետոյ անզինական պետական մարզիկ մեծ
զգուշութեամբ են վերաբերում դէպի գաղութները.
աշխատում են պահպանել և զարգացնել բարոյա-
կան կապը նրանց հետ, խօս առև խիստ ընդհա-
րութիւններից։



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էջ	Մոռշ	Մակած է	պէտք է կարդալ
VIII	12 պ.	մինհարութիւնները	մինհարութիւնները
"	13 "	ամեն	ամենը
XII	13 "	աչքեր	աչքերը
"	14 ն.	ականջներ	ականջները
XVIII	14 ն.	Թոյլտրուած է	Թոյլտրուած է
XXVI	7-8 պ.	ուսումարանները	ուսումարանները
6	7 "	վերջացել	վերջացրել
13	12 ն	չուննալով	չուննալով
15	6 ն	հանդիսաւր	հանդիսաւր
16	8 ն.	պակծառով	պատճառով
21	9 ն	լորդներից	լորդների
"	4 "	զումարձ	զումարձ
22	6 ն	տօրեր	տօրիներ
32	6 ն	արտկարզ	արտակարզ
34	11 ն	անզիանցիք	անզիանցիք
"	7 "	Corpus	Corpus
36	13 պ.	քաղացիների	քաղաքացիների
37	2 "	ապհովութիւնն	ապհովութիւնն
"	13 "	Կարպուսի	Կորպուսի
39	8 ն.	Կորպուսարի	Կորպուսի
43	3 պ.	որվինտե	որվինտե
48	3-2 ն.	գոէն	գոնէ
54	8 պ.	զանազն	զանազն
63	13 ն.	նկատմար	նկատմար
75	7 պ.	սենակ	սենեակ
"	9 ն.	շարուծ	շարուած
76	6 "	ընտրութիւննը	ընտրութիւննը
78	12 պ.	օգնակալ	օգնական
103	11 "	Դէկիտ	Դէկիտ





